

Հայաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԵԱՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՌՈՒԵԱՏՐ

ՀԱՅԿ 1968 ՅՈՒՆԻՍԿՈ

ԹԻԻ

پاكين
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد اربين كارنيك قزائجيا

•

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

•

բ Ա գ ի ն
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ
 ԵՆ ԱՐՈՒԾԱԾԻ

ՀԱՐՔԵ ԽՄԱԳԻՐ
 Կ. ՍԱՍՈՒՆԻ
 ԽՄԱԳԻՐ
 Գ. ՍՆԱԳԵԱՆ

ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ
 ԱՆՊԱՄՆԵՐ
 Յ. ԳԵՂԱՐԴ
 Տ. ՈՍԿՈՒՆԻ
 Բ. ՓԱՓԱՔԵԱՆ
 Ն. ՊԱՐԹԵՆԵԱՆ
 Ժ. ԱԹՔԱՐԵԱՆ

ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԵՆ
 † ԵԳ. ՊՅՑԱՅԵԱՆ

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- Կ. ՍԱՍՈՒՆԻ
- Ս. ՍԱՆԻՆԵԱՆ
- Ա. ԱՄՈՒՐԵԱՆ
- Յ. ԳԵՂԱՐԴ
- Ժ. ՅԱԿՈՒԵԱՆ
- Ա. ՀԱՅԱՔ
- Ա. ԵՐԿԱԹ
- Ա. ՏԻԳՐԱՆԵԱՆ
- Գ. ԹՈՐՈՍԵԱՆ
- Մ. ԹԷՕԼԷՕԼԵԱՆ
- Լ. ՄԿՐՏՉԵԱՆ
- Բ. Փ.
- Յ. Գ.
- Պ. Ս.
-
- ՆՇՄԱՐՆԵՐ
- ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Խմբագրախումբի հասցե

G. SASSOUNI
 Rue Sélim Boustani,
 Beyrouth-Liban

Հեռագրային քի. 296898

Բազմը

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

Է. ՅԱՐԻ, ԹԻԻ 3

ՅՈՒՆԻՍԿՈՒ 1966

ՊԵՏԵՐԲՈՐԳ

4. ԱՍՍՈՒՆԻ

ՌՈՒԲԷՆ ԴԱՐԲԻՆԵԱՆ

Հ. Յ. Դաշնակցութիւնը մեծ կարուստ մը կ'արձանագրէ Ռուբեն Դարբինեանի մահով :

Բեղմնաւոր եւ վաւերական մտաւարակամն է, որ կը բաժնուի մեզմէն, անդարմանելի բաց մը ձգելով ինացական-գրական կայուածից մէջ :

Անդարմանելի բառը բերես ոմանց շատ շեշտուած թուի, սակայն այն սերունդը, որ Դարբինեանը կը ներկայացնէր, զարգացած բազմազանի սերունդն էր : Դարբինեանը այդ բնտիրներէն մէկն էր, որ իր արտաբանական, բնկերարանական եւ գրական հիմնական կրթութիւն տալու եւ իր անընդհատ ուսումնասիրութիւններով՝ բազմաշահուտ գրական դէմքը դարձաւ մեր ինացական իրականութեան մէջ :

Ռ. Դարբինեան (Արտաշէս Չիլիկիիրեան), ուսանող եղած շրջանին, մասնակից եղաւ 1906-ի Դաշնակցական երիտասարդական շարժումին, որ կը պահանջէր բնկերվարական ամբողջական ծրագրի մը գործադրութիւնը կովկասի մէջ, իսկ թրքահայ ազատագրական շարժումի դիկավորութիւնը թողուլ Արեւմտահայ կազմակերպութեան :

1400

Ռ. Գարրինեան, իբրև իրապաշտ ընկերացան, համաձայն չէր այն ծայրայեղներուն, որոնք չգոհացան կուսակցութեան առժամեայ ծրագրէն, որ վաւերացուեցաւ 1907-ին կայացած Հ. Յ. Դաշնակցութեան 4-րդ Ընդհ. ժողովին կողմէ: Այդ երկասարդական շարժումի ընթացքին՝ խմբակ մը բաժնուեցաւ Հ. Յ. Դաշնակցութեան եւ միացաւ Սոցիալ Թեաւիստական կուսակցութեան: Այս արարքը կոչուեցաւ «Անջատական շարժում» եւ ստեղծեալն անվանուեցաւ այդ խմբակով:

Ռուսիոյ Գարրինեան մնաց կուսակցական եւ շարունակեց իր աշխատանքները Հ. Յ. Դաշնակցութեան ուսանողական միութեան շարքերուն մէջ:

1908-էն սկսեալ ուսական յեղափոխութիւնը տեղի տուած էր արդէն եւ ցարակամ բռնակալութիւնը հալածանքի սկսած էր յեղափոխական կազմակերպութիւններու դէմ, աւելի շնչուած ձեւով՝ Հ. Յ. Դաշնակցութեան դէմ: 1909-ին կը սկսէր Դաշնակցութեան դէմ բացուած պատմական դատը եւ հարիւրաւոր գործիչներ բանտերը կը լեցուէին: Ռ. Գարրինեան 1909-ի Աշնան կ'անցնէր Փոլիս եւ այդ միջավայրին մէջն էր, որ այժառու դեր մը կը ստանձնէր:

Ռ. Գարրինեան 1909-ի Աշնան սկսեալ կը մտնէր «Ազատամարտ»ի խմբագրական կազմին մէջ եւ շրջանակ կ'ունենար Հ. Յ. Դաշնակցութեան նորակազմ ուսանողական միութիւնը:

«Ազատամարտ»ը հրապարակագրական եւ գրական մեծ երևոյթ մըն էր այդ բաւականներում: Թերթին շուրջ համախմբուած էր գրական ու մտաւորական նոր ընտրանին, որ արտատեսիմունէն կը վերագտնուէր Փոլիս, օգտուելով սահմանադրական տգաւառութենէն:

Խանդավառ այդ օրերուն՝ մթնոլորտը յագեցած էր բազմաթիւ հետեւորներով, գրական անուանի դէմքերով, հրապարակագրական կոյրներով, նոր լոյս տեսնող թերթերով: Ու այդ մթնոլորտին մէջն էր որ Ռ. Գարրինեան նկատի առնուելիք իր առաջին հայերը պիտի տանէր:

Այդ օրերուն, իր առաջին կոյրը ունեցաւ Սապահ-Կիւլեանի դէմ, անոր ջրած հրապարակային մէկ դատախօսութեան անքիւ: Նիւթն էր, - փրիխտովայ Գանթի «Լա րեզոն փիւր է լա րեզոն փրաթիթը»... Այդ օրերուն, այդ պիտի նիւթ մը մարտելու ժողովարդ չունէր Սապահ-Կիւլեան իբրև ունկնդիր:

Ռ. Գարրինեանի երկու յոդուածները ցնցող տպւորութիւն բռնաւցին: Ան հերքեց Սապահ-Կիւլեանի սխալ ըմբռնութիւնները եւ իր հիմնուոր բացատրութիւնները տուաւ: Այդ բաւականներէն սկսեալ Ռ. Գարրինեան դաշնակցական ուսանողութեան այլին զարգաւ ներսում մտաւորականը, որմէ կարելի էր օգտուիլ ինքնագարգացման համար:

Ըսեմք նաեւ, թէ Ռ. Գարրինեան ոչ միայն ուսական իրաւարանական համալսարանը աւարտած էր, այլև հետեւած էր Գերմանիայ ընկերաբանական եւ փրիխտովայական դատընթացներուն եւ կը տիրապետէր գերմաներէն եւ ռուսերէն լեզուներուն:

Իր այժառու կոյրները շարունակուեցան «Ազատամարտ»ի էջերէն ընդդէմ Մուշեղ Եպիսկոպոսին, Յ. Շահրիկեանին եւ Մ. Վարանդեանին՝ ուշագրաւ յօդուածաշարքերով, որոնց ընթացքին ոչ միայն գիտական եւ ընկերաբանական ունեղութիւններ կը մատնանշէր, այլև այդ առիթներով իր գիտական եւ իրապաշտական անկողնակները կը վարձաբաժնէր:

Digitised by A.R.A.R. @ 154-2900



ԹՈՒԹԵՆ ԳԱՐԲԻՆՅԱՆ

1910-1911-ին, Թ. Գարբինյանը ընկերաբան-գիտնականի հմայքը ունէր եւ իր հրատարակագրական յօդուածներով ուշագրաւ դէմք մը դարձած էր:

Թ. Գարբինյանը գերազանցապէս ընկերաբանի եւ ֆազաւական մտածողութեամբ իրապաշտ ըմբռնման ներկայացուցիչը համոզուածաբար մեր կուսակցական ըմտրանիին մէջ: Եթէ անոր կը պահուէր հայոց հին ու նոր պատմութեան հմտութիւնը, սակայն անոր հոգեկան աշխարհը բաց էր հայ գրականութեան հորիզոնին վրայ: Գիտէր արժեւորել գրական ստեղծագործութիւն մը: Այդ օրերուն գրական ուշագրաւ ֆննադատական յօդուածներ ստորագրեց «Ազատամարտ»ի էջերուն մէջ:

Հրատարակագրական տեւական իր էլոյթները, վերջին 46 տարիներ

20814-Ա7

րուն ընթացքին, բխեցան ամենօրեայ պարտականութիւններէն եւ կազմեցին հրապարակագրի մեծ անուն մը: Եթէ Դարբինեանը մնար իր հումիմ մէջ, ան հայ իմացական գրականութեան պիտի տար շատ ուշագրաւ ուսումնասիրութիւններ եւ գեղարուեստի պատմութեան մէջ պիտի ըլլար այժառու գրական քննադատ մը:

Իր մահուան առթիւ գրի տառուազ այս բանի մը նշմարները նպատակ չունին իր ամբողջ վաստակը կշիռի գարնելու, այլ շեշտելու, թէ Դարբինեանը երկուստարգութեան շրջանէն մինչեւ իր մահը եղաւ մտաւարական գործիչ մը, ստեղծագործեց իմացական, ընկերաքանական եւ հրապարակագրական կալուածին մէջ, միշտ գործօն, միշտ պաշարով լեցուն եւ միշտ գրիչին նուիրուած:

Թ. Դարբինեանը՝ մտաւորական գործիչի այնքան գնահատուած իր անունը շահեցաւ ժխտի գրչի եւ մտքի ուժով: Լ. Յ. Դաշնակցութեան բնմին վրայ ան ապաւինեցաւ իր գրչին: Վերին մարմիններուն կամ Կ. Կոմիտեներուն անդամ չեղաւ, գործիչ չդարձաւ շրջանէ-շրջան եւ այդ դիրքերուն շնորհիւ հմայք մը չունեցաւ զինքը պարտադրող: Այլ մնաց գրիչի մարտը, բազաբական, ընկերաքանական եւ ազգային կեանքը վերաւժող մտաւորականը: Ու այս հանգամանքները զինքը դարձուցին այն այժառու դէմքը, որ 1909-էն մինչեւ իր վախճանը բարձունքէ բարձունք անցաւ, առանց ընկրկելու, առանց այլազան դեգերումներ նախնայաւ:

Ու Լ. Յ. Դաշնակցութիւնը լրիւ գնահատեց իր այդ նուիրեալ գործիչը եւ գայն նկատեց անպաշտօն անդամը վերին մարմիններուն եւ անոր կարծիքը միշտ նկատի առնուեցաւ:

«Ազատամարտ»ի խմբագրութեան պատասխանատու անդամի հանգամանքէն զատ, խմբագրեց «Ազատամարտ» շաբաթաթերթը: Պերլինի մէջ՝ «Մեթուց» պարբերականը: Բագուի մէջ՝ «Գործ» ամսագիրը: Ու ամենէն հոգի, 1922-ին, անցաւ Ամերիկա, ու հոն խմբագրեց «Հայրենիք» ամսագիրը եւ «Հայրենիք» օրաթերթը:

Այս արագ առգանցումը՝ վաթսուն տարուան անընդմէջ մտաւորական աշխատանքի մը բեղուն պատկերն է:

«Հայրենիք» ամսագիրը միայն թաւ է պատմական մտաւորական գեղեցիկ մը փառանքը արժանը դառնալու:

Ու Թ. Դարբինեան այդ փառքին արժանի մեծ մտաւորականն էր:

Կ. Ս.



ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ

◆◆◆◆ **CHEQUE** ◆◆◆◆

Անշուշտ, դուք ամէնքդ գիտէք, թէ ինչ է մի շէք: Եօտքը այն շէքի մասին է, որ տալիս են կառավարութիւնները, դրամատները և այն մասնաւոր անձինք, որոնք դրամատանը դրամ ունեն մի շէք ստորագրելու համար: Պարզ է, որ իմ այդ ծանօթութիւններն աւելորդ են, որովհետեւ դուք գիտէք, թէ ինչ է մի շէք: Այդ ես էի, որ չգիտէի ևւ հենց այդ պատճառով էլ, մի՛ օր ինձ հետ այնպիսի դէպքեր պատահեցին, որ կարծես այ՛լ ամէնը ես նախապէս շարժանկարում էի խաղացել ևւ այ՛ժմ կանգնել իմ խաղն էի գիտում:

Լսեցէք պատմեմ:

1.

Ամէն ինչի պատճառը շէքի հանդէպ իմ ունեցած անհեթեթ հիացումն էր: Պանիսիկ դրամի հանդէպ հիացում չունէի, բայց շէքի հանդէպ ունէի: Այդ, թերեւս, այն պատճառով, որ դրամի վրայ տիրոջ անունը չկար, իսկ շէքի վրայ կար: Դրամն ընդհանուր էր, իսկ

շէքը մասնաւոր: Յետոյ էլ, ես, երբեմն, դրամ ունեցել էի, իսկ շէք ամենեւին չէի ունեցել:

Այդ էլ ասեմ, որ ես ելեւմտական գիտութիւնից կորեկի չափ անգամ բան չհասկանալով, ինքս ինձ այդ ասպարէզի մեծ մասնադէտ էի համարում: Իմ «գիտական» կարծիքով մի շէք աւելի շատ բան էր պարունակում, քան նոյն գումարի կանխիկ դրամը: Ես դրամը միայն դրամ էի համարում, իսկ շէքը եււ դրամ եււ հեղինակութիւն: Եււ հենց այդ պատճառով էլ, ես կարծում էի, որ ամերիկեան դրամատները խիստ մրցման մէջ են միմեանց հետ շատ շէք ստրբարելու համար: Տար այդ դրամատներից մէկին հարիւր տուրս յանձնիր, հէջ մի բուն է քո արածը, բայց սաք տաս տուրս մի շէք յանձնիր, այդ արդէն դործ է ևւ պատիւ այդ դրամատան համար:

Յիմարութիւն:

Ելեւմտական իմ «գիտական» այդ «յիմարական» օրերին էր, որ ես ունեցայ իմ առաջին շէքը՝ քսանըչորս տուրս ևւ քառասունըրեք սենթ մի դրամ:

րով: Այդ գործարկութեան իմ տուժին նպաստն էր:

Չէ՞քը կառավարական էր եւ կանաչ-կապտուսուն գոյն ունէր: Նրա վրայ պարզ տառերով դրուած էր իմ անունն եւ ազգանունը եւ ստորագրուած էր մի ինչ-որ նախարարի կողմից:

Նախարարի այդ ստորագրութիւնը մեծ համակրանք ստեղծեց իմ մէջ նրա հանդէպ:

« Բա՛ւ, ի՛նչ վստահութիւն իմ հանդէպ, - հպարտութեամբ մտածեցի ես, - այդ բարի մարդը կարող էր կարգադրել, որ ինձ կանխիկ դրամ վճարէին, բայց տե՛ս, վերջրել եւ չէք է ուղարկել:»

Չէ՞քը բազմաթիւ ծակտիներ ունէր, որոնք քառանկիւն էին եւ երկարաւուն: Քուր կային, որոնք թւում էր, թէ շըր-ըրած էին գրուած, եւ դրանց արանքներում հաստարութեան, բաժանման եւ անվերջութեան նշաններ կային դրուած: Բառեր էլ կային, որոնք կիսատ էին գրուած: Եւ այդ բոլորը, իրենց անհասկանելիութեամբ, էլ աւելի էին մեծացրնում այդ չէ՞քը իմ աչքին: Եւ իմ Եւրոպական ելեւմտական հասկացողութեամբ ինձ ասնում կապում էին այս երկրի միջինաստիակներին: Չէ՞ որ իմ անունը կար այդ չէ՞քի վրայ:

- Hello! Wall Street!

Մտքում եմ չծիծաղել ինձ վրայ, այլ փորձել հասկանալ ինձ:

2.

Չէ՞քս ստանալու երկրորդ օրը, երբ տանտիրուհին սենեակիս շաբաթականը պահանջեց, ես տարայ այն յանձնելու քաղաքի հարկաւոր դրամատներից այն մէկին, որին մտքումս աւելի շատ էի վստահում: Անշուշտ, ես չէի կարող իմ չէ՞քը ամէն մի պատահած դրամատան վստահել:

Դրամատունը, որ ես սիրել էի, գտնուում էր քաղաքի կենտրոնական փո-

ղոցներից մէկի վրայ եւ բռնում էր նորակառոյց ու բազմաթիւ մի չէնքի վարի յարկը: Դրամատան կենտրոնական փողոցի վրայի պատը, համարեա՛ թէ, միաձոյլ ու թէյազոյն մի ապակուց էր: Այն սկսում էր մայթից մօտ մէկ մեթր բարձրութիւնից եւ ձգւում էր այդ պատի մէկ անկիւնից միւսը: Երբ ես կանգնում էի մայթի վրայ եւ այդ ապակու միջով ներսն էի նայում, ապակու գոյրնից ամբողջ ներքը ոսկեգոյն էր երեւում: Այդ մի հսկայական սրահ էր, ուր աշխատում էին հարիւրից աւելի երիտասարդ ու զեղեցիկ աղջիկներ եւ տղամարդիկ: Սրահը սեւ ու ցածր ցանկապատերով (ձեւի համար միայն) բաժանուած երեք մասի, կենտրոնում, ամբողջ դահլիճի երկայնքով, ստեղծելով երկար ու ազատ տարածութիւն, Այդտեղ յաճախորդների համար բազմաթիւ բազմոցներ էին դրուած, որոնց առջեւում զըրւած ծանր սեղանները բեռնատարուած էին լինում ծաղիկներով, ջրամաններով, ծրխախտի տուփերով (ծիւր ինչքան սք կ'ուզես) եւ հրուշակով լեցուն պահկներով:

Ամանային մի տաք օր էր: Հանրակառքի քսան սենթը խնայելու համար, ես վճռեցի քայլելով դնալ իմ սիրած դրամատունը:

Փայլում էի եւ երեւակայում, թէ ինչպէս հիմա դրամատունը զով է: Ես ներս կը մտնեմ, թէ չէ, մէկն ընդառաջ կը դայ եւ կը հարցնի.

« Ի՞նչով կարող եմ օգնել պարոնին:»

« Ես ուզում եմ պարոն կառավարիչին տեսնել, - կ'ասեմ ես:

« Կառավարիչի՞ն, Համեցէ՛ք: Ես ներս կը մտնեմ եւ կ'ասեմ.

« Պարոն կառավարիչ, մէք այս հսկայ քաղաքի հարկաւոր դրամատներից ես ձերն ընտրեցի իմ չէ՞քը յանձնելու համար: Եւ վստահեցնում եմ ձեզ, որ այսուհետեւ անգործութեան նպաստի իմ բոլոր չէ՞քերը ձեզ եմ յանձնելու: Ձեր դրամատան հիմնադրամի մեծու-

թիւնը, ձեր գրամատան մաքուր անունը, ձեր միջազգային գործառնութիւնները, խոշոր գրական կնիքն ինձ վստահելու, որ ես մի լուրջ ու պատուաւոր հաստատութեան հետ դարձ ունեմ»:

«Ոտքի վրայ մի կեցէք, Էթէ չէք շտապում, համեցէք նստեցէք», - ձեռքի քաղաքավար շարժումով կառավարելը ինձ պիտի ցոյց տար արդիական մի հանդիսանալու պահանջը, երեւակայում էի ես:

Երբ ես նստէի, կառավարելը սեղանի վրայից պիտի վերցնէր սեւ փայտից պատրաստուած մի սուփ, եւ մօտենալով ինձ, պիտի բացէր կափարիչը:

«Միզա՞ր»:

Ու թէեւ սիզար չեմ ծխում, բայց քաղաքավարութեան համար մէկը պիտի վերցնէի:

«Ենորհակալութիւն»:

«Թերեւս եւ մի դաւաթ սո՞ւրճ»:

«Դուք ինձ երես էք տալիս, պարոն կառավարելը», - պիտի ասէի ես, որը հաւատար էր համաձայնութեան:

3.

Իմ ենթագործիւնը ճիշդ էր: Դրամատանը հանելի զով էր: Երբ ներս մըտայ, այդ զովը ցանկալիորէն պարուրեց ինձ եւ վստահութիւն ներշնչեց:

«Ետպիւր կարիք չկայ: Ժամանակ չառ կայ: Նստեմ այդ քաղմոցներից մէկի վրայ, պառ ջուր խմեմ, մի գլանակ ծըխեմ եւ յետոյ զնամ կառավարելին տեսնելու», - մտածեցի ես եւ քայլեցի դէպի մի քաղմոց:

- Հէ՛յ, ս՞ուր ես գնում, - լսեցի մի կոպիտ ձայն:

Ու թէեւ չգիտէի, որ խօսքը ինձ է վերաբերում, բայց բնազդաբար կանգնեցի եւ դէպի ձախ նայեցի, որտեղից սնդանների արանքով, դէպի ինձ էր առաջանում հակայ մէկը: Նա մութ գորշադոյն եւ սպիտակ կոճակներով, գինւորական տարազի հազուադէպ էր կրում, որի թեւոցները եղբերին, բաճկոնի փէ-

չերին ու տաբաթի կողքերին սպիտակ երիզներ էին կարուած: Նրա դիւարիկը նորից գինւորական տարազի էր եւ երկրորդ: Այդ բոլորի վրայ նա իր ուսերին կրում էր շերտիանման ու ճոխ ծոփաւոր սպիտակ ուսադիրներ, ճիշդ սրոնց նմանը կրում էն թագաւորները եւ մարաշախտները:

Սակայն սոսկալին նրա դէմքն էր: Նախամարդկային: Կարճ ու լայն: Յցուն այտերով, կարճ ու լայն ծնօտով: Նրա աչքերը փոքր էին եւ այնքան խոր ընկած, որ թուում էր, թէ կպել էին նրա գանգի յետեւի պատին: Մինչ այդ ես չգիտէի, որ մեր դարում դեռ այդպիսի մարդիկ կան: Եւ եթէ կան էլ, նրանք կարող են հնչուններից բառ կազմել եւ խօսել:

Նա բոլորեց ինձ եւ կանգնեց սուրբեւ:

- Ի՞նչ էք անում այտեղ, - հարցրեց նա, քամաւարանքով ժպտալով:

- Տեսնում էք, դրամատուն եմ երկել, - վարեց վեր նայելով պատասխանեցի ես:

Նա ստից ցլուխ չափեց ինձ եւ հարցրեց հեղձանքով.

- Միթէ՞...

- Հաստատ, - պատասխանեցի:

- Ինչո՞ւ համար, - շարունակեց նա ծաղրել ինձ:

- Դրամատան իմ գործերով, - ասացի:

- You don't say!, - նորից ծաղրեց նա ինձ:

- Ո՛հ, պարոն, դուք ինձ ձանձրացրե՞նում էք, - ասացի եւ ուղեցի անցնել նրա կողքով:

- Հէ՛յ, - կանչեց նա եւ նոյն վայրկեանին զգացի, թէ ինչպէս ուսիս սուկորները ճրճոսացին նրա մատներէ տակ:

- Թողէք ինձ, - ասացի:

- Ո՛ւր էք գնում, - ուսս թողնելով, նորից հարցրեց նա:

- Կառավարելի մօտ:

Հեղձական ժպտը նրա դէմքից անյայտացու եւ նա ձեռքի երեսով սրբեց

իր ծանր ծնօտի մէկ ժառը: Եւտոյ նա շրջուեց եւ ձեռքով ցոյց տուեց սրահի վերջին աղ ունկիւնում նստած մի աղջկան:

- Գնացէ՛ք նրա մօտ:

Ճիշտապէս հագուստով այդ վայրենին, երեւի ընտանիք ունի եւ երեխաներ: Եթէ ես կուսովարիչին զանգատուեմ նրա վրայ, գործից դուրս կ'անի, երեխաները սոված կը մնան, մեղք են... Պէտք չէ՛ս, - վճռեցի ես, քայլելով դէպի անկիւնի օրիորդը:

Օրիորդը, որ այդ ժամանակ ինչ որ բան էր մեքենադրում, ինձ տեսնելով թողեց այն.

- Ի՞նչ կարող եմ անել ձեզ համար, պարոն...

- Ես ուզում եմ պարոն կառավարիչին տեսնել, - ասացի:

- Կարո՞ղ եմ գիտնալ, թէ ինչու համար:

- Դրամատան իմ դործերի, - ասացի:

- Կառավարիչն այժմ զբաղուած է, բայց մէկ վայրկեան, - ասաց եւ վերցրեց հեռախօսի լսափողը:

« Հայտ, - մի տեղից, չիմացայ որտեղից լսուեց մի պաղ եւ չոր ձայն:

- Պարոն Հարթնըրը, այստեղ մէկը ձեզ է ուզում տեսնել...

« Ինչո՞ւ համար, - խտացաւ ձայնը:

- Ասում է դրամատան իր դործերի, - ասաց աղջիկը եւ ինձ նայեց:

«- Ուղարկեցէ՛ք...»:

- Գնացէ՛ք: Պարոն կառավարիչն այժմ ձեզ է սպասում, - ասաց օրիորդը, ժպտաց եւ ցոյց տուեց դուռը:

Սենեակը, ուր ես մտայ, ջիւղ մաքրութիւն ունէր: Վերի, դիմացի անկիւնում, երկու պատերի արանքում դրուած էր մի մեծ սեղան, որի վրայ ուստասում էին լուսամտից ներս ընկած արեւի ճառագայթները: Դրանը կից պատի տակ, սեղանին մօտիկ դրուած մի քանի արդէ ուճի հանգստաւէտ զահաւորակներից մէկի վրայ նստած էր մէկը, իսկ սեղանի

առջեւում մի ուրիշը, որը կառավարիչն էր:

Ճիշդն ասած, եթէ ես գիտեմայի, որ այս դրամատան կառավարիչն այդպիսի մէկն էր, ես ուրիշ դրամատուն կը գնայի: Նրա դէմքը մի ցլաշան դէմքի կատարեալ պատճէնն էր: Թշտն ու վարի շրթունքը կախ: Աչքերն անզոյն ու շար: Ինքն էլ թոււում էր, չէր նստել իր բազկաթոռին, այլ հպել էր նրան: Նստել ու բարկացել ու զայրացել աշխարհի վրայ:

Մինչեւ այսօր էլ ես մտքով փորձում եմ արդարացնել նրան, նրա այդ անբազազավար վարմունքի համար, որ նա ցուցարեւեց իմ նկատմամբ:

«Մարդ է, - ասում եմ ինքս ինձ, - կարող է պատահել այդ օրերին նա իր կնոջը բռնել էր դանապանի հետ, կարող է պատահել, որ նրա աղջիկը (եթէ աղջիկ ունէր, անշուշտ) փախել էր վարորդի հետ, կամ էլ նրա հոմանունէիններից մէկը պատճառաւոր էր դարձել եւ խայտառակութիւն էր սպասում նրան: Կարող է պատահել, չէ՞: Անշուշտ, կարող է՞ս, - փորձում եմ արդարացնել նրան ես:

Ինչ որ է, երբ պարոն կառավարիչի գրասենեակի դռնից ներս մտայ (թող չմտնէի երբեք), շատ քաղաքավար բարեւեցի:

- Բարեւ ձեզ, պարոնայք, - ասացի: Ես այդ ասում եմ, որպէսզի ցոյց տամ, որ դուք չկարծե՛ք, թէ հետագայ անխորթութիւնների մեղքը իմն է եղել: Ոչ: Հազար անգամ, ոչ:

Իայց նա, այդ կոպիտ ու անպիտան մարդը, փոխանակ բարեւս առնելու, բարեւիս բարեւով պատասխանելու, ինձ նայեց ու մի բան մրթմրթաց քթի տակ:

Սակայն, ես ենթադրելով, որ նրանք զբաղուած լինելով իրենց խօսակցութեամբ, բարեւս չսեցին, նորից շատ քաղաքավար ու յարգալից բարեւեցի.

- Բարեւ ձեզ, ճէնթըլմէններ...

- What do you want?,- վրաս յարձակուելու եւ խածնելու պատրաստ արտասայտութեամբ, երեսիս նայելով, փնչաց կառավարիչը:

«Հիմա, զո այդ կոպտութիւնը սիրալիրութեան կը փոխուի, երբ դու իմ չէ՛քը տեսնես», — մտածեցի ես եւ քայլեցի դէպի նրա սեղանը:

— Պարոն կառավարիչ, — ասացի եւ գրպանիցս հանելով չէ՛քս նրան պարզեցի շատ հանդիսաւոր, — այս իմ առաջին չէ՛քն է, որ բերել եմ ձեզ յանձնելու: Ուզում եմ վստահեցնել ձեզ, որ սրան հետեւելու են նաեւ ուրիշները: Ես ինձ շատ կապուած եմ դժուր ձեր այդ անւանի հաստատութեանը:

Ափերն իրար միացրած, ինչպէս անուր եմ եպիսկոպոսներն աղօթքի ժամանակ, նազ երեւի զարմանքից կաշկանդուած, ինձ լսեց համբուսթեամբ եւ յետոյ ձեռքը պարզեց ու վերցրեց չէ՛քը: Վերցրեց նայեց վրան եւ անմիջապէս նետեց սեղանին: Յետոյ արիւրով ծածկեց դէմքը եւ այնպիսի ձայնով հանեց, որ ես շնորհակալ, ծիծաղում էր թէ հեկեկում:

— Oh, no! Oh, no!... — մի քանի անգամ ասաց նա, գլուխն օրօրելով:

«Տեսա՞ր, — մտածեցի ես, — ես այդպէս էլ դիտէի, որ իմ չէ՛քը նրա վրայ զգալացունց տպաւորութիւն է թողնելու: Ի՛նչ, հիմա զզջայ զո կոպտութեան չամար, անպիտան ժարդ: Զլջայ եւ ինձնից ներողութիւն խնդրի: Ասենք, ես արդէն ներում եմ քեզ: Մարդ ես, սխալեցիք: Մարդը սխալական է»:

Մինչ կառավարիչը գեռ շարունակում էր դէմքը արհրով ծածկուած պահել եւ մասնների արանքից «Oh, no! Oh, no!» ասել, միւս մարդը ելաւ տեղից, վերցրեց չէ՛քս, նայեց եւ սկսեց ծիծաղել:

Կառավարիչը ձեռքերը հեռացրեց դէմքից եւ կործանուած հայեացքով քարեկամին նայելով, հազիւ-հազ կարողացաւ հարցնել:

— Տեսա՞ր...

Երկրորդ պարոնը շարունակելով ծիծաղել, չէ՛քս նետեց սեղանին եւ ասաց կառավարիչին:

— Մամ, քիչ առաջ դու դրամատան դէշ գործերի եւ բաժնեթղթերի գների անկման մասին էիք խօսում ու դանդաղ-

ւում: Հիմա ցնծայ, որովհետեւ օգնութիւնը հասաւ...

«Վնչո՞ւ ինձ չեն առաջարկում նստել: Ո՞ւր է սիգարը, որ ես չեմ ծխում, բայց միայն քաղաքավարութիւնից ելնելով է, որ սլոտի վերցնեմ: Ո՞ւր է այն սիրուհի աղջկայ ձեռքով մատուցուող մի դաւաճ սուրճը»:

— Եկաւ հասաւ... — ասաց կառավարիչը եւ ինձ թուաց, որ նրա ձայնը մի հաստ պտտի յետեւից լսուեց:

«Այդ շատ յուզուելուց է՞», — մտածեցի ես եւ ասացի:

— Պարոն կառավարիչ, մէկ շաբաթ յետոյ, երկրորդ չէ՛քս կը բերեմ:

Կառավարիչը կարճ ու լայն ծնօալ սկսեց ցնցուել: Նա բերանը բացեց մի բան ասելու համար, բայց չկարողացաւ:

Երկրորդ պարոնը թողեց ծիծաղը եւ լրջացաւ: Նա սեղանի վրայից վերցրեց չէ՛քս, ինձ տուեց եւ անորով ժպտով ասաց.

— Գնացէ՛ք այստեղից...

— Ինչո՞ւ, — զարմացայ ես:

— Get out of here! — յանկարծ վառօղի տակառի պէս պայթեց կառավարիչը:

— Բայց, պարոն կառավարիչ... — ուղեցի բացատրութիւն պահանջել ես, երբ նա մի շար շարժումով ձեռքը տարաւ սեղանի տակը, եւ ես լռեցի:

Անմիջապէս լսուեց զանգի մի լուր, սուր անխորժ ձայն: Մինչ այդ ես լզիտէի, որ զանգերն էլ շար ձայն ունեն: Մինչ այդ ես լսել էի զպրոցական զանգի ձայնը, երեխայի ծիծաղի պէս ուրախ: Լսել էի եկեղեցու զանգի ձայն, միտո՛ք ու բարի: Լսել էի, սեզանատան, գործարանային, հեռախօսային զանգերի ձայները, ամէնքն էլ հրաւերող ու մի բան խոստացող: Այս մէկը ուրիշ էր: Վանող էր: Դադար չկար: Միայն էր, եւ ըզպացում էր, որ այն ստեղծում էր ո՛չ թէ մարդու ձեռքի շարժումից, այլ զալիս էր ինչ որ անհույս մեքենայի բերանից: Եւ չէր հրաւիրում, ինչպէս միւսները, այլ ճշում էր շարագուշակ եւ կոպիտ միջնորդութիւն պահանջում:

Երկրորդ պարոնն ինձ էր նայում կարեկցութեամբ, երբ սենեակի դուռը բացուեց թափով և շեմքին երեւացին երկու հողի ատրճանակները ձեռքներին և մէկ էլ թագաւորի հագուստով հսկան: Զանգի ձայնը կտրուեց:

— Պարոն Հարթը՛ր... — աղաղակեցին նրանք միարեւմտեան և նրա հրամանով աշխարհի բոլոր մարդկանց սպանելու պատրաստակամութիւն ցուցաբերեցին:

Կառավարիչը անմիջապէս հրաման շտուկեց: Նա ձեռքը պարզեց, սեղանի վրայ դրուած սեւ փայտից պատրաստուած մի տուփից մի երկար սիւլար հանեց (ես ճիշդ էի երեւակայել) և փոխանակ ինձ առաջարկելու, բնքը վառեց, ծուխը փչեց օդի մէջ, պալան-պալան, և ինձ վրայ ցոյց տալով, հենց այնպէս, սասց.

— Graber, throw him out!

Գրաբըրը թագաւորի հագուստով հսկան էր: Ընդուն սասած, այդ հսկայ ծարդուն այդ կարճ անունն այնքան էլ չէր բռնում: Եթէ նա անուն պիտի ունենար, աւելի սազական կը լինէր, եթէ նա կոչուէր՝ Գուկումումունունուրուրու և կամ նման մի բան: Սակայն նրա անունը Գրաբըր էր և ևս փոխել չէի կարող:

— Yes, sir!... — դորիւս կապիկի նման մոնյաց թագաւորի հագուստով հսկան, և ես տեսայ, թէ ինչպէս ինձ դուրս նետելու հաճոյքից թուքը վազեց նրա բերանից և նա ձեռքերը իրար քսեց, ինչպէս անում են դինկոնները, ահա-ահա խմելու բաւականութիւնից երջանիկ:

— Ես ինքս կը դնամ, — սասցի և ուղեցի շարժուել դէպի դուռը:

— No, sir!... — ծիծաղեց թագաւորի հագուստով հսկան, որի անունը պէտք էր, որ Գուկումումունունուրուրու լինէր և յառաջացաւ դէպի ինձ:

Ես կողքի քաշուեցի խոստփելու համար նրանից: Բայց նա նոյնպէս կողքի քաշուեց, թեւերը բացեց և ծնկերը ծալեց, որպէսզի ես չկարողանամ անցնել նրա թեւերի տակից:

Թագաւորի նրա հագուստը, նրա ծոփաւոր ուսադիրները, նրա կիսաբաց մեծ բերանը (որից հոսում էր թուքը), նրա ինձ վիրաւորելու անասնական ժպիտը, զգուելի էր ու վիրաւորական: Ես չէի ուզում, որ նա դիպչէր ինձ: Ենթադրելով, որ կառավարիչը մարդկային գունդ մէկ տոկոսանոց հողի ունի, ես շրջուեցի դէպի նրան, խնդրելու համար, որ նա յետ վերջնի ինձ բռնի դուրս անելու հրամանը, և սխալուելով մէջքս հսկայի կողմը դարձրի: Ասում եմ, սը-խալուեցի, որովհետեւ դեռ բերանս չբացած, հսկան խլեց ձեռքերս, ոլորեց մէջքս վրայ և ինձ այնպէս դարձրեց դէպի դուռը, ինչպէս փոթրիկ մի ազնիկ դարձնում է իր տիկնիկը:

Երբ նա ինձ դէպի դուռն էր հրում, լսեցի, թէ ինչպէս երկրորդ պարոնն առայ կառավարիչին:

— Սամ, դու ճիշդ լվարուեցիր այդ աղայի հետ, նա պարզամիտ մէկն էր:

— Ես ասում եմ պարզամիտներին, — լսուեց կառավարիչի ձայնը և դուռը ծածկուեց մեր յետեւից:

4.

Սրահում ամէն մարդ ոտքի էր և ամէնքն էլ լարուած ու տաղնապալից հայեացքներով կառավարիչի սենեակի դուռն էին դիտում մի բան տեսնելու համար, երբ ինձ այնտեղից դուրս բերեցին: Իմ ելքը հանդիսաւոր էր: Իմ աջ և ձախ կողքերից քայլում էին երկու ատրճանակաւորները, իսկ թագաւորի հագուստով հսկան իմ նիւար ձեռքերը միացրել էր մէջքիս վրայ և իր ծանր թաթերով այնպէս սեղմել, որ ցուրց քիչ էր մնում ճշայի:

Ինձ տեսնելով, ամբողջ քամուց բռնուած անտառի նման օրորուեց տեղում և խլիւղաց:

— Gangster... Robber...

Եւ Gangster-ը և Robber-ը ես էի: Ահարկու մի մարդ: Եւ թէեւ ես այդպի-

մի մէկը չէի, նորից շատ ամաչեցի, որ այդպիսի մէկի տեղ են ընդունում ինձ: Նայեցի քարտուղարուհու կողմը, որն ինձ թոյլ տուեց կառավարիչի ծօռ գնալ եւ այնպէս անուշ ժպտաց ինձ: Նրա դէմքը դունտտ էր այժմ եւ ծնօտը ցնցը-ւում էր:

«Ճեղճ աղջիկ, - մտածեցի, - նրան պիտի կշտամբեն կամ էլ աշխատանքից պիտի հանեն, իբր սխալի համար»:

Սակայն միւս աղջիկներն հիացմունքով էին նայում ինձ: Նրանք շատ են սիրում gangsterներին եւ gangmanներին: Նրանցից ամէն մէկի երազանքն է մի որեւէ gangsterի սիրուհի դառնալ, նս, նոյնիսկ, լսեցի, թէ ինչպէս այդ աղջիկներէց մէկը իր կողքին կանգնած մէկ ուրիշին ասաց.

- Look, Louise, this gangster is as handsome as a devil!

- Yes, he is, - հաստատեց երկրորդ աղջիկը մտածելուն:

Այդ աղջիկները համար բոլոր gangmanները դրաւիչ են անխոր, որոնց շարքում եւ ես...

Կուկումում ունեւորութեան լսեց աղջիկների խօսակցութիւնը եւ կատաղութիւնից այնպէս սեղմեց ձեռքերս, որ դաստակներին ոսկորները ճրճուային: Ես չէի կարող նրան հարուածել: Ես նրան ոչինչ չէի կարող անել: Եւ թէեւ ես նրա դէմքը չէի տեսնում, բայց զգում էի, թէ ինչպիսի հպարտութեամբ է նա իմ ձեռքերը բռնել եւ քայլում իմ յետեւից:

Դեռ դահլիճի կէսը չհասած, մեզ ընդատալ եկաւ մի ծերունի մարդ, դաւաղանը հրացանի պէս ուսին դրած: Ես չէի կարծում, որ նա ուզում է ինձ հարուածել, բայց դաւաղանը բարձրացրեց գլխին իջեցնելու համար: Ես արագ կողքի քայուեցի: Մերունու դաւաղանը ասանց ցաւ պատճառելու իջաւ ձախ ուսին եւ միեւնոյն ժամանակ տիրոջ ձեռքից գուրս պրծնելով թրիկաց յատակին: Մոռանալով, որ ձեռքերս բռնուած են, ես թեքուեցի, որ ծերունու դաւաղանը վերցնեմ, որ էլ չհարուածի, բայց չըսկան ինձ առաջ հրեց եւ ես ընկայ ծնկե-

րիս: Ամէնքն ինձ էին նայում, երբ ծերունին սկսեց աղաղակել:

- Oh boy! Ես gangsterին հարուածեցի՛... Հօ տեսա՞ք, որ ես gangsterին այնպէս հարուածեցի, որ նա վար ընկաւ...

- Bravo, - բացազանչեց մէկը, դընահատելով ծերունու քաղութիւնը:

- Shut up!, - լսուեց մի տիրակաւն ձայն եւ դահլիճում լուռութիւն տիրեց:

Ծ.

Դրամատուն մուտքի առջեւ մի մեծ բազմութիւն էր ինձ սպասում: Իսկ մարդիկ դեռ գալիս էին ու գալիս: Ոստիկանները սուրբ էր, աղմուկ ու իրարանցում: Դեռ դրան շեմքից հսկան ձեռքերս բաց թողեց եւ ինձ հրեց: Նրա հրելու թափից ես վազեցի, բայց մի ոստիկան ինձ բռնեց:

- Ո՛ւր ես փախում:

Ես սպասում էի, որ թապաւորի հազուատով հսկան կը բացատրի իրողութիւնը, բայց նա արագ ներս գնաց եւ հարցը բարդացաւ:

- Ես... Ես..., - ցատումից շնչապառ ուզեցի բացատրութիւն տալ ինքս, բայց այդ ժամանակ մի բան ծշնդաց եւ իմ աջ դաստակս շղթայուած անսայ մի այլ ոստիկանի ձախ դաստակին: Այդ մի ակնթարթում կատարուեց եւ ոստիկանը տեսնելով իմ զարմանքը, ծիծաղեց:

Ետեւաբմ խաղաղութիւն իջաւ վերս: Անտարբերութիւն եւ միեւնոյն ժամանակ հետաքրքրութիւն, թէ ինչ է լեւեւելու ինձ հետ: Այժմ ամբոխից ուսելի շատ, ես ինքս էի հետաքրքրուած ինձմով:

Ոստիկանների թիւը գնալով շատանում էր: Ամբոխը մեծանում էր ու մեծանում: Մարդիկ ինձ էին նայում եւ ես նրանց:

Եկաւ մի աւազ ոստիկան եւ ինձ իրեն շղթայած ոստիկանին հարցրեց.

- Ուղարկե՛լ էք:

- Ոչ:

- Խուզարկեցէք եւ այտեղ պահէք մինչև իմ վերադարձը: Ամբոխին հետու պահէք:

Մի սասիկան սկսեց նայել դրպաններու, իսկ միւսները սկսեցին ինձնից հետու հրել ամբոխին:

- Ատրճանակ չկայ, - ասաց խուզարկողը:

- Երեւի նետել է, - բացատրեց ինձ իրեն շղթայողը, եւ սկսեց տաքերիս տակը նայել:

Թերթերի մի քանի թղթակիցներ ամբոխը ճեղքեցին եկան եւ սկսեցին ոտտիկաններին իմ մասին հարցուփորձ անել: Ոտտիկաններն ասացին, որ նրանք պէտք է իրենց պետին գիմեն, որն այժմ դրամատնումն է գտնուում: Թղթակիցները վազեցին այնտեղ, իսկ լուսանկարչները սկսեցին ինձ նկարել:

Ես շատ էի ուզում այդ նկարներին ունենալ, տեսնելու համար, թէ ինչպէս եմ դուրս եկել:

- Թողէ՛ք, Թողէ՛ք, ես առելիք ունեմ, - ամբոխի մէջից լուսեց մի պատուկնոջ ձայն, մինչ համազգեստաւոր մի մեքենավոր նրա համար ճանապարհ էր բացում:

Այդ ծեր կինն այնքան զարդարանք ունէր իր վրայ, ինչքան որ չէր կշռի նրա նիւար մարմինը: Ապրանքաններ, մանեակներ, տկեայ ծանր շղթաներ, մատանիներ ու ականջօղեր: Սակայն ամէնից ուշագրաւ ծղօտէ զործուած նրա լայնեզր գլխարկն էր: Այդ գլխարկի վրայ արեւադարձային պտուղներից մէկ-մէկ օրինակ կար: Անանաս, պանան, խաղող, գեղձ, նարինջ, վարունգ եւ ուրիշ այլ բաներ: Այդ բոլորի վրայ նստել էր, գլուխը թեւի տակ գրել ու յաւերժական զնով զննել լորամարդէ շափ, պէս-պէս փետուրներով մի թռչուն:

Ձինչ դժնդակ ճակատագիր այդ թռչունի համար, - մտածեցի, - այդ անմեղ կենդանու գիակով այդ կինը ցանկացել է զեղեցկացնել իր զարամեակ գրլուխը:

Սակայն, ես անմիջապէս մոտաջայ թռչունը, որովհետեւ ոսկիով, աղաման-

գով, մրգերով եւ մեռած թռչունով զարդարուն այդ պատուը հենց որ հրապարակ մտաւ, ուղմաշունչ զարճաւ եւ մեծկակ քարով զարգարուած իր ցուցամատը շէպի ինձ պարզեց եւ սասիկաններին հրամայեց.

- Kill him! ... Ի՞նչ էք կանգնել, ես ձեզ ասում եմ Kill him!

Սասիկաններն իրար նայեցին եւ ծիծաղեցին: Այդ ծիծաղը կատաղեցրեց պատուին: Նրա կարծիք ներկուած նիւար այտերը սկսեցին ցնցուել, իսկ սեւ ներկուած աչքերից կայծակներ թռան.

- Ես ձեզ ասում եմ, Kill him!

- Տիկին, մենք իբրևուր շունենք սպաննելու դրան, - ասաց սասիկաններից մէկը:

- Ո՞վ իբրևուրք ունի, - անհամբեր հարցրեց պատուը:

- Դատարանը:

- Ա՛հ, - զայրացաւ պատուը, - մինչև դատարանը դրան սպաննէ, մէկ ասուրի կը տեսի:

- Թերեւս, - ուտիրը վեր հանեց ոտտիկանը, - բայց անմիջապէս սպաննել չենք կարող:

- Կարող էք... Ես պատասխանատու եմ... Իմ հանգուցեալ ամուսնու եղբոր տղան նահանգապետ է: Ես նրա անունից պահանջում եմ, որ սպաննէք դրան, - շեղիկնակութիւններ՝ մէջտեղ քաշեց ասրիւնուշտ պատուը:

Այն ժամանակ, պարզ շէմքով մի երիտասարդ, որ պատուից մի զիջ հետու էր կանգնել, հարցրեց նրան.

- Տիկին, ինչո՞ւ էք այդպիսի յամարութեամբ պահանջում, որ այդ տղային սպաննեն:

- Ինչո՞ւ, - զարմացաւ պատուը, - շատ պարզ, երիտասարդ, շատ պարզ: Ես այդ դրամատանը տաս միլիոն տոլար ունեմ եւ նա ուղեցել է յափշտակել իմ ինչքը:

- Տաս միլիոն տոլար... - հառաչեց ամբոխը եւ ես տեսայ, որ եւ ամբոխը նւ սասիկանները շատ աղդուեցին նրա հարստութիւնից:

Սակայն, երիտասարդը տեղի չար-
ւեց:

- Տիկին, - սասց նա շատ քաղաքա-
վար, - ես չեմ կասկածում, որ դուք այդ
գրամատանը տաս միլիոն տոլար ունե՞ք,
բայց այդ պարոնը (իսուքն իմ մասին էր)
չէր կարող ձեր գրամատանը կողոպտել,
քանի որ այդ գրամատանը մէկ սենթ ան-
գամ չկայ: Այդ գրամատուն չէ, այլ գը-
րամատներն մի մեծ ցանցի զլխաւոր գը-
րամենեակ միայն... Եւ դուք գիտէ՞ք
այդ:

- Ի՞նչ... - ակամայ բացադռնչեցի
ես:

Ամէնքն ինձ նայեցին:

- Oh boy!, - ասաց ինձ իրեն շղթա-
յած ոստիկանը, - ես տեսնում եմ դու
սխալ տեղ ես մտել:

- Այո, - ասացի ես:

- Նա խոստովանե՞ց, նա խոստովա-
նեց: Սպաննեցէ՞ք դրան... Սպաննեցէ՞ք
դրան, - աղաղակեց պառուը:

Այդ ժամանակ էր, որ ամբոյի մի-
ջից մի զեղեցկաղէժ երիտասարդ դուրս
եկաւ, Համարեա՛ մի պատանի, եւ գրկե-
լով պառուին ասաց.

- Let's go, honey, we are late!

Պատանուն տեսնելով, ծեր կնոջ գէժ-
քը երանհիտութեամբ ողորուեց.

- Let's go, my love, - պատանուն

նայելով սիրատուր, ասաց պառուը,
բայց ոստիկաններին դառնալով վերջին
անգամ պատուիրեց, - դէ՛հ, ես երկար
չեմ կարող մնալ, պիտի գնամ, բայց
դուք սպաննեցէ՞ք դրան: Տեսէ՞ք, չ՛մո-
նաք սպաննելու դրան, - եւ ապա ծանր
մատանիով իր ցուցամաուը շարժելով
վրաս, սպանաց, - ես քեզ ցոյց կը տամ,
թէ ի՞նչ է նշանակում գրամատուն մըտ-
նել իմ տաս միլիոն տոլարները յափշտա-
կելու Համար...
- Ո՞վ էր այդ պատանին, որ այդ
դառամեալին զմեղրոջ անուանեց, - ինձ
իրեն շղթայած ոստիկանին Հարցրեց մի
այլ ոստիկան:

- Ամուսինը, - անտարբեր պատաս-
խանեց շղթայակիցս:

- Ի՞նչ... Այդ դառամեալը եւ այդ
պատանի՞ն... Յիսուն տարուայ տարբե-
րութիւն կայ այդ գոյգի միջեւ...
- Տաս միլիոն տոլարը գերօ է դար-
ձընում այդ յիսուն տարին, - նորից
անխոռով բացատրեց շղթայակիցս:

- Բայց նորից, boy!... - ուզեց ա-
ռարկել երիտասարդ ոստիկանը:

- Ի՞նչ է: Այդ տաս միլիոնի Համար
դու չէ՞ր՞ ամուսնանայ, - բարկացաւ
շղթայակիցս, - ասա՛, չէ՞ր՞ ամուսնա-
նայ...
Երիտասարդ ոստիկանը յանկարծակի
դուրով մտածմունքի մէջ ընկաւ: Նա սկըս-
ւեց օրորուել տեղում եւ ալ ձեռքում
բռնած փայտով ձախ ափը հարուածել:

Ես նայեցի նրան եւ Հասկացայ, որ
նա կ'ամուսնանար: Մարդը այդպէս է:
Նա մի ուրիշին դատապարտում է մի ա-
րարքի Համար, որը ինքը կ'անէր:

Ամբոյը գնալով մեծանում էր, երբ
աւագ ոստիկանը եկաւ եւ առանց ինձ
վրայ նայելու, ինձ իրեն շղթայած ոս-
տիկանին ասաց.

- Բաց թող, թող գնայ:

Մինչ ոստիկանը ձեռքից Հանում էր
շղթան, աւագ ոստիկանը ձեռքը դրեց
ուսիս եւ ասաց շատ բարկացած.

- Ինձ նայի՛ր: Սրանից յետոյ դիտ-
ցիր ու՞ք ես մտնում եւ ու՞մ Հետ խօսում:

- Այո՛, պարոն, - ասացի:

- Դէ՛հ գնա՛, - ուստ թողնելով Հրա-
մայեց նա եւ դառնալով դէպի ամբոյը,
Թափահարեց ձեռքերը, - Move, Move!
The show is over. Move, Move!

Ամբոյը, բացի այն երիտասարդից,
որ միլիոնատէր պառուի Հետ վէճի մէջ
մտաւ, յուսախար եղաւ, որ ինձ ազատե-
ցին: Թերթերի թղթակիցներն էլ յուսա-
խար եղան եւ գլուխներն օրօրելով Հե-
ռացան: Ամէնից շատ դժգոհեցին թեր-
թերի լուսանկարիչները եւ ես Հասկա-
ցայ, որ երբեք չպիտի տեսնեմ իմ նկա-
րը ոստիկանի Հետ շղթայուած:

Եբբ ոստիկանները փողոցն ու մայր-թը մաքրում էին հանդիսականներից, նոր միայն վրայ հասան հեռուստատեսի մարդիկ իրենց վարժանահարաչ դործիքներով: Ես շատ ուզեցի, որ նրանք ինձ նրկարեն, բայց ոստիկանների տուած քացարութիւններից յետոյ, նրանք առանց ինձ վրայ ուշադրութիւն դարձնելու, նստեցին իրենց ինքնաշարժները եւ սլացան մի այլ տեղ:

Յանկարծ ես էլ յուսախարութիւն զգացի: Այդ նման էր այն յուսախարութեանը, որը զգացում է, եբբ մի աղջիկ հանդիպում է խոստանում, բայց չի գալիս տեսակցութեանը:

Ես կանգնել էի դրամատան դրան առջեւ եւ մտածում էի, թէ այդ ինչ յուսախարութիւն է իմ մէջ: Եւ յիշեցի շէքս: Վերջին կէս ժամուայ մէջ ինձ հետ պա-

տահած անսովոր դէպքերը նրան ետ էին հրել եւ մոռացնել տուել: Ձէքի մասին վերյիշումը ցնծութեամբ ողողեց հու-թիւնս: Այդ վրէժինչիւր լինելու, ստեյի մի բան ոչնչացնելու վայրագ մի ուրախութիւն էր: Եւ ես գրպանիցս հանեցի շէքս: Այն շէքը, որը որպէսզի չփոշուտէր, յծալուէր, ես երկու օր պահել էի անպիւրէնի քերականութեան իմ դասագրքի էջերի արանքում, ծոցիս գրպանում: Հանեցի շէքը, որ այնքան սիրելի էի, որի վրայ իմ անունը կար եւ ստորագրուել էր ինչ որ նախարարի կողմից: Մեծ հոգաւորութեամբ ծախեցի այն երկտակ, յետոյ չորստակ ու ապա խնդր մի բաւականութեամբ մանր, շատ մանր կտորների վերածեցի, ցրեցի օդի մէջ եւ քայլեցի...

Ս. Ս.



Ա. ԱՄՈՒՐԵԱՆ

ՆԵՏԱԶԻԳ ԱՐԻՇԸ

(Գորակական առնչություն)

Իրան թուրան կառուց էին
Թշնամութեամբ դարաւոր,
Բագուկները յոգնել էին
Կռիւներում ահաւոր:

Մերթ թուրանն էր հզօրանում՝
Տալիս հարուած տմարդի,
Մերթ Իրանը առաջ վարում՝
Հզօր զարկով Ռասսամի:

Մուխ էր կլնում առանցքից,
Ս'ու հրդեհ էր, Ե'ու աւեր,
Վախանցիկի բախումներից
Դողում էր հողն աներբր...

Եւ հասում էր արիւնն առատ
Մարտիկների բիւրաւոր,
Ձէր մնացել գէշ անարատ
Մի գիւղ, աւան բախտաւոր:

✽

Տեսան աւերն արժաները
Իրանի եւ թուրանի,
Ու խորհեցին սահման դնել
Գոռ մարտերին ու մահին:

- Եկէ՛ք գծե՛ք մե՛նք մի սահման, -
Միարեքան ասացին, -
Յարգենք խոստումն արքայական -
Ու խորհուրդի ցտեղին:


- Կռիւն հզօր կը դադարի
Ուր գործերն են մեր կեցած,
Սահմանն է այդ իմ երկրի, -
Թուրք Աֆրասիան տասց:

Բայց գուպարի մէջ այս վերջին
Նա արել էր նուաճում,
Իրանի եօք հովիտներին
Թուրանի գօրքն էր տիրում:

Մանուշեհրը, Շահն Իրանի,
Արաւ մի նար առաջարկ,
Աֆրասիարը թող ընդունի՝
Արդարութեան նշանակ:

- Լեռն այն հսկայ ու սլացիկ
Որ կեցած է սահմանում,
Թող բարձրանայ մի նետածիգ
Անուանի՝ իմ աշխարհում,

Ու արձակի նետը ուժգին
Դէպի հողը նուաճուած,
Որքան տարածք նետը թռչի՝
Իրանինն է անկասկած:



Ափրասիաբը խնդաց մէկին՝
 - Հասողութեամբը նետի՛...
 Թռչ աչն հողը քեզ պատկանի,
 Ո՛վ Շահնշահ Իրանի:



Ու արձակեց մունետիկներ
 Մանուշեհը Իրանի՝
 - Հրամանն է Շահնշահի՛,
 Ո՛վ կտրիճներ Իրանի.
 Այն պատանին վեհ, կարշնեզ,
 Որ բիծ չունի իր մարմնին,
 Հոգով արի է ու գորեզ,
 Նետածիգ է անուանի՛
 Հետածիգ ու հետահուս,
 Պէ՛տք է այսօր հայրենիքին,
 Թռչ ինձ մօտ գայ Հասուէհաս...



Մանետիկներ շատ շքեցին
 Քաղաք ու գիւղ եւ ասան,
 Ձէին գունում յարմար մէկին
 Որ պատուիրել էր արքան:

Վերջապէս մի լեռնավայրում
 Գտան մի սէգ պատանի,
 Որի նետը չէր վրիպում,
 Ջօրեղ էր ու անուանի:

Երբ յայտնեցին Շահնշահի
 Հրամանը ի վերուստ,
 Որ Իրանին իր հայրենի
 Սպառնում էր մեծ կորուստ,

Համեստ էր նա, անփառաւեր,
 Կարմրեց, շիկնեց ամօքխած.
 - Ինձնից յայտնի ու անբասիր
 Նետածիգներ կան, - ասաց, -
 Արժանի չեմ այդ կոչումին
 Վկայ է խիզնս ու Աստուած...

Այսպէս ասաց, սակայն մէկին
 Նրան տեսիլք երևաց...
 Իսփանդարձող՝ Հազի Ոգին,
 Հրաշագործն Աստուած:
 - Օժտում եմ քեզ, - ասաց, - Արէշ,
 Հգորութեամբս ամշէշ,
 Այժմ գնա՛ արքայի մօտ
 Ներկայացիր քն ու ժով,
 Ու կատարիր հրամանը
 Վեհասպետիդ՝ անխռով:

Ուշքի եկաւ Արէշն օժտած,
 Նայեց կարշնեզ իր մարմնին,
 Գնդերներն էին ուռած,
 Հըգօր ուժով անմեկին:

Եւ շտապեց արքայի մօտ
 Մինչեւ գետին խոնարհուեց,
 Իր շապիկը հանեց, նետեց,
 Մկանները ցուցադրեց:

Չունէր մարմինն ոչ մի արատ,
 Նայնպէս հագին իր՝ քիւրեզ,
 Կուգէր Իրանն ապրէր ազատ,
 Նետածիգ էր շատ գորեզ:

- Գիտցի՛ր, արքայդ արքաների,
 Իմ պաշտելի Իրանի,
 Երբ արձակեմ նետս միակ
 Իմ ուժերովս համակ,
 Պիտի կարցնեմ ուժ ու կեանք,
 Պիտի սուգովս հազի տակ...
 Բայց Իրանը պիտի ապրի՛,
 Ապրի յաւէտ՝ իր հողով,
 Հոգածին եմ, հազի գաւակ,
 Հող կը դառնամ ես համակ...

Ասաց, ուսեց աղեղ ու նետ,
 Այն պարմանին ամնուրաց,
 Ու սլացաւ ինքը յաւէտ՝
 Այծեամի պէս դիւրընթաց:

Լարեց աղեղը լայնալիմ,
 Կանգնեց որպէս սէգ կտրիճ,
 Ու բազուկով յաղթ ու հուժկա...
 Արձակեց նետն անարկա...

Թռա՛ւ մետը, սուրաց անցաւ
Եօքը լեռ, Եօքը եովի՛տ,
Թեւ էր տալիս Հողի Ոգին
Որպէս շանթ ու փոքորիկ,
Գիտաւորի պէս էր սուրում,
Կայծ ու բոցեր արձակում...

Իր մարմինը սուգուց եռզում,
Բարձր լեքան կատարին,
Ուր արծիւն է բոյնը հիւսում
Երկնասուց ժայռերին:

☞

Դիտում էր գորգը Թուրանի,
Ափրսսիտըը շուարած,
Իսկ Շահնշահը Իրանի
Մնացել էր երացած...

Անցան դարեր, քայց իրանցին
Զմռացաւ Արշին,
Որ իր կնանկը գտե էր բերել
Մայր հողին աւ Իրանին:
Ու հաստատունեց տօն սրբազան
Թիրգան (*) ոմնուամբ մշտավառ,
ԱՄէն տարի տօնում են այն,
Յիշում էազին մետավար:

Ու վերջապէս իջաւ մետը
Եօք լեռ-եովիտներից դէն,
Միտուց ընկուզեմու կողը,
Երբ յազբակում էր արդէն:

Իսկ պարմանիները Ծարսի
Երագում են մեկուսի,
Զոհուել մի օր հայրենիքին
Արշի պէս տնկազին:

Ապա հմէց ազգի շեփար,
Թուրան գորգը մահանցեց,
Նետի ընկած տեղում այնօր
Սահմանազիծ հաստատուց:

Ա. Ա.

♣

Մեռա՛ւ Արշին, այն պատմին,
Անմահութեան պատկով,
Որ մայր հողին, հայրենիքին
Նուիրուել էր իր կեանքով:

Փրեզեօ, 1968 թ.

(*) Թիրգան—Նեաւէր:



4400

ՀԵՐԻ ԳՈՒՆՏԱՔՃԵԱՆԻՆ ՊՍՏՄԱԾԸ

“ Հ Պ Ա Ր Տ Ա Չ Գ Ը ”

Հեռավայր գիւ հնչեց ննջաննեա-
կիս խաւարին ու խաղաղութեան մէջ:
Վերջակն մէկդի հրեցի, ցատկեցի ուղի
եւ ընկալուչը դրի սկանջիս:

- Հեր՝...

- Հերի, պատրաստուէ եւ շուտով
եկուր օղակայան: Թուրքիոյ մէջ երկրա-
շարժ պատահեցաւ հիմա, Վարդօ դիւղը
աւերակ դարձաւ: Հոն պիտի երթաս իս-
կոյն:

Բժիշկներուն լափ սովորական են,
դիշեր թէ ցերեկ, նման զանազնակալ չե-
ռածայնները, որոնք զործի կը կանչեն
Տեղեկատուութեան Գործակալութեանց
մէջ պաշտօնավարող ինծի նման լուսա-
նկարիչ-րիփորքընները: Անբաժան ըն-
կերներս՝ լուսանկարի մեքենաներս,
կ'անցընեմ վիշէս, ու կը փութամ օղա-
կայան: Շատ լանցած թսիչք կ'ստնէ օ-
գանաւը դէպի Պոլիս:

Վարդօ դիւղին երէդ ուր ըլլալը չեմ
գիտեր, ու ասոր համար ալ տեղեկատու
լուսանկարիչի բնական զգացումներով
կը կտրեմ անխղճութեամբ: Բայց ոտքս Պոլիս
դնելու երբ կ'ըսեն ինծի թէ մեր յաջող
հանգրուանը կը դրոււմ պիտի ըլլայ՝ մար-
մինս կը փառաբարձի յանկարծ, - առա-
ջին անգամն է որ պիտի տեսնեմ հայկա-
կան հին քաղաք մը: Ու կը խոսիմ հո-
դիս - արդե՞ք հայեր են երկրաշարժին
դոհները:

Պոլսոյ մեր ընկերութեան պաշտօն-
եաներէն Ահմէտ Պալան ընկերակից կու
սան ինծի իբրեւ լրագրող: Կը բարձրա-
նանք օղանաւ եւ կը հասնինք Էրզրում՝
յամին տեսնել 1966 Օդոստոս 21-ի երե-

կոյեան ժամը 6-30-ին: Մայրամուտի
յագնած ու շիջող արեւը կը յամենայ էր-
զրումի հնամենի երգիկներուն ու փողոց-
ներուն վրայ: Ճամբաները կտրուած են
երկրաշարժին հետեւանքով: Բայց ժա-
մանակ կորսնցնելու իրաւունք չունինք:
Պանդոկ կը ձգենք մեր պայտուակները:
Կը նստինք ինքնաշարժ եւ առտուան
ժամը շորսին (Օդոստոս 22) կը հասնինք
Վարդօ, երբ արեւը, կարմի՛ր, նոր կը
բարձրանայ երկինք: Բլուրներ կը շրջա-
պատեն դիւղը: Ուրիշ թղթակիցներ հա-
սած են մեզմէ առաջ: Կը ցատկեմ վար
ինքնաշարժէն՝ լուսանկարի մեքենան
ձեռքիս մէջ պատրաստ:

Տեսարան առաջին՝ երեք փոքրիկ-
ներ, երկու մանչ մէկ աղջիկ, ծունկի
Լկած՝ ձեռքերով կը փոքեն հողը, եւ ի-
րենց մայրը, տան փառանկներուն վրայ
նստած՝ դիւղական տիտուր, միայլար երգ
մը կ'երգէ. հոգեւարքի երգ մը:

Կը սկսինք լուսանկարել, ամէն մէկս
աարբեր անկիւնէ մը: Արեւուն ճառա-
գայթնեբը կը հասնին հիմա փլատակ
տան բեկորներուն:

Կէս ժամ լանցած՝ փոքրիկներուն
փորած տեղէն՝ մանկական ձեռք մը դուրս
կ'ելլէ հողին տակէն: Կը շարունակեն փո-
րել աւելի արագ՝ բարբը միասին, մի-
րինակ լալով: Քառորդ ժամ ետք, ութ
սարեկան աղջնակ մը, իրենց քոյրը, կը
հասնեն հողին տակէն: Մեռած սրտաչա-
տորը կուրծքին կը սեղմէ մայրը՝ անհուն
վշտով մը:

Ձեմ դիմանար: Ես՝ որ պաշտօնիս
բերումով, ներկայ եղած եմ պատերազ-

մական ահռելի տեսարաններու, տանհակ հազարաւոր կեանքեր խլող երկրաշարժի այլ աւերներու (ինչպէս Ակատիրինը, Մարոք, որուն զո՛ւ դացին տասը հազար հողի) կը յուզուիմ յանկարծ: Չեմ կրնար զուգել արցունքս:

- Ի՞նչ է, մեռել չե՞ս տեսած, - կը հարցնէ Ֆրանսացի թղթակից մը, մըլտակով զիս:

- Այս մէկը ուրիշ է, - կ'ըսեմ, - ես այլ գաւազներ ունիմ: Կ'ըմբռնեմ անմեղ աղջնակը կորսնցնող մօր սրտին դառն կակիճը:

Բայց յուզումս՝ պահ մը միայն: Յետոյ մեռելները սովորական կը դառնան դարձեալ: Մեր շրջապատը կը շարունակենք հայրենիով երեք հարիւր անշնչացած դիակներ: Ծառ տուններ փուչ եկած են, մեծաւ մասամբ հողէ շինուած ըլլախուն պատճառաւ:

Կէսօրէ հոգ կը պատրաստուինք վերադառնալ իջրտում, երբ ստալինեան պիլիքով յաղթանդամ մէկը կ'ելլէ դէմս եւ կը կեցնէ զիս:

- Զըսե՛ս հայ ես: Լուսանկարչական ութ մեքենայ կախած է վրէն: Փոշիներէն ճերմկած է ու յոգնած կրեւոյթ մը ունի: Պոլսոյ նշանաւոր հայ լուսանկարիչ Արա Կիւլէրն էր:

Կը սեղմեմ ձեռքը: Երկու հայ՝ Անատոլի խորհրդ, ավերակ զիւղի մը փլատակներուն առջեւ...

Կ'առնենք ինքնաշարժը եւ կը շտապենք իջրտում՝ Վարդոյի աղէտի առաջին լուսանկարները հասցնելու համար համայն ուշիարհի թերթերուն:

Եւ երեք օր շարունակ՝ ա՛յս կ'ըլլայ կեանքս: Իջրտում - Վարդօ - Վարդօ-իջրտում: Լուսանկարները ճամբել, եւ կրկին ճամբայ ինչա՛յ՝ նորերու համար:

Վարդոյի մէջ, թղթակիցներուն օգնելու համար, կառավարութիւնը պատրաստած է վրան մը, ուր թուրք զինուորներու օժանդակութեամբ՝ հեռաձայնը կապուած կը մնայ իջրտումի: Իսկ իջրտում հրահանգ ստացած է որ իսկոյն

ընթացք տրուի՝ Անդարայի, Իսթամպուլի, Լոնտոնի եւ այլ քաղաքներու հետ կապուելու ուզող ունէ թղթակիցի պահանջին:

Հինգշաբթի օր, կէսօրէ հոգ, երբ Պոլսոյ հետ կը խօսիմ՝ մեր գործակալութեան մեծաւորուհին, յոյն կին մը, կ'ըսէ ինծի, թէ ՎՇՆԿԻԿԵՐ կը լըջն հոս որ Վարդօ բնակող շորս հայ ընտանիքներ կան, որոնք զո՛ւ դացած են երկրաշարժին: Իսկոյն փնտրուող կը սկսիմ: Սակայն ոչ մէկ հետք չեմ դաներ անոնցմէ: Յետոյ կը կարդամ որ Կ. Պոլսոյ մեր Պատրիարքարանը տուած է անոնց անւանացանկը, թուով տասնըշորս հոգի:

Կը վերադառնանք իջրտում: Երեկոյեան ժամը ութին ռատիոկայանի պետը կ'իմացնէ ինծի որ Լոնտոնի մեր կեդրոնը խօսիլ կ'ուզէ ինծի հետ: Միեւնոյն ժամանակ B. B. C. կը խօսի պաշտօնակցիս եւ բարեկամիս՝ Փիթըր Ֆլեյնի հետ:

Լոնտոն կ'ուզէ ակնատեսի վկայութիւնս Վարդոյի ռոկալի ողբերգութեան մասին: Կը բացատրեմ, թէ ասիկէ առաջ ներկայ եղած եմ աւելի ռաբափազու տեսարաններու, յեղափոխական պատերազմներու իբր ակահատեօ-թղթակից, ինչպէս նաեւ այլ երկրաշարժներու, բայց այս մէկը այլապէս ազդած է վրաս:

- Հայ մը ըլլալով կը զգացուի՞ս զանդուածօրէն այսքան թուրք մեռել տեսնելով, - կը շարունակէ հարց տալ ինծի Լոնտոն:

- Այո՛, - կ'ըսեմ, - նոյնիսկ լացի թուրք անմեղ աղջնակի մը մահը տեսնելով...

Ըսել կ'ուզէի որ շարիքին առջեւ հայը լուած էր պահ մը մէջս եւ Մարդը, մարդկայինը, որ միշտ ներկայ է հայուն մէջ՝ անցած էր առաջ, անտեսելով յիսուն տարի առաջուան հայկական ջարդը, երբ օսմանեան կառավարութիւնը, անմարդկային արարքով մը, ցեղապանութեան դիմելով, փորձած էր աշխարհի երեսէն ընջել ամբողջ ազգ մը: Միեւնոյն ատեն կ'ուզէի հասկցնել Լոնտոնի, որ հաւատարիմ կը մնայի պաշտօնիս

սկզբունքներուն, որ կը թելադրէ, ամէն բանէ առաջ, անկողմնակալութիւնն ու շէշոք կեցուածքը թղթակցի մը՝ իր պատրաստած տեղեկագրութեանց մէջ:

Մէհմէտ Պէյ, երգրումի ուստիոկայանի մեր ըրած հաղորդումներուն, հըրաւորեց մեզ՝ Փիթըրը եւ զիս, որ արտայայտուինք Վարդոյի աղէտէն կրած մեր տպաւորութիւններուն մասին՝ երգրումի ուստիոկայանէն եւ Անգարայի անքէնէն աշխարհասփոխու համար: Թօժարեցանք՝ Լոնտոնի հաւանութիւնը առնելէ ետք: Բայց այս անգամ, երբ պիտի հկարագրէի՝ փղնկոճոս թուրք մեռելներու հանդէպ՝ կարծես լեզուս քարի զարնըւեցաւ: շիտեցայ այլեւս անհատական զգացումներու մասին, այլ կատարեցի միայն տեղեկատուի պաշտօնս...

Փիթըրին հետ հաղիւ էինք վերազարձեր պանդոկ, երբ Լոնտոնէն հեռախօսեցին ինծի, որ Ուրբաթ օրը հանգիստ ընեմ, Շարաթ երթամ Իսթամպուլ, Կիրակի Պէյրութ վերադառնալու համար: Կ'հ, հայ եղբի ու եթէ կրնաս փորձուիման դիմացիր: Այնքան մօտը ըլլալ Արարատին եւ անգամ մը շտեմանէ՛լ մեր սրբապան լեռը:

Ձեւ մը պէտք էր գտնել: Բացի քարտէսը եւ սկսայ փնտռել Արարատին տեղը, ճշդել հեռաւորութիւնը: Փիթըրն ալ խանդավառուեցաւ, ուղեց զալ հետս: Լոնտոնի իր հայ բարեկամները յաճախ խօսած էին իրեն Արարատի մասին, կարոտով: Կ'ուզէր աչքերովը տեսնել անոնց պաշտած աստուածը:

Կանչեցինք մեր շարժավարը: Էֆրեմ էր անունը (Եփրեմ արդեօք...): Հաճոյակատարութեամբ ընդունեց մեր առաջարկը: Բուսական երկար ճամբայ պիտի կտրէինք, շուրջ 240 քիլոմէթր: Ուխտի շէշոքը առինք, մտանք ինքնաշարժ եւ ծածկոցներու մէջ փութթուած՝ առաւօտեան ժամը 4-ին քիցինք զէպի Արարատ:

Վեց ժամուան ընթացքին անցանք փլատակներէ, եկեղեցիէ նմանող բեկորներու մօտէն, Արագի վրայ նետուած

հրովական հին ոճով կամուրջէ մը, եւ ժամը 10-ի մօտ երբ հասանք քլուրի մը դադաթը՝ մեր աջ կողմը տեսանք դեղին ցուցատախտակ մը, որուն վրայ գրուած էր՝ «Ուշադրութիւն, հրասայերու ճամբայ է» (Յանգի Խօլլարը տըր): Հոս է որ Էֆրեմ կեցուց ինքնաշարժը եւ ձախ ձեռքը արեւէջ ուղղելով ըսաւ. «Այլ, Աղբը Տաղը»:

Ընդփոյթ արթնցուցի Փիթըրը, ցատկեցինք վար ինքնաշարժէն եւ նայեցանք արեւելեան կողմն մեր աշխարհի...

Տեսի՛լք, կրկնեքե՛ւթ... Ձէի հաւատար աչքերուս: Աստուծոյ պէս վհահատեսիլ՝ կանգնած էր մեր զիմաց Արարատը, միւսնէ գազաթը մխրճած երկինքի զոց կապոյտին մէջ, խորխոս ու մըրուայլ...

Ինծի չափ տանուազն՝ յափշտակուած էր Փիթըրն ալ Արարատի գեղեցկութեանն: Աչքերը չէր հեռացներ անկէ, կըրկնելով անընդհատ. «But it is wonderful, it is beautiful».

Լուս էի ես, անյազ կարօտիս ու ծարաւիս մէջ քարացած էին շրթներս: Փիթըր շնաշխարհիկ գեղեցկութենէ մը հմայուած էր, իսկ ե՞ս... գեղեցկութեանն անդին պատմական ի՞նչ ոլորտներու մէջ չէր թեւարայեք հողիս...

Յանկարծ Փիթըր բռնեց ձեռքս, ու աչքերուս մէջ խորունկ նայելով՝ ըսաւ ինծի, բառերը հատիկ-հատիկ կրկնելով.

– Հիմա կը հասկնամ, թէ ինչո՞ւ հպարտ ազգ մըն էք:

Սկսանք աճապարել՝ աւելի մօտը երթալու բնութեան այդ յաղթական կոթողին:

Կէս ժամ անդին աղբիւր մը կար. երեսնէս լուացինք անոր պաղուկ ջուրով, ապա ուղղուեցանք Արարատի հարաւ ստորոտը գտնուող Աղբը Տաղ գիւղը:

Երբ հասանք գիւղ՝ հանդիպեցանք ոստիկանատուն: Սքանչելի պատրուակ մըն ալ ունէինք այդ կողմերը այցելելու, եւ մանաւանդ Արարատով հետաքրքրուելու: Քանի մը շարաթ առաջ, անդիսական արշաւախումբ մը բարձրացած էր

Արարատի դադաթը, բայց անդամներէն մէկը անհետացած էր փոթորիկին մէջ: Գտած էին կորուսեալը, յոյս մը կա՞ր տակաւին:

Աստիկանապետը հաւատեց որ Արարատի վրայ կորսուողը կը կորսուի առյաւէտ: Ապա սկսան բացատրել, թէ ինչպէ՞ս կը բարձրանան այդ ամեհի լեռան դադաթը:

Միշտ երկու հանգրուանով, Առաջին օրը, շատ կանուխ, կը մաշուին մինչեւ ժամը 11: Հոն կը մնան, վրաններու տակ, մինչեւ յաջորդ առաւօտ: Կանուխէն՝ կը վերսկսին նորէն մաշիցի: Գազաթ հասնիլը եւ վերադառնալը Ահապարտան՝ պէտք է տեւէ ամենաուշ մինչեւ կէսօր: Անկէ յետոյ վտանգաւոր է: Անդիտական արշաւախումբը բնութեան այս անյեղի օրէնքը յարգած չըլլալուն համար զոհ էր տուած իր մէկ անդամը:

Արդէն տարուան մէջ քանի մը ամիս միայն արտօնուած է բարձրանալ լեռան Արարատ: Այդ ժամանակը վերջ գտած նր արդէն: Քանի մը օր առաջ, շուէտացի օդաչու մը, ուղղաթիւրով (հելիքոփթէր) փորձած էր վերէն հասնիլ Արարատի դադաթին, բայց զօրաւոր հովը թոյլ չէր տուած:

Աստիկանապետը կը շարունակէ բացատրել, որ մերձակայքի դիւղացիները, հովիկները չեն համարձակիր Արարատի քառորդ բարձրութենէն աւելի վեր ելլել: Վախազու ոգի մը կարծես իր թեւերը կը թափահարէ հոն: Մանձարեկ փոթորիկը միշտ կ'արշաւէ հոն ու տիրապետութեանը տակ կը պահէ անոր լանջերը: Ծծուծի անցքեր բաց կը պահեն իրենց բերանը անոր ծերպերուն մէջ, ուրկէ կը ծուռալին տարաշխարհիկ եւ կծու հոտեր:

Այս տեղեկութիւնները առնելէ հոգ, ուպեցինք քիչ մը եւս մօտեցաւ Արարատի փէշերուն: Հասանք ջրտական գիւղ մը, ուր կոզեր ու միեր կ'արածէին: Ծամբան տեսանք, տեղ-տեղ, մերկ ծառերու վրայ, արագիւի բոյներ:

Քիւրտ գիւղացիներն ալ, թուրք ստիկանապետին վկայութիւնները տուին Արարատի մասին: Իրենք ալ, անպարտելի լեռան անէն երկիւղած մարդիկ էին:

Փոքրիկ առուակ մը կար: Նստեցանք անոր ջով, Արարատի դիմաց, ուխտի շէշերը ձեռքերին:

Երեք ժամ անընդհատ դիտեցինք այդ հրաշալիքը: Զկար վայրկեան, որ կուտակուած ամպերու խողը չիոխուէր Արարատի միւս կողմէն: Անհագարտ, խռովակոծ վիճակ մը կը տիրէր հոն: Հուսանկարչական մեր մեքենաները կը բանեցնէինք անընդհատ: Այդպէս է, որ ի վերջոյ յաջողեցայ նկարել այդ լոյս դադաթը՝ առանց ամպի, ինչ որ հաւատարէպ կերպով կը պատահի:

Ժամանակը անցած էր, պէտք էր վերադառնալ:

Փորձեցի ափ մը հող առնել Արարատեան դաշտէն, ափ մը կարմիր հող՝ հետո բերելու համար: Անկարելի եղաւ. կենդանիներու աղբը այնքան թանձր խաւ մը կապած էր անոր երեսին:

«Մոռցիր այդ մէկը, վաղ անցիր», ըսաւ Փիթըր:

Զյամառեցայ:

Ոտքի՝ պահ մը եւս դիտեցի կարօտիս յուշարձանը: Որքան նայեցայ, այնքան աւելի համոզուեցայ, որ Արարատը գերի ինկած, բայց ընկճուած չէ երբեք: Մարտափ ու հիացում կը սփռէ շուրջը եւ խրոխտ կը նայի հեռաւոր, բարձր կէտի մը:

Այդ վայրկեանին տեսայ արջայական արծիւ մը, որ հանդարտ կը սաւառնէր Արարատի փէշերուն:

— Ոսկի Արծիւ կըսեն այս տեսակին, հազուադիւր է, — ըսաւ Փիթըր:

Հանդարտ ու վեհափառ թռիչքով այդ արծիւը... Ո՞ր արջային, ո՞ր դիւցազնին ոգին էր արգեօք, որ չէր բաժնուեր, չէր հեռանար Արարատէն...

Մեկնումի ժամը հասած էր: Վերջին ակնարկ մըն ալ, ու՛

— Յետութիւն Արարատ:

ԶԱՅՆԸ

Հէ՛յ, հէ՛յ, մենք ձա՛յնն ենք վազուամ՝ որ կու գայ,
 վազուան, որ դրամ առջեւը ահա՛
 Մեր երկաթ դարուն դուռը կը թակէ
 Հրքիռ կռուվով ու համբով հիւլէ:
 Լսեցէ՛ք: Ձա՛յնն ենք վազուամ, որ հսկայ
 Նաւա պէս կու գայ, դանդաղ՝ այլ վստահ,
 Մութերու ծովէն, մէզերու մէջէն,
 Լոյսի եւ յոյսի միզեր բեռցած շէն:

Հէ՛յ, հէ՛յ, ձա՛յնն ունինք սփիւտք մը թռփի,
 Անտառ մը հովու, դար մը տրոփի:
 Հագար ծագերու մենք ձա՛յնն ենք հագար,
 Որ կը հեղեղէ մարգ ու ձոր ու սար՝
 Դեպի հայրենի ծովերը հեռու,
 Մեր կարկաչն անոց շաշին խառնելու:
 Մեր սիրտ ու շուրթին՝ շեփո՛րն անցեալի,
 Մենք ձա՛յնն ենք վազուան՝ որ կ'արշալուսուի:

Մենք ձա՛յնն ենք հումրի պէս բռունցքներուն,
 Եւ կրակներու ձա՛յնը հարձատուն:
 Ձա՛յնն ենք ծառերուն, որ կը ծիծաղին՝
 Հագար ծաղիկներ իրենց շրթունքին:
 Ձա՛յնն ենք հովերուն՝ որ կ'առագաստեն,
 Ձա՛յնը ծովերուն՝ ծեծուող մրրիկէ՛ն:
 Վազուան յայտերուն ձա՛յնն ենք մենք բեզուկ,
 Ձա՛յնն երկկուան բիւր հայ երագներուն:

Ներկայի տալին վըրայ դարբնուող
 Երկաթէ վազուան ձա՛յնն ենք հրագող,
 Մոնչի՛ւնն ենք հայ կարօտի ծովին,
 Որ կ'ուզէ սերով ծածկել նայիրին:
 Ջարթեղ Անիի հագար գանգերու
 Փոքարկին բումրի՛ւնն ենք քորք ու հատու՛ւ.
 Յառնող Տէր-Ջօրի շա՛ւնչն ենք մայիսեան,
 Որ կը կարկաչէ սուգերուն վըրան:

Մենք մի՛չն ենք՝ հողի նինջին տակ յուրթի
 Հարմատող, հայթող հունտ ու խոստումի-
 Երգն ենք արեւկայ ցարեններուն մէջ
 Հասունցող յայտին, յարող յոյզին պերճ.
 Մա՛փ ու դա՛փ ձա՛յնն ենք պանդուխտ բոյներէ
 Դարձող կըռուկէի, որ կը դօզանջէ

Մեծ վերադարձի զանգը ցնծեղէն՝
Ամուլ երգի խարխուլ օփերէն:

Մենք Հայկի տէգին ամպրոպն ենք անսանձ,
Ձայնն ենք հաւատփի գրոհին Վարդանանց:
Մեքուսի սրինգին սլացիկ առնչն ենք
Եւ Արավանի վերջին ճիւղն սեղ:
Կամիսաս երգին խոխոչը գինի,
Լեռնացունց կոչն ենք Ձէնով Օհանի:
Ձայնն ենք Մասիսի հայոց ձիւններուն,
Դոփիւնն եփրատի ձիւնուն մեքուն:

Բա՛ւր ու բո՛ւր ձայնն ենք փլչոզ բերդերուն,
Թռչոզ գետերու թո՛ւնը փրփրուն:
Բաց ու բոց դրօշի ծա՛փն ենք ծածանոզ,
Փշրոզ շղթայի շրո՛նջը շէնջոզ:
Կանաչ ծաղկերգն ենք գարնան ազազայ,
Գինով գրիչներու գլգլո՛ւքն անմահ.
Շինարար մտրճի ճրճի՛ջն ենք կռփուն
Ու նեղճոզ խոփի ճոփ՛նջը նռուզուն:

Գոռ ոտնաձայնն ենք նայիրեան վազուան,
Որ, ձեռքին կայծա՛կ ու բերնին բորա՛ն,
Կու գայ, կ'արտայ. - Կենդանի՛ եմ դեռ:
Կենդանի՛ ենք դեռ... Մենք անտարեր
Ձայնն ենք Գալիէի քայլերուն կայտառ,
Որ մասիսեմի ժայռին վըրայ վառ՝
Ռազմերգի պէս ուսմբ առ ուսմբ կը խնդան.
Ջատկական զանգա՛կն ենք Ազատութեան...

Մեր սրտին՝ մայի՛ս, աչքին՝ առաւօ՛տ,
Մենք՝ աշխա՛րհ մը բռճ, սփի՛ւտճ մը կարօտ,
Մենք ուրեղ ձայնն ենք վազուան հայրենի,
Մեքուսայլ ձայնն արձակ Մեքի,
Որ դէմն ա՛յ չունի պարիսպ, դառ կամ հեռ.
Հէ՛յ, հէ՛յ, ցահաւոր Հայկի ձեռքին սակ,
Մենք՝ աստղի՛ գումար ու դա՛ր մը քայլեր,
Մենք՝ հազար դրօշի մեծաշա՛չ կռակ,

Յաղթանակի ձայնն ենք քառամբակ...

ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

ԱՐԱՄ ՀԱՅԿԱՋ

**ՄԻՆԱԿ ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱԻԹԸ ԶԷ
ՈՐ ՓՈՓՈԽԱԿՆԵՐ ՈՒՆԻ...**

Կարծեմ հազիւ տասը տարու կայի, դրել կարգաւ նոր էի սորվեր, երբ օր մը մայրս ըսաւ որ երթամ ու մեր դրացի Լուսանոյշը կանչեմ: Ինչպէս ըսի, Լուսանոյշը մեզի գրացի էր ու ճօրս խորհրդականը: Թէնև մայրս ինքնատուգ ու անկախ, թերեւս քիչ մըն ալ միապետական հակամեներով կին էր, բայց չեա դիտեր ինչու, երբեմն իր վճիռներն ու որոշումները Լուսանոյշի վաւերացման կ'ենթարկէր: Լուսանոյշը այրի էր. երեք զաւակներու՝ մէկ աղջկան ու երկու մանչու տէր: Զանոնք զէչ աղէկ կ'ապրեցնէր՝ տեղական կուսակցործի մը համար կտաւ կամ մանիսա զործնելով: Երբ ըսի իրեն, թէ մայրիկս կ'ուզէ որ մեր տունը գալ, հարցուց՝ թէ լուր ունի՞մ, գիտե՞մ՝ թէ ինչու կը կանչուի, ի՞նչ նոր բան պատահեցաւ մեր տունը:

- Զեմ գիտեր, բան մը չպատահեցաւ, - ըսի:
- Հաճի Հանրմէն գատ մարդ կա՞յ մեր տունը:
- Զէ', չկայ, մայրիկս մի՞նակ է տունը:
- Լուսանոյշը մտադր արդէն գործուած կտաւին վրայ դրաւ, դուրս ելաւ հորի փոսէն, հանեց դոզնոցը՝ ու ինծի դառնալով, ըսաւ.
- Երթանք:
- Երբ մայրս գայն տեսաւ, ըսաւ.
- Լուսանոյշ, եկա՞ր:
- Եկայ, Հաճի Պաթուն. խե՞ր է:
- Խեր է, բան չկայ: Նստե՛, հետդ խօսելիք ունիմ:
- Լուսանոյշ նստեցաւ ու ձեռքերը դուրս դրած սպասեց:
- Կարծիքդ առնելու համար կանչեցի քեզ, - ըսաւ մայրս անոր աչքերուն մէջ նայելով, - Լուսանոյշ, ի՞նչ կը խորհիս, մեր Գարեգինը կարգե՞նք, վախտը չէ՞ եկած...:
- Իրաւունք ունիս, Հաճի Պաթուն, եկած է վախտը. ոտքը կապենք որ աչքը դուրսերը չըլլայ:
- Էս ալ ատանկ խորհեցայ, - ըսաւ մայրս:
- Միտքդ մէկը ունի՞ս, - հարցուց Լուսանոյշ:
- Միտքս գտնուող բոլոր աղջիկները եթէ ուզելու ըլլանք, տղաս հարէ՞մ կ'ունենայ, - ըսաւ մայրս, - ահա ասոր համար կանչեցի քեզ որ ընտրութիւն մը ընենք:
- Կ'ընենք: Ո՞վ ունիս միտքդ:
- Աւջուկենց թորը՝ Պարկեշտը կայ յարմար, Խանճանց Վարդան Ա-

դասին աղջիկը՝ Մարիամը կայ, Թօփալ Պէտոսնոց Սիրանոյշը կայ յարմար, էրոտէփուկնոց Համեստուհին կայ յարմար, Սվղցոնց էլմոնին աղջիկը՝ Փայիկը կայ յարմար...

Այսպէս, փոխն ի փոխ մտածելով ու խօսելով, թուեցին տասնեակ մը աղջիկ: Յետոյ սկսան մաղել: Մէկուն հօրեղբայրը դինով էր, միւսին՝ մօրեղբայրը խայլըրարգ էր, ուրիշի մը ախճախիլիմ (պերդաստան) մէջ խենթութիւն կա՛ր... Ի վերջոյ անթերի համարուած երեք աղջիկ մնացին: Հող ալ կեցան: Ձեռով մը շղջցին սրտէլ, թէ անոնցմէ ո՛ր մէկն էր նախընտրելին: Բոլորն ալ պատուաւոր ընտանիքի զաւակ, սիրուն եւ ընդունելի էին: Ես՝ որ անկին մը ցաշուած դրովարժութեան դասս օրինակելով վրայ էի, ականջիս մէկը իրենց տուած մտիկ կ'ընէի այս բոլորը ու, զիշ մնաց որ, փոխանակ զկատուն պիտի ուտէր մուկը՝ զրելու, զբէի թէ զկատուն պիտի ուտէր Մարիամը:

Ըսեմ անմիջապէս, թէ արթուն մանկ մըն էի ու այդ պահուն միտքս դրի որ, երբ տեսնեմ եղբայրս, սակարկութեան մտնեմ հետը, ու եթէ ինձի արծաթ զուբուշնոց մը սայլ, պատմեմ իրեն, թէ ինչպէ՞ս մայրիկն ու մեր դրացի Լուսանոյշը զինքը կարգելու մասին խորհրդակցեցան ու, ուրիշ զուբուշի մը փոխարէն ալ, ըսեմ՝ թէ սվգե՛ր ունեցան նկատի:

Վերջապէս նորէն մայրս էր, որ զտաւ լուծումը:

- Արամ, մանչու, տեսրակէդ թուղթ մը պատուէ ու մատիտդ ալ անո՞ւ չէ՞ ֆէս, - ըսաւ ինձի:

Հնազանդեցայ:

- Տուր թուղթը ինձի:

Տուի: Ձայն երեք հաւասար մասի բաժնեց ու անոնցմէ մէկը ինձի տալով, ըսաւ-

- Վրան Մարիամ զբէ:

Գրեցի:

Թուղթի յաջորդ կտորին վրայ Պարկեշտ՝ ու երբորդին վրայ Սիրանոյշ զրել տալէ ետք, առաւ զանոնք, չորսի ծալեց, դրաւ իր գոգնոցին մէջ, իրար խառնեց՝ ու ինձի դառնալով, ըսաւ-

- Մանչու, աչքերդ խփէ ու զըւոնցմէ մէկը քաշէ:

Քաշեցի:

- Տո՛ւր ինձի:

Տուի:

- Կարգա՛ւ:

«Մարիամ» կարգացի:

- Հիմա ուրիշ մը քաշէ:

Քաշեցի, բացի՝ ու «Սիրանոյշ», կարգացի:

- Տիրոջը կամքը թող օրհնեալ ըլլայ, - ըսաւ մայրս, - այն ատեն, պ'երթանք ամէնէն առաջ Մարիամն ուղեմք, եթէ չիտան՝ Սիրանոյշին համար խնամի պիտ' երթանք, ան ալ չտալու պարագային՝ Գիպարեաննոցուն դուռը պիտի զարնենք: (Արջուկենք Գիպարեան անունով ալ կը ճանչցուէին ու Փարսիի առաջնորդ Վասմապուհ արքեպիսկոպոսը կը ստորագրէր «Ի տունէ Արջուկենց»):

- Հող մ'ընե՛ր, Հաճի՛ խաթուն, Նանճոնք կու տան աղջիկնին եւ միւսներուն դուռը զարնելու պէտք չենք ունենար, - ըսաւ Լուսանոյշ:

- Տիրոջը կամքը՝ ո՛րը որ խայլըր է, ան թող ըլլայ:

- Ամէ՛ն - թող ըլլայ, - ըսաւ Լուսանոյշ ու վերադարձաւ իր գործին:

Քանի մը օր ետք, Շարաթ գիշեր մը, մայրս ու Հայրս, ու ես՝ որպէս լսպետերակիր, խնամութեան զայցինք Ռանճեաններու տունը, եւ Մարիամը, «Տիրոջը հրամանաւ», կնութեան ուղեցինք աւազ եղբորս համար: Խանճեանները, ծնողքս կարգին յարգել պատուելէ ետք, խոստացան ութ օրէն պատասխան տալ: Այդ ութ օրը պայմանադրական էր, եթէ նոյնիսկ այդ պահուն որոշած էին ընդունիլ մեր առաջարկը:

Երբ տուն գալու համար ճամբայ ելանք, մայրս տրամաբանական գտաւ այդ ութ օրուայ ժամանակաժողովը:

– Իրաւունք ունին, թող Հարցնեն–փնտոեն, իմ շաքարիս ջուր չէ զպած, – ըսաւ Հայրս Հպարտութեամբ: Իմ աղայէս աղէ՞կը պիտի գտնեն, զորձ, պատիւ, երիտասարդութիւն, ամէն բան ունի. չի խմեր, խոսմար չի խաղար, ալ ի՞նչ կ’ուզեն...:

Բարեբախտաբար Ռանճոնք ալ չօրս նման խորհեցան, եւ ութ օրը յրտնայուն պէս, պատասխանեցին, թէ թող Տիրոջը կամօք ըլլայ, աղջիկնին կու տան:

Ուրախացունք:

Խնամութիւն ընել սկսանք: Ընտանեկան սեղմ շրջանակի մը մէջ նըշանը տուինք՝ լաւ, օղիով թրջուած ուրախութիւնով մը:

Գարաբջան մը բացուեցաւ իմ առջեւ: Ամէն տօն տաղաւարի, մեր խնամիներուն ու Հարսնորին նուէրներ ու ծրարներ տանիլ պէտք էր, ու այդ գործը ինկած էր իմ ուսերուն: Անոնք իրենց Քամզարայի այգիին կերաս, շաքարի պէս անուշ ու մելանի պէս սեւ կերաս ու կարմիր խնձոր կը զրկէին, մենք ալ, տակը շմուլու համար, Եւրոպայէն ներածուած գանազան տեսակ բուրմանաւէտ ու գունաւոր շաքարներ եւ այլ քաղցրաւէնիք՝ խօսքը շրջելու համար զաթաններու եւ բոկեղներու գէզերուն:

Ինչպէս ըսի, այս բոլորը տանելու պարտականութիւնը ինկած էր իմ ուսերուն, քանի որ մեր կողմի կրտսերագոյնն էի ես:

Անգամ մը, պահոց օրուայ մէջ ինկող տօնական օրուայ մը առիթով, մայրս, իր խնամիներուն զրկելու համար՝ զամբիւղ մը պատրաստեց, եւ որովհետեւ շատ ծանր էր, զայն կրելը իմ ուսերէս վեր, կանչեցին Կէօլպալունց Նշանը, որ բնակարանիս կ’ընէր ու տունն անոր կոնակը:

– Միշնէ մեր խնամոնց դուռը տար, դուռը գարկ ու փախիր, – պատուիրեց մայրս անոր, – ըլլա՞յ որ անտեղուանքը սլքտաս՝ պախիշիռ տունելու համար, ամօթ է, ես քեզ ահա առատօրէն կը վարձատրեմ, – ըսաւ մայրս անոր ուրիշ մէջ արծաթ գրամ մը դնելով:

– Այո՛, Հանի քուր, ըսածիդ պէս կ’ընեմ, Հանի քուր:

Ու հլանք ճամբայ: Ընտան չիտեցանք: Ես առջեւէն կը քայլէի, ան՝ ետեւէս. միայն, երբ Խանճեաններու տան մօտեցանք, ուղեկիցս Հարցոց, թէ տեսած ե՞մ մեր Հարսնորուն, սիրո՞ւն է:

– Շատ սիրուն է, իմ ճանչցած աղջիկներուս մէջ ամէնէն սիրունն է, – ըսի խոր, անկեղծ համոզումով:

Հասանք տեղ: Անոնց դուռը զոց էր ու մարդ–մարդասանք չկար չորս կողմը: Նշանը բերք դրու վտար, զարկաւ ուռնակը ու փախաւ, առանց ետին նայելու: Իմ ալ սիրտը արագ դարնել սկսաւ: Օր մը առաջ, մայրս զիս սփրիշին զրկելով մազերս խուզել էր տուած:

– Հոռի տէրայի կը նմանիս... Գնա՛ Գալուկ Խմիին՝ մազերդ թող կարգի դնէ. ըսէ՛ որ երբ Հայրիկդ անելուելու երթայ, թող անորմէ գանձէ դրամը: Հազցուցած էր նաեւ ամէնէն ներկայանալի հաղուստներս՝ ու

զիս տալտ կոխելով, եփ ջուրով, երեք բերան սապոններ էր օր մը առաջ: Կարծես թէ դացած տեղս խնամիներու տունը չըլլար, այլ՝ Ս. Հաղորդութիւն առնելու: Տունէն ճամբայ ելած պահուս ալ, չեմ դիտեր քանիբորդ անգամ ըլլալով, իրատեր էր:

- Բարեկիրթ եղիք, էվէլ պակաս մի խօրաթեր, չգիտցած բաններու մասին կարծիք մի յայտներ, մեր տան գաղտնիքները դուքս մի տար, - ես չէի գիտեր, թէ մեր տան մէջ գաղտնիքներ կան - երբ սեղան դնեն, աչք-ծակութիւն չընես. մինչեւ երեք անգամ չհրամցնեն՝ բերանդ բան չընես. պատասաներդ ալ պզտիկ առ ու կեր բերանդ զոց, առանց չփրտացնելու:

Մեր հարսնցուին փոքր քոյրը, Արաքսին, ինքն ալ գիտուէի մը, բացառ դուրը ու զիս հոն տեսնելով ուրախացաւ:

- Արաքսի՛, ո՛վ է, - հարցուց ձայն մը ներսէն:
- Խնամիկնց Արամն է:
- Ներս հրամցուր:
- Հրամցուցի՛:

Բարեբախտաբար վրայ հասան ու օգնեցին որ նուէրներու զամբիւղը առնեմ ներս:

- Աս ծանր բանը ինչպէ՞ս բերիք մինչեւ հոս...
- Իշտէ բերի, - ըսի հպարտութեամբ:

Ներսը հարցումներ տեղացին վրտա՝ որոնց, կըցածիս չափ, առանց մեր գրնտանիքին գաղտնիքները դուքս տալու, պատասխանեցի:

Վերջապէս սեղան դրին ու զիս հրաւիրեցին որ բերանս բան մը գնեմ:

- Հրամէ՛, հրամէ՛, բերանդ բոն մը դիր:
- Անօթի չեմ, - ըսի:
- Գիտենք որ անօթի չես, բայց ուրիշին տունը կերուած հացը համով կ'ըլլայ, չե՞ս գիտեր:

Ի՞նչ պիտի պիտնայի... Ես հօրաքոյրներու տունէն դատ ուրիշ տեղ կերակուր չէի կերած ու հօրաքոյրներս «տրիշ» չէին համարուեր: Զիս իրենց գաւկին պէս կը սիրէին ու միշտ, կա՛մ «պօյիս դուրպան» կ'ըլլային եւ կամ «զատաս կ'առնէին»:

Վերջապէս նստեցանք պղնձեայ կլոր սեղանին շուրջ: Ու ի՞նչ սեղան... Ի՞նչ չկար վրան որ... Մինակ ութ տեսակ անուշիկէն: Զողայի անուշ, Փիլիէի անուշ, Ծիրանի անուշ, զդուձի անուշ, սալորի անուշ, ընչէլ, թահին չէլիս, ձէթով չինուած դաթա, ձիթապտուղ, նուշ, ընկոյզ, կաղին, թոփիկ... միակ այս վերջինը չէի սիրեր:

Աչք մը պտտցնելով այս բոլորին վրայ, համոզուեցայ՝ թէ ամուսնանալու տարիքին մէջ գանուող եղբայր ունենալը բախտաւորութիւն է:

- Ի՛, հրամեցէ՛ք, - ըսաւ էլմոն Հանրմ, խօսքը ինծի ուղղելով:

Սեղանին վրայ տարածուած սպիտակ սփռոցին տակ դռնուող ձեռքերու աջով բռնեցի ձախին ճկոյթը, ու ժտեցի «մէ՛կ» ըսելով պառկեցուցի արքայի մէջ:

- Աս սեղանը վրան նայելու համար շղթուեցաւ, - ըսաւ իր մեծ աղ-լիկը՝ Աղաւնին, որ հիւրաբար ժօրը տունը կը դանուէր:

- Երկո՞ւք, - ըսի ճկոյթիս քովի մասն ալ պառկեցնելով արքայի մէջ ու մտքով արագ թուաբանութիւն մը ըրի Յ-Ձ-Ն: Եթէ անգամ մըն ալ ըսեն երեք կ'ըլլայ՝ ու ես, ըստ ժօրս պատուէրին, իրաւունք կ'ունենամ, «մահր պատասներով» ու առանց բերանս չփրտացնելու, ուտել: Բայց

չար բախտէս, երբորդ Հրաւէրի փոխարէն, Մարիամը, լաւաւի խոշոր կը-
տորի մը վրայ խոշոր կտոր մը թոփիկ դրած, երկարեց ինծի: Ատի: Ի՞նչ
կրնայի ըսել... «Ձէ՛, թոփիկ չե՛մ սիրեր»... Ի՞նչ անկիրթ բան պիտի ըլ-
լար նման արարչք մը... Կամաց-կամաց, ծայրէն պոչէն կրծելով, ձեռով
մը վերջացուցի: Ետէն ուրիշ մը հասաւ: Քիչ մնաց լայի... Սեղանը լե-
ցուն էր քաղցրաւէնիքով ու ինծի թոփիկ կը հրամցնէին անզաղար...:

Որոհեցայ որ ինք շատ սիրած ըլլալու էր թոփիկը, ու այդ բանին
ձեռքը ես էի, որ կը քաշէի:

Ճ

Եղբայրս սկսաւ, Հօրմէն ու Տօրմէն գողանի, գլուխը աջ ու ձախ
գարնել որ իր ապագայ կինը տեսնելու պատեհութիւն մը դանդ: Ողջ ըլլան
իբր ընկերները. յաջողուցին: Անոնցմէ մէկը շտապահար քոյր ունէր, կար-
գապեց որ Ծարաթ կհօրէ ետք մը Մարիամը իրենց տունը հրաւիրէ պա-
տրուակով մը, ու կանխօրօք մտանք պահուած եղբայրս զայն տեսնէ
հետէն:

Տեսաւ ու սիրեց:

Իրաւ ալ սիրուելու արժանի էակ էր ան: Իրաւ էր, թէ թոփիկին ո-
խը կար դեռ սրտիս մէջ, բայց այդ բանը իրեն չգիտնալուն վերադրելով,
ներեցի: Կարմրաթուշ, սպիտակ ժորթով, շագանակագոյն, պայծառ աչքե-
րով ու բարակ հասակ աղիկ մըն էր. նայուածքէն մեղք կը հոսէր ու փայլ-
առ վարակիչ էր: Տարիքը տասնեութ չկար դեռ:

Երբ խմացուցին մեզի, թէ կու տան զայն մեզի, կարծես թէ մեր
տունը շէնցաւ իր ներկայութիւնով, երբ դեռ ոտք իսկ չէր կոխած հոն:

Օր մը, մայրս իր խնամին ու հարսնցուն բազմիք հրաւիրեց: Իրիկու-
նը, երբ տուն եկաւ, աշխարհի ամէնէն երջանիկ կինն էր: Բաղնիքի կէտ-
պիկ քաշիլն վրայ լողցուցեր էր իր հարսը, հարսնցուն ըսել կ'ուզեմ, ու
զայն քտեր էր, խելքով թէ մարմնապէս, անթերի:

- Լոխումի կը նմանի, ուտելը կու զայ, - կ'ըսէր մեր Լուսանոյշին:

Վերջապէս հարսնիքի համար նշանակուած թուականը ժամեցաւ ու
մենք սկսանք տենցադին պատրաստութեան: Ոսկետառ Հրաւիրագրերն
զրուեցան: Ինչորկան վարձուեցաւ կարգ մը հրաւիրներ անձնապէս տանե-
լու համար ու մասանը լեցուցինք բարիքներով, որ հարսանիքի ճաշը ըլլայ
առատ ու տեսակարար:

Կիրակի օր մըն ալ տեղի ունեցաւ պսակը ու հարսը տուն բերինք,
մատուած մոմերով, «Թէ Լայրնեմտցավ» ու էն վերջն ալ՝ «ԼԻՆԱՒ ամկեզ
զիճաւոր ԵՄՔՅՈՎ: Իրան առջիւ գառնուկ մը ժորթուեցաւ ու մայրս երջան-
կութենէն լացաւ:

Այդ օրերուն, Օսմանեան Սահմանադրութիւնը վեց ամսու մը ըլլալու
էր. որովհետեւ մեր տան հիւրանոցի բաժինը զինարանի կը նմանէր. պա-
տէն երկու երկարփող մատուցէրն էին կախուած՝ ու բազմաթիւ, բազմա-
թիւ Ֆետայիներու նկարներ. Ոսման, Գէորգ Չափուշ, Սերորը իր Կորուշ-
ներով, Անդրանիկ, եւ շատ մը ուրիշներ: Կը յիշեմ նաեւ Արժեանակ Գարա-
կեօզեանի շատ մեծ մէկ նկարը, ու անոր տակ, Սիւսանիթոյի մէկ ընդար-
ձակ բանաստեղծութիւնը:

«Լսեցէք, սարկութեան դէմ վատորէն ծռած, կամ քոմութեան դէմ
բաւուցք շարժող ժողովարդանք,
Լսեցէք, ես այսօր ձեզ կրամիքէ կամք մը պիտի երգեմ ու տխրանամ
անում մը աւտուեմ,

Գարեբուն մօրը մաքրող, պատմութեանց ոսկին նորագոյ հայարդին
պիտի երգեմ»...

Այս աննման հերոսին անունը չլսողներուն համար ըսեմ նաեւ, թէ
ան Շասկին Գարահատարի ծանօթ ընտանիքներէն էր: Սահմանադրութեան
հռչակումէն մէկ-երկու ամիս առաջ մերբակալուելով՝ նետուած էր բանա,
ուր ենթարկուած էր ահաւոր չարաբանքներու: «Օրերով խոստովանել՝ գա-
նացիմ, - կը գրէ Սիամանթօ վերջը յիշուած իր շքեղ բանաստեղծութեան
մէջ:

Ես լաւ էի եւ ձեռքերս բոլոր եզունգներս փաշեցիմ: Անարցունք
մնացի եւ անբարբառ:
Խոստովանել՝ գոռացիմ, երբ հուր-արիւնս, իմ տասը մատներէս, շղթաներս
ի վար, արտերուս առջեւ հասցաւ»...

Շարունակութիւնը յայտնի է. ի վերջոյ, այս կարծիքը, իր խուցի
լամբարին քարիւղով օծեց իր մարմինը ու տուաւ կրակի:

Կամքի ի՞նչ շքեղ ուժ, Աստուած իմ:
Քիչ վերջը ըսի արդէն, թէ հարսնեւորները, մեր տունի կէս ճամբան,
լեզերն «Թե՛ չալիքնեաց»ը ու սկսան «Մե՛նք անկեղծ զինուար ենք»ը երգել:
Այդ օրերուն ամէն մարդ «Մե՛նք անկեղծ զինուար ենք» կ'երգէր... «Միայն
զե՛նքով կայ հայոց փրկութիւն» կը պոռար ու աջէն յարձակող Վարդանն
ու ձախէն իրզատող Իշխանը կը սողէր:

Այդ օրերուն էր որ, մեր խնամիները թաճարայի մէջ իրենց ունե-
ցած ջրաղացը ծախեցին. ծախեցին նաեւ ազօնի ցորենը քաղաքէն ջրաղաց
փոխաւորող ձիերը ու վերջնականապէս հաստատուեցան քաղաքին մէջ:

Մեր թաղի լակոսներուն ուշադրութեան վրիպած ըլլալու չէր այս
պարագան, որովհետեւ, զարնան իրեկուն մը, երբ մեր տան վերնաշարկը
նստած ամէնքով կը ճաշէինք, մեր պատին տակ երգ մը սկսաւ: Եղանակը
«Մե՛նք անկեղծ զինուար ենք»ինն էր, բայց բառերը չարափոխուած էին.

Ալիք Վարդանը, կ'ըլլար - Խանճոնց Վարդանը
Ձախից Իշխանը, կ'ըլլար - Մախից ձիանը,
Գրաւենք Աղբակը՝ - Կարգեց Մարիամ-ի կը վերածուէր, ու,
Տարածենք սարսափը՝ - Մնաց Նշանը-ի:

Նշանը մեր հարսին եղբայրն էր:
Լսելով այս երգին մեր պատին տակ, յատկապէ՛ս մեզի համար երգը-
ւիլը, թէ՛ բարկացանք, թէ՛ խնդացինք: Մեծէն պատիկ եղբայրս ոտքի ելաւ
որ երգէ՛նք: Գլխին պաղ ջուր թափել, բայց հայրս արգիլեց.

- Կրակին վրայ իւր թափած կ'ըլլաս, աղա՛ս, անտեսեցէք մէկ-եր-
կու օր, ու անոնք տեսնելով որ չեն կրնար մեզ ջրաշնացնել, կը լռեն:
Այդպէս ալ եղաւ: Անոնք լռեցին, բայց ամէն անգամ որ ես կը լսեմ
այդ երգը, մտքով յիսուն տարի ետ կ'երթամ. կը յիշեմ հօրեական տունս,
ու սեղանը՝ որուն շուրջ այդ օրը, ու ամէն օր, հաւաքուած մեր բողման-
դամ ընտանիքը կը ճաշէր խաղաղութեամբ...
Մարիամը մեզի լոյսի պէս երկու դաւաններ տուաւ:
Անոնք կորսուեցան անապատին կամ Եփրատին մէջ:
Ահա յիսուն տարի է ինչ սիրտս կը մղկտայ անոնց համար:
Թուրքը ստեղծելուը համար չե՞ս ամ շնար, Աստուած...
Ա. Կ.

Բ Ա Ռ Ե Ր Ը

Բառերը գոյն եւ երանգ ունին հոգւոյն արեւով .
 Բառերը լուկ չեն հնչէր, այլ մտքին մէջ տարօրէն
 Մետաղային ցալքերով արձագանգներ կ'երկարեն,
 Եւ կը տանին մեզ բոցի մը հեղեղէն անցնելով :

Նըւագարան մ'են անոնք աստեղային, քազմալար,
 Մատներուն տակ լրտուքեան՝ որ երածիչտ մ'է ինքնին,
 Խորհուրդի լոյսն ոսկեծիր անոնց անհուն երկինքին
 Կախարդանքով կը շողայ մերաշխարհին մէջ խաւար :

Սրտին զարկերն են անոնք, արիւնին գետը հոսուն
 Երակներէն՝ որոնց մէջ վարդերը կան կրակներուն .
 Մեր շրթումքին համբոյրն են՝ տրուած սիրոյ երդման հետ :

Մեր անմրմունջ ազօքքին ազերսակոծ արցունքն են,
 Բառերը ուրք որ եկան շտերձագեղ դարերէն
 Եւ հիմա մեր անիւնն են՝ յիշատակով խնկաւտ :

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ



ՊԱՏՄԱԲԱՆ Ա. ԲԱՆԱԵԱՆԻ

ՇՈՆԴԱԼԻՑ ԳԻՐՔԸ

ԳՐԵՑ՝ ԱՐԱՄ ՏԻԳՐԱՆԵԱՆ

Մեծ Հետաքրքրութիւն ստեղծեց վերջերս Երեւանում լրջ տեսած Գոցենդ Ա. Բանասանի «Նախառեւոյութիւնն Հայաստանում» աշխատութիւնը:

Մի զաղափար տալու համար էս գրքի թերսծ նորութիւններէ մասին, ըստորեւ ընթերցողին կը ներկայացնենք նրանցից մի շարք էական գծեր:

... Անհատի պաշտամունքի երկար շրջանում, սովետ պատմաբանը միշտ էլ չէ կարողացել օպեկտիւ հայացքով մօտենալ պատմական դէպքերին, մարքսլենինիստն տիպէկտիկայով վերլուծել սոցիալ նշանակութիւն ունեցող քաղաքական ակտերին: Իր ուշադրութիւնից երբեմն վրիպել են իրազարձութիւնների տրամաբանական կապակցութիւնը եւ նրանց պատմական ուշալ արժէքը: Աւելին, սովետահայ պատմաբանը, հասկնալի պատճառներով, շատ անպատ գիտակցօրէն զեղչել է թապու իրողութիւններ եւ վկայութիւններ:

Մօտեցման այս կերպը, մասնաւորաբար նախառեւոյութիւնն Հայաստանի դէպքերի առնչութեամբ, ստեղծել է մի քառս, մի մեծ անտիրութիւն, որոնցմէ լայնօրէն օգտուել են հայ ժողովրդի ուխտեալ թշնամի նաշիրնալիստ դաշ-

նակները: Նրանք առանց խղճահարութեան իւրացրել են հայ կոմունիստների աշխատանքով եւ արիւնով շահուած ժողովրդական յողթնակներին:

Գոցենդ Ա. Բանասանը լուրջ վերատեսութեան է ենթարկել 1915-1921-ի փոթորկալի տարիների իրազարձութիւնները նախառեւոյութիւնն Հայաստանում, եւ վերարժեւորել հայ կոմունիստների բախտորոշ գերը պատասզբական պայքարում: Նրա մեծարժէք աշխատութիւնը միանգամ ընդմիշտ գուբս է շարտում զայնակ տխրահուշակ մաւզերիսաներին, պատմութեան էջերից:

Գրքի առաջին մասը յատկացուած է 1915 թուականի շարդերին, Թբքահայաստանում:

Օրմանեան իմպերիալիզմի եւ ունակցիայի մութ ուժերը, սարսափած հայ կոմունիստների շարժումից, լիկվիտացիայի ենթարկում են նրանց զեկաժար ընկերներին, շարդում են պարտիայի պատասխանատուներին եւ մտաւորականներին: Յետոյ, անդլուի պրոլետարիատը զշում են Ալբարիոյ անապատները, ուր փճանում են աւելի քան մէկ միլիոն հայեր:

Գոցենդ Ա. Բանասանը պատմական

անժխտելի փաստերով ապացուցանում է Ֆրանսա-անգլիա-գերմանա-ամերիկ. իմպերիալիզմի մեղապատժութիւնը օսմանեան Ֆէլետալիզմի հետ, եւ մերկացնում է նրանց ակէնդ դաշնակիներէ խաղացած անարգ դերը: Հտնդիտա բազմած Պոլսոյ Հարէմներուն եւ սուլթանական պայտուներում, դաշնակները անյագ դիակապուտներէ նման իւրացնում են նահատակ կոմունիստ մտաւարականներն: «Դաշնակ» են մկրտում պրոկրեսիւ բանաստեղծ Սիւմանթրոյի, ճնշուած աշխատուորի դասակարգային պայքարը շեփոտող Դանիլ Վարաւմանի, ռեակցիայի դէմ դրօշ պարզած Ռուբէմ Զարդարեանի, Սիւալիմ եւ ուրիշներին: Որական շեքի նման մտնում են անէ-տուն եւ իթթիւհատական բորենիներուն մատնում պրոկրեսիւ հայերին, չինայելով անդամ ժողովրդական անմահ երաժշտադէտ Կոմիտաս Վարդապետին...

Բայց միջազգային իմպերիալիզմի յարձակումը բազմաթիւ վայրերում բախում է հայ պրոլետարիատի գինեալ ընդդիմութեանը: Հեղինակը հանգամանօրէն խոսում է հայ կոմունիստների գլխուսուրած սեւուլուցիոն շարժումների մասին, Ռեֆայում, Հանընում, Եապին-Գարա-Հիտարում, Ճեպէլ-Մուսայում: Օսմանեան Ֆէլետալիզմի եւ ռեակցիայի դաշնակից ֆրանսիական իմպերիալիստական ուժերը Ճեպէլ-Մուսայի ապստամբ աշխատաւորութիւնը բռնութեամբ փոխադրում են Եգիպտոս եւ չէզոքացնում: Հերոսամարտը ունի յաջող ելք է ունենում Վան քաղաքում, ուր հայ կոմունիստները, չնորհիւ ռուս մեծ ժողովրդի օգնութեանը, փչրում են իմպերիալիստ բանակների պաշարման օղակը: Նրանց ղեկավարը, Արամ Մանուկեան, ժողովուրդը փոխադրում է հիւսիս, ազատելով բնաջնջուելու վտանգից:

Գրքի երկրորդ եւ շատ աւելի կարեւոր մասը յատկացուել է 1918-ի Մայիսեան դէպքերի վերաբերման:

Մի թիւր կարծիք, երբեմն ընդունւած մե'ր իսկ կողմանից — ա'յն է՝ որ Յեղափոխական Ռուսաստանը շեղարդ

րական» ձեռք է երկարել թուրք ազրէ-սորներին: Պատմաբան Ա. Բանանը սպառնչ վկայութիւններով հաստատել է, որ դա մի անհեթեթ եւ խոշոր սուտ է, հնարուած կեղծարար դաշնակների կողմից: Այո՛, ճիշդ է, Լենինը եղբայրութեան կոչ էր ուղղում աշխարհի բոլոր պրոլետարներին: Այո՛, եւ ինչո՞ւ չէ, Լենինը եղբայրութեան կոչ է ուղղել հա-ե'ւ թուրք աշխատաւորներին: Ա'խր, ինչպէ՞ս կարելի է շփոթել թուրք ազնիւ պրոլետարիատը թուրք դիշտոնիչ ասկեա-րի հետ...

Օգտուելով ռուսական Մեծ Յեղափոխութիւնից յետոյ ստեղծուած կացութիւնից, թուրք ազրէսորների բանակը, առաջնորդութեամբ դաշնակ վարաւորների եւ աւազակախմբերի, ներխուժել էր Հայաստան: Դա բացայայտ պատմական ճշմարտութիւն է:

Բայց հայ կոմունիստները կազմակերպում են ժողովրդական դիմադրութիւնը: Անուստաս Միկոյեանի, Արամ Մանուկեանի, գորավար Սիլիկեանի եւ Դրաստաւատ Կանայեանի ղեկավարութեամբ, տասնեակ հազարաւոր կոմունիստ մարտիկներ եւ աշխատաւորներ պարզում են յեղափոխութեան դրօշը, ղէնք են վերցնում եւ գնում ռազմաճակատ: Բաշ-Արարանի, Ղարախիլիսայի և Սարղարապատի բախտորջ ճակատամարտներում պարտուած է թշնամին եւ դիլիկոր եւ քաշուած: Ի սպաս բնաջնջուում են նաեւ հայ ժողովրդի ոխերիմ թշնամի նացիոնալիստ դաշնակ պանտոնները: Ժողովրդական յաղթանակի ցընծութեան մէջ հուշակուած է Հայաստանի անկախութիւնը, 1918 Մայիս 28-ին:

Վե'րջապէս իրականանում էր հայ ժողովրդի դարաւոր երազը — ազատուել օտար լծից եւ սեփական հայրենիքի մէջ կերտել լուսաւոր ապագայ: Հինդ հարեւր տարուայ ընդմիջումից յետոյ՝ վերականգնում էր հայ պետականութիւնը, Իրականանում էր նաեւ ազգերի ինքնորոշման Լենինի տեսութիւնը, 28 Մայիսի դեմոկրատիկ անդիսանում էր առաջին էտապը: Չէր ուշանալու եւ երկրորդ

էտապը, սոցիալիստական կարգերի հաստատումը:

Իսկապէս՝ հազիւ երկուշուկէս տարի էր անցել, 1920 Նոյեմբերի 29-ին Հայաստանի Հանրապետութիւնը վերածուեց սովետական սոցիալիստական ռեսպուբլիկայի եւ այդ օրից մաս է կազմում Խորհրդային մեծ Միութեանը:

Ամերիկեան տուարներով վերակենդանացած դաշնակ սպառողները ամէն միջոցի դիմեցին արդիւիւր համար երկրորդ էտապի իրականացման պրոցէսը: Նրանց յաջողուեց կարճ ժամանակի համար իշխանութիւնը զուլթել եւ իրանց հողաշէրքերին Հայաստան հրահրել: Ճանապարհը բաց անելու համար ազդէսորներին առաջ՝ նրանք վատօրէն սպանեցին հերոս զնդապետ Մազմանեանին, կազմալուծեցին հայ բանակը, թշնամուն յանձնեցին Կարսը:

Իսկ հայ կոմունիստները, ուսու մեծ ժողովրդի օգնութեամբ՝ մի անգամ եւս բարձրացուցին դասակարգային պայքարի դրօշը 1920-ի Մայիսին եւ մի անգամ եւս քնաջնջեցին հայ ժողովրդի թշնամի պուրժուա-նացիոնալիստ դաշնակներին: Ա. Բանասեանը իրաւամբ երկար ծանրանում է 28 Մայիսի պատմական ակտի վրայ եւ Զախմախիչ փաստերով ապացուցում, որ տիրահաղակ Բերիայի արդիւրքով՝ հայ կոմունիստները չեն կարողացել նշել ժողովրդական այդ փառաւոր յաղթանակը: Լիման զառապուհեցնող տարի մենք զմոռացել ենք Սարգսրապատի հերոսամարտը եւ Մայիսի 28-ի պատմական ակտը: Անհատի պաշտամունքի շքեղանում էթէ պատահմամբ նշուել են դրանք, մեղանում այդ համարուել է... Նացիոնալիստական աւանտուրա: Առիթից օգտուելով, դաշնակները, արտասահմանում, ամէն տարի շքեղ հանդիսութիւններ են կազմակերպել, իրենք-իրենց փառաբանել, «Յիւնիստիկ» տանել, ուրիշի փեստերներով զարդարուել... Իսկ հայ ոսմկաւարներն ու հնչակեանները մի զանհասկանալի թեթեւամտութեամբ՝ Հայաստանի Անկախութեան պատիւը քախիշի են արել դաշնակներին:

Լուել ենք լիման զառապուհեցնող տարի եւ դրա հետեանք՝ այսօր Խորհրդային Հայաստանում՝ անգամ կոմունիստներ, 1918-1920-ի Հայաստանի Հանրապետութիւնը... դաշնակ են անուանում: Ա. Բանասեանը մաքրաջրում է պատմութիւնը եւ մերկացնում դաշնակ նենգափոխներին:

Գրքի երրորդ եւ վերջին մասը վերաբերում է 1921-ի ղէպքերին:

Խորհրդային Հայաստանի ընթերցողին դրեթէ անծանօթ են 1921-ի Փետրուարեան խռովութիւնները, որոնց շուրջ, Արտասահմանում ստեղծուել է մի խոշոր միտոլոգիա: Իբր թէ երկրի սովետականացումից անմիջապէս յետոյ գրեթե թիւններ են տեղի ունեցել... Թէ՛ մի քանի տասնեակ դաշնակներ կացինահարուել են Երեւանի բանտում... Թէ՛ ժողովուրդը ապստամբել է եւ երկրից վտարել հայ կոմունիստներին... Թէ՛ կարճ ժամանակի համար իշխանութիւնը անցել է դաշնակ աւազակների արիւնոտ ձեռքերին... Թէ՛ հայ կոմունիստները ուսու մեծ ժողովրդի օգնութեամբ վերագրուել են Խորհրդային Հայաստանը եւ ի սպառ բնաջնջել ժողովրդի թշնամի դաշնակներին... Թէ՛ մի քանի աւանտուրիստներ յաջողուել է փախչել Պարսկաստան եւ իրանց հետ տանել պետական արխիւները...:

Իրականութիւն է եւ պատմաբան Ա. Բոնասեանը ստուարիւնութեամբ փաստում է, որ սովետական կարգերի հաստատումից յետոյ, Հայաստանում ա՛լ տեղ չկար պուրժուա-նացիոնալիստներին համար, բացի Երեւանի բանտից: Կարող է լինել որ մի քանի ոճրագործ, փոխանակ զնդակահարուելու՝ կացինահարուած լինեն: Իս անշուշտ չնչին մանրամասնութիւն է:

Իրականութիւն է նաեւ, որ 1921-ի Փետրուարին կարգ մը խռովութիւններ են տեղի ունեցել եւ առիթից օգտուելով իմպերիալիզմի վարձկան դաշնակներ յարձակուել պետական հաստատութիւնների վրայ, զողացել մի քիչ փող եւ կառավարական արխիւներ: Պարզ զբէական

արարք, ինչպիսին պատահում է ամէն օր Շիկագոյում եւ Ֆար Վեստում: Բայց այդ արխիւներն ու թղթերը օգտագործելով եւ նենդափոխելով է որ կանկատէր ներքի պարագլուխ Կարո Սասունիս եւ ամերիկեան գործակալ Սիւմն Վրացեանը անհաշիւ յուշեր, ապրումներ, ուսումնասիրութիւններ, յօգուածներ, պանֆիլթներ, դրքեր, պարբերաթերթեր եւ վէպեր են հրատարակել Արտասահմանում, եւ յղփացել պարտաւ Հոնոլուլուի... Լեռնակուսակ մի գրականութիւն, որի նպատակն է եղել անշուշտ փող վաստակել եւ յետոյ իւրացնել Մայիսի 28-ի Հայաստանի Անկախութեան քաղաքական մեծ սկսւր:

Պէտք է ընդունել որ յաջողուել են տարիներով մտքերը մուրեցնել, օգտուելով այն իրողութիւնից, որ սասորդկորբայ պայքարների ընթացքում փճացել են բազմաթիւ հայ կոմունիստների պարտիական անդամատեսերը: Եղել են նաեւ պարագաներ, երբ հայ կոմունիստը ուղեկցիայի ճանկից դուրս գալու համար ինքզինքը դաշնակ է ձեւացրել, դաշնակ ճառ է խօսել, դաշնակ յօդուած է գրել, դաշնակ ժողովներ է մասնակցել, դաշնակ աւազակախմբերի մաս կազմել: Սրանից կարելի է յիշել յեղափոխական Միմա Տէր Միմասեանը (*), մանկավարժ Լեւոն Սեդրառեանը (**), բանասէր Նիկոլ Աղբալեանը: Օգտուել են նաեւ հայ պարտի պուրճուա ուսմկավարների եւ զուցիսիտա՝ հնչակեանների մեղակոչութիւնից. սրանք էլ լման յիսուն տարի

իրք թէ պայքարել են դաշնակների դէմ. խորքում եղել են դաշնակ ակէնաներ եւ ժողովները են միամիտներին: Ա. Բանասեանը կատարում է լայն մէջընթացներ նրանց մամուլից եւ փաստում, որ լմամ կէս դար նրանց գլխաւոր դերն է եղել հայ կոմունիստների ժողովրդական յաղթանակները դաշնակներին վերադրել: Տակաւին այսօր էլ մութ ուղեկցիայի եւ պուրճուական կլերիկայի էքթրաֆիլթները իրանց քարեկամ են ձեւացնում կոմունիստ պարտիային: Ենթահակալ պիտի լինենք Ա. Բանասեանին, որ սթափացնում է մեզ եւ անխնայ մերկացնում դատարիք թշնամիներին:

Եւ ինչպէս արդէն ասացինք, դաշնակները օգտուել են մե՛ր իսկ թոյլ կեցուածքից, երբ անհատի պաշտամունքի շրջանում տիբրահուլակ Բերիայի պատճառաւ շնք կարողացել պատմական ճշմարտութիւնը վերահաստատել: Ահա այդ է արել Ա. Բանասեանը իր «Լախառեւուրուցիոն Հայաստանում» գրքում, մեծ հմտութեամբ եւ գիտնականի լրջութեամբ:

Անհամբեր սպասում ենք հեղինակի խոստացած երկրորդ աշխատութեանը, նուիրուած հայ մեծ մարքսիստ Ռոստոմիս: Դաշնակների համար Ռոստոմը նրանց «կուսակցութեանը» հիմնադիր միտիկ երրորդութեանը մաս է կազմում: Բայց դուրս է գալիս, որ Ռոստոմը իրականութեան մէջ կոմունիստ գործիչ է եղել իր լման կեանքի ընթացքում... Մարզը պէտք է դատել իր գործից եւ ո՛չ թէ արտաքին խարուսիկ երեւոյթներից:

Ա. Տ.

(*) Միմա Տէր Միմասեան աւագմի անուց է Ռուբէն Տէր Միմասեանիս:
 (**) Լեւոն Սեդրառեանը՝ Լեւոն Շանթի է:

ԳՐ. ՅՈՐՈՍԵԱՆ

ՈՒՐԻՇԻՆ ԱՄՈՒՍԻՆԸ

(Վ Է Պ)

Բ.

Սուրէն բացատրութեան պէտք չունէր, Այդ ծաղիկներն ու արձակուած աղանձինները անմերու նուիրուած չէին, ա՛յլ ուժըղջութեան մը, մասնաւորաբար շքերթի մասնակցողներուն: Երիտասարդութիւնը ունի, սակայն, իր քմայքները...

Պատերու տակ սեղմուած ժողովուրդը տարածուած էր արդէն ճամբու լայնքին ու յորձանք կու տար հեռացողներու ետեւէն, երգ ու բացազանչութիւններով:

Դրան սեմէն վար չիջած, Սուրէն անդամ մըն ալ նայեցաւ վեր՝ պատուհանի աղջկան, որ կը ժպտէր, սակայն այդ ժպիտը երիտասարդի սրտին դաշտնի հարուած մը տուաւ. հոն իրեն հանդէպ արհամարհանք եւ քմեխնազ դտաւ:

Ժողովուրդի հոսանքին հակառակ ուղղութիւնը առաւ, անապտրանքէն հրելով, հրմշակելով, ճեղքելով խուժող ամբոխը՝ վայրկեան մը առաջ հեռանալու համար այդ վայրէն:

Սուրէն անկողին մտած չէր այդ գիշեր:

Այդ գիշեր մանուկներն ի՛նչ անկողին չէին մտած:

Հայութիւնը իր հինգ տարուայ սուգէն կ'ելլէր: Մեռած աղջ մը յարութիւն կ'առնէր, Հայոց զատիկն էր:

Ամէն դրան առեւ ոչխար էր մորթուած։ Ամէն քակի, նոյնի՛սկ փողոցներուն մէջ խարոյկներ էին վառած։ Ամէն խարոյկի շուրջ հարանիք էր։ Թմրկահար եւ նուագածուներ կային։ Օդին ջուրի պէս կը հոսէր։ Ումանք միտի կտորներ կը շամփուրէին, ուրիշներ՝ անսպարանքի մէջ էին խորոված հասցնելու խճող բազմութեան։

Միայն թուրքերուն ձայնը չեյաւ այդ գիշեր։ Միայն թուրքը չէր մեց Մայիս ՉՏ-ի յիշատակին, չերգեց, չպարեց։

Արեւածագին բոլոր եկեղեցիներու զանգերը սկսան զօղանջել։ Ժողովուրդն է՝ առներէն դուրս խուժեց։

Բոլոր եկեղեցիներուն մէջ պատարագ մատուցուեցաւ Մայիս ՉՏ-ը կերտող Հերոսամարտներու մէջ ինկած հայ զինուորներու յիշատակին։

Ոմանք սալլերու, կառքերու կամ կենդանիներու վրայ բեռցած ուտելիք եւ ալլեւալլ գոյքեր կը փոխադրէին զէպի Փարնա։ Պատարագէն ետք, ժողովուրդը հոն պիտի հաւաքուէր, կէսօրուայ ճաշը առնելու եւ մինչեւ իրիկուն զուարճանալու։

Փարնա, քաղաքի արեւմտեան ծովափին՝ դետափնեայ զբօսավայր մըն է։ Հայեր թէ յոյներ սովորութիւն ունէին, Բարեկենդանի կամ ալլ սօժերու առթիւ, հոն հաւաքուելու ու նարինջի, նորաշխարհի եւ ծիրանի ծառերուն տակ խրախնանքներ սարքելու։

Սուրէն այդ գիշեր իր մէկ այնթապցի հայրենակիցին հիւրն էր, քանի մը ուրիշ այնթապցի եւ մարաշցիներուն հետ։ Պարօն Յարութիւն Տէմիրճեան իբրեւ ամէնէն տարեցը, իր մօտ հրաւիրած էր Այնթապի հայ ներկայացուցիչները։

Կէսօրը կը մօտենար արդէն։ Սուրէն զգաց՝ թէ յոգնած է եւ անտրամազիր։ Հսկառակ պարոն Յարութիւնի պնդումներուն եւ իր սուսած խոստումին՝ վճռեց Փարնա չերթալ։ Կ'ուզէր տուն երթալ ու քնանալ, հանգչիլ։

Իր գտնուող փայտաշէն ու թիթեղեայ տանիքով չորս պատ մըն էր։ Ինք Դամասկոսէն անցած էր Պէյրութ եւ եկած ծովու ճամբով։ Հազիւ քսան օր կ'ընէր հայրենիք վերադարձը։ Կիլիկեան քաղաքներու մէջ, այդ օրերուն, մեծագոյն խնդիրներէն մէկն ալ վերադարձողներուն բնակարան հայթայթելու խնդիրն էր։

Վերապրող հայութիւնը հազարաւոր քելածեթր երկարութեամբ ճամբան կտրելով՝ տուն կու գար։ Կու գար ծովու ճամբով։ Կու գար լո՛ղեկառքերու մէջ թիւռուած։ Կու գար սալլերով, կենդանիներու կոնազին թէ ցուպի ձեռին. կու գար արցունքոտ աչքերով, ու երգելով մեռնողներուն սուգն ու հայրենիքի կարօտը։

Ամէն օր նորանոր խումբեր կը հասնէին։ Անոնք հա՛ց կ'ուզէին, իրենց մարմնի մերկութիւնը ծածկելիք լա՛թ կ'ուզէին, բնակարան կ'ուզէին, բժ.կութիւն կ'ուզէին...

Այդ բոլոր դժուարութեանց կարգադրութեան համար դրամի պէտք կար։ Դրամ չկար։ Կաղմակերպուած աշխատանքի պէտք կար։

Մարդ չկար։

Մատուրական երիտասարդութեան սով կար։ Հատուկտըր զւրոց եւ դարութիւն տեսած, որոշ գիտակցութիւն ունեցողներն ալ, ընդհանրապէս, զաղթականութեան զրկանքներու ազդեցութիւնը ունէին տակաւին իրենց վրայ։ Ուղեղները բթացած էին կարծես։ Անօթի-ծարաւ մարդը ա-

նապատի կրակին մէջ լքուած՝ չէ՛ր կրնար ազնիւ զգացումները անխաթար պահել ու այդ զգացումներով վերադառնալ: Ամէն մէկուն մէջ կենդանի մը կար խօսուն իր կենդանական բնազդովը, որ իր ստամոքսովը միայն կ'ապրէ:

Հարիւր հազարներով, մարտնչերու նման, ալիք առ ալիք, դաղ-թականներ կը թափէին քաղաքներու վրայ: Ուտիւք կ'ուզէին:

Սուրէն բախտաւորներէն էր այդ բուրբին մէջ, դոնէ՛ դրպանին մէջ դրած ունէր:

«Մածունի շուկան» հասաւ: Մովեղերք իջաւ: Աւազուաքին կանգ առաւ ու դիտեց անսահման կապտոյր ջուրերուն:

Հովը հանդարտած էր: Յզը տաք էր ու արեւը կիղի:



Այնթապցի Մկրտիչ աղա Մանուկեանի կրտսեր զաւակն էր Սուրէն, ծնած, մեծցած, կրթութիւն առած եւ ամուսնացած էր այդ քաղաքին մէջ:

Տեղւոյն Ամերիկեան Գոլէճին՝ մէջ տնտեսագիտութիւն եւ վաճառականութիւն էր ուսած, սակայն գիր ու գրականութեան կապուած ըլլալով էր որ ազգային շրջանակներու մէջ նկատի կ'առնուէր:

Մանուկեանը այնքան գեղեցիկ էր եղած, որ գինք «Յիսուս մա-նալի» կը կոչէին եւ ընտանիքին սիրելին էր: Գոլթցին զբանաստեղծ»ն էր. ուսումը աւարտելէն ետք, հօրը հաշիւներուն պատասխանատուութիւնը ստանձնեց:

Մկրտիչ աղայի ծնողքը մեծ հարստութեան տէր մարդիկ չէին, սակայն այդի մը, պարտէզ մը եւ բնդարձակ բակով տուն մը ժառանգ ունեցաւ: Վարպետ պղնձագործ էր եւ շարքաշ, անխնջ աշխատող:

«Պղնձագործի հազար հարուածը մէկ դահեկան չ'արժեք», կ'ըսեն: Գուցէ ճիշդ այս ճիմարտութեամբ՝ այս արհեստին ծառայողները, արեւածաղին կը սկսին եւ մինչեւ իրիկուայ միջնայր պղնձ կը մրճահարեն, օրապահելի մը շահելու համար: Սակայն, Մկրտիչ աղա հինգ մանչ զաւակներ հասցուցած էր ու իր երկու աղջիկներն ալ ամուսնացուցած լաւ արհեստաւոր տղոց հետ. ութ հոգի ձեռք-ձեռքի տուած կ'աշխատէին ու մէկ տան մէջ ալ կ'ապրէին:

Աստուծոյ օրհնութիւնը կար այդ օրերուն:

Մկրտիչ աղայի գործերը արագօրէն բարգաւաճեցան: Ունեցաւ ուրիշ աղբիւրներ ու վարպետներ՝ իրեն օժանդակող: Արհեստին հետ կիրարկեց վաճառականութիւնը: Ջրաղեցաւ հում նիւթերու եւ գործուած ապրանքներու առուարումով: Հալէպէն պղնձ կը ներածէր, ներքին գաւառներուն պղնձեղէն եւ այլ ապրանքներ կը ծախէր: Ունեցաւ իր սեփական սայլերն ու ջորիները:

Ըստ նահապետական սովորութեանց, Մկրտիչ աղա եւ կինը՝ Լուսիս, համարորհուրդ, Միրանոյշ անունով աղջիկ մը գտան Սուրէնին, որ հազիւ քսանըհինգ տարեկան էր այն ատեն, մինչ Սիրանոյշ տասնըվեց տա-

բու թխադէմ աղջիկ մըն էր: Սեւ Հաստ յոնքերը լախաղեղ կը բացուէին նոյնքան սեւ խոշոր աչքերուն վրայ:

Սուրէն եւ Սիրանոյշ երջանիկ էին իրարմով: Նոր Հարսը այդ տան մէջ Հինգերորդ օտար աղջիկը ըլլալով Հանդերձ, իր ամուսինն Հանդէպ ցոյց տրուած բացառիկ գուրգուրանքին նման՝ աշնիւ զգացումներու եւ Հոգածութեանց առարկայ կ'ըլլար տնեցիներուն կողմէ:

Երիտասարդը ոչինչ կ'ուզէր խնայել իր կինը երջանկացնելու Համար: Սիրանոյշ մանկական ուրախութեամբ կը հրճուէր ու իր սիրան ու սէրը ծաղիկ-ծաղիկ կը բանար երիտասարդ ամուսնին:

Շատ շննցած՝ տնեցիները ստացան աւեախը: Ուրախացան բոլորն ալ: Սուրէն գերերջանիկ օրեր կ'ապրէր: Օրերը մէկ-մէկ կը Համբուէին: Ծննդի քակիւն Համար ամէն օր դնում մը կ'ընէր, նոր բան մը կը բերէր:

Սիրանոյշ յղի էր:

Սուրէն իր անդրանիկ գաւկին կը սպասէր: Գիտէ՞ր: Առաջին գաւակը տղայ մը պիտի ըլլար: Գիշերները երկու երիտասարդ ամուսնիք, անկողնի մէջ երկարօրէն այդ մասին կը խօսէին: Քունը միշտ կը խուսափէր իրենցմէ: Երիտասարդ կինը ամուսնի թեւերուն մէջ Հանգարա ու լուս, անոր խօսքերը մտիկ կ'ընէր, շոյանքներովը կ'ապրէր: Անոր շրթներուն մէջ իր շրթներն ու մարմնի միտքը կը Հալէին: Տղուն շոյանքներուն հետ՝ կը Հեւար կինն ալ սիրայոյց:

- Սուրէն, ա՛խ, Սուրէն, որքա՛ն կը սիրեմ քեզ, դուն որքա՛ն բարի ես:

Եւ ամուսինն զլուխը կը սեղմէր կուրծքին վրայ:

Թովիշ փափկութիւնը ստինքներուն կը եզմուէր Սուրէնի գլխուն տակ: Տառ փափկասուն մասնիկ իրենց շիրմ Հպումներովը կը դաւարուէին աղու մազերուն, սյտերուն, շրթներուն վրայ:

- Սիրանո՛յշ:

- Հոգի՛ս:

- Կը սիրե՛ս զիս:

- Շա՛տ:

- Որքա՛ն Հատ:

- Աշխարհին Հափ, եւ, Հարութիւններուդ Հափ, եւ, աւելի, աւելի... իսկ դո՛ւն:

- Ես այնքա՛ն կը սիրեմ քեզ, որ ես իննի չեմ պատկանիր...

Երջանիկ էին:

Կը խայտար նոյնի՛սկ շնած մանուկը:

Ճ

Ընդհանուր պատերա՛զմ:

Գաղթականութիւն:

Մկրտիչ աղան մօտ երեսուն հողի Հաշուող ընտանիքին զլուխը անցած՝ ձեռք Այնթապը, ու, Ազնագոյունի ճամբով Հալէպի ճամբան բռնեց:

Սիրանոյշ ութ ամսու յղի էր:

Թեթև իրեղեններ, զգեստներ, ծածկոցներ, շուք եւ ուտեստեղէն լիցուցին շորս երկար սայլերու մէջ, կիներն ու մանուկներն ալ հեծան, իսկ այրերը ութ ջորիներու կոնակին սկսան «խաշելութեան ճամբան»:

Առաջին օրը հեշտ անցաւ: Տուն ու տեղ կը ձգէին, սակայն, ի՛նչ փոյթ, ամէն ինչ իր վերջը ունէր: Նորէ՛ն կը վերադառնային: Նորէ՛ն կը սկսէր բնական կեանքը:

Սուրէն ուշագիտ կը հետեւէր կնոջը, այս վերջինը կը ջանար Հան-սըրտացնել ամուսինը, թէ հանգիստ է, նոյնի՛սկ ուրախ:

Սայլերու մէջ կը վխտային մանուկները, մէյ մը սայլապանին մօտ խմբուելով, մէյ մը ցրուելով: Բարձրութիւններէ վար՝ դէպի դաշտագետիկները, պարտկոյններուն ու արօտավայրերուն տեսքը անհա-ճոյ շէին բնաւ: Հարիւրաւոր մարդոց կարուանը, յաճախ, հետաքրքրա-շարժ պատկերներ կը պարզէր այդ անմեղ, անզիտակից մանուկներուն համար: Սիրանոյշ այդ մանուկներէն շատ մեծ տարբերութիւն մը չունէր, խորքին մէջ:

Այնթապցիի ուրախ արամադրութեանց տէր է եղած հինէն ի վեր. կատակասէր, հանոյասէր, կերուխումին Հոգի տուող:

Լաւ արհեստաւորներ են եղած, նաեւ վաճառականներ, Հալէպի եւ ներքին դաւառներու միջեւ: Ունէին խնամուած պարտկոյններ եւ այդու-նոր: Թէեւ ընդհանրապէս թրքախօս, սակայն ուսումի մեծ սէր ցոյց են տուած: Բանաստեղծներ չեն տուած, սակայն ունեցած են փիլիսոփաներ ու մեծ դաստիարակներ:

Եթէ երկու-երեք հարիւր հոգիով կ'երթային դէպի անորոշութիւն, կը յուսային, թէ մնացեալները զոնէ ազատած կ'ըլլան հաւանական վտան-գէն, իսկ իրենք կը ջանային, ժամ առաջ Հալէպ հասնիլ:

Այդ դիշեր, մօտ երկու հարիւր հոգի բացօթեայ պտուկեցան: Յաջորդ օր, լոյսը շծաղած, կարուանը ճամբայ կ'իյնար: Սեպ-տեմբերեան աաք օրեր էին, կէսօրէն ետք դժուար էր ճամբորդութիւնը: Օրը շտաքցած՝ Հալէպ հասնելու էին:

Հազիւ երկու ժամ ճամբայ կտրած էին, երբ ձիաւոր աաղակնի-րու խումբ մը կտրեց իրենց ճամբան:

Փանի մը դէնք պարպեցին: Գաղթականներուն հրամայեցին հա-մախմբուիլ: Հրամայեցին սայլերէն ու կենդանիներէն վար առնել ամէն ինչ: Փանի մը Հոգի մտրակեցին:

Փամ մը յետոյ, կենդանիներն ու սայլերը Հետերնին վերցուցած կը հեռանային:

Յաջորդ կարուանները փոխադրական միջոցներու պէտք պիտի ունենային: Ամէն հարց լաւագոյնս լուծած կառավարութիւնը, նախապէս կազմակերպած էր նաեւ փոխադրական միջոցներ հայթայթելու կերպը: Հայէն յափշտակելով՝ հայուն ծախել... շարունակաբար:

Բացօթեայ դաշտերու մէջ մնալ չէր ըլլար:

Ամէն մէկը կապոց մը, սոպակ մը նետեց կոնակին: Ծամբայ ինկաւ:

Սուրէն ուսին նետեց երկու կապոց, թիւը տուաւ Սիրանոյշին: Քալեցին ամբողջ օրը:

Հո՛ւս, գզացին, թէ այս գաղթականութիւնը լոկ տուն-տեղ ձգելով հեռանալ չէր: Այնթապէն վար՝ դէպի հարաւ տարածուող դաշտավայրե-

բը հետզհետէ կը շորնային, ջուրը կը ցածքէր, արեւը աւելի ու աւելի կի-
զիչ կը դառնար:

Ջրկանքներէ, յոգնութենէ, նոյնի՛սկ անօթութենէ զժուար բան
մը կար:

Մարտւէր:

Նրեկոյեան Հաշէպ հասան:
Անյաղօրէն ջուր խմեցին:
Անօթի, յոգնարեկ՝ ինկան: Քուռ մտան:



Դարերով զաղթականութեանց, թալանի եւ կոտորածներու վար-
ժըւած հայը՝ սորված էր կեանքի համար էական նիւթը լաւագոյնս ծած-
կել, պահել իր զգեստներուն զանազան անկիւնը, որպէսզի սեւ օրերուն՝
ճերմակ ստակն ու ոսկին մէկ-մէկ զուրս հանելով ծախէ:

Հասնող ժողովուրդը, յաջորդ օրն իսկ, պահուած դրամները սկը-
սաւ հատ-հատ մէջնեղ հանել: Գնումներ ընել... երբ յանկարծ մուշտով
մը երեւցաւ:

Մինչեւ վաթսուն տարեկան, բոլոր հայ այր մարդիկ պիտի հա-
մախմբուէին, իբրեւ արհեստաւոր կամ իբրեւ բանուոր:

Մկրտիչ աղայի հինգ զաւակներն ալ գացին: Գացին նաեւ երկու
փեսաները:

Ձէ՞ որ բանակի մը մէջ արհեստաւորներու միշտ պէտք կայ: Գոնէ
բանակի օգտին՝ պիտի ուղէին խնայել իրենց...:

Սուրէն հօրը արհեստը չէր կիրարկած, սակայն «վարպետի զաւակ
մը աշկերտ չ'ըլլար», կ'ըսէն: Մածկեց իր ուսումնական ըլլալը, որ շատ
վտանգաւոր կը թուէր այդ օրերուն, ու, ներկայացաւ որպէս պղնձագործ:

Բաժանումը, յամենայնդէպս, սեւ նախազարգումներով համակած
էր բոլորը:

Իր դեռատի կինը թուերուն մէջ սեղմած՝ երիտասարդը զայն խը-
րատել ջանաց, որ շուտահաստի, քաջ ըլլայ եւ իր վերադարձին սպասէ:
Ապա, զայն իր մօրը խնամքին յանձնեց, խնդրելով՝ որ ուշադիր ըլլայ եւ
անփորձ հարսը սնօզնական չձգէ:

Երբ հօրը մօտեցաւ, հայր եւ որդի, զէ՛մ դիմաց, մէկզմէկու աշ-
քերուն մէջ սուղուեցան: Հայրական ընազդը Մկրտիչ աղայի՛ն կը զգացնէր
բաներ, որոնց մասին մտածելու ու խօսելու կը զգուշանար: Մնաց լուռ:
Իշխեց կամքին, որպէսզի իր վեհութեամբը վստահութիւն եւ քաջութիւն
ներշնչել կարենայ իր անփորձ զաւկին, որ ստուգաբան հայրական ուժ եւ հո-
գածութիւն կ'սկիզկալէր իրմէ:

Հայրը հարուած մը տուաւ տղուն թեւին: Արհեստաւորի իր զօ-
րաւոր արիերուն մէջ սեղմեց անոր ուսերը: Համբուրեց ճակատէն:

Բայց չկրցաւ խօսիլ:

Տղան խոնարհեցաւ, հօրը ձեռքը առաւ ու համբուրեց:

Մկրտիչ աղա զգաց զաւկին արցունքի տաք կաթիլները ձեռքին
վրայ: Բարձրացուց զայն ու կտրծ քին սեղմեց: Խոր շունչ մը առաւ: Փոր-
մեց խօսիլ: Ձկրցաւ:

- Հայր, - խղից ի վերջոյ լռութիւնը որդին աղալանքով, - զաւ-
կիս տէրը զո՛ւն պիտի ըլլաս, անունը Մանուկ կոչեցէք, էթէ մանչ ըլլայ,
Մանուշակ՝ էթէ աղջիկ ըլլայ:

Հայրը դարձեալ չկրցաւ պատասխանել: Մատնեբու ծայրով թը-
փըրտացուց միայն անոր կունակին, որպէս թէ հին օրերու մանուկ Սուրէ-
նը ըլլար:

Տղան չխօսեցաւ այլեւս: Իր սկիւարկը զգուշութեամբ պահեց բո-
լորէն: Խոշոր, ծանր տոպրակ մը նետեց ուսին:

Հետացաւ:

Քսան քայլ մը չէր առած, կ'ըսու, ետին նայեցաւ:

Սիրանոյշ, որ մինչ այդ լուռ, արցունքները կուշ կու տար, ա-

մուսին ետեւէն կը վազէր, կանչելով.

- Սուրէն, Սուրէն:

Տղան իր թեւերուն մէջ առաւ հեկեկացող հարսը, համբուրեց ա-
նոր մազերէն: Բռնեց մանր, փափուկ ձեռքը, շրթներուն տարաւ. համբու-
րեց, համբուրեց...

- Սուրէն, հոգի՛ս, խօսք տուք ինձի որ պիտի չմոռնաս մեզ, որ
ուշադրութիւն պիտի ընես ինքզինքիդ եւ շատ շտանջես հոգիդ: Իմ մա-
սիս բնաւ մի՛ մտածե՛ր եւ ոչ ա՛յ պէպէ՛քի մասին: Ես պիտի ինձմե՛ծ դայն
ու վրան պիտի դուրգուրամ թէ՛ իմ կողմէս եւ թէ՛ քու: Սուրէն, միայն
թէ՛ յաճախ լուր դրկէ՛ մեզի: Զուտակը պիտի սպասէ զարձիդ... Զայն կըն-
քել պիտի շտամ մինչեւ որ դուն...

Տիկին Լուսիա մօտեցաւ անոնց: Հարսը առաւ իր թեւերուն մէջ:

- Գնա՛, զաւակս: Իմ աղօթքս քեզի օղնական պիտի ըլլայ ամէն
տեղ: Աստուած էրեւելի եւ աներեւոյթ փորձութիւններէ հեռու պահէ քեզ:



Հաւաքուած զարհուսաւորները խումբերու բաժնուեցան: «Օրէնք»ը
կ'արգիլէր նոյն ընտանիքէն երկու հոգիի մէկ խումբի մէջ ըլլալ: Սուրէն
մնաց մինակը իր խումբին մէջ:

Հայէպի հարուային կողմը, դաշտավայրի մը մէջ գիշերեցին:

Սնպտեմբերեան տաք օրուան՝ գով գիշեր մը յաջորդեց: Զինջ,
կապոյտ երկինքի աստղերը աղամանդի նման կը պոպուլային:

Լուսինը երկու օրուայ ըլլալու էր: Բարակ աղեղ մը՝ որ Սիրանոյշի
յօնքին կը նմանէր: Իրենց ամուսնութենէն ետք, այս առաջին նոր լուսինն
էր որ կը տեսնէր մինակը: Սովորութիւն ունէին Սիրանոյշին հետ միատեղ
գիտելու նոր լուսինը, ապա իրարու դառնալով ժպտիլ, համբուրուիլ...

Տղան ժպտեցաւ: Աչքերը փակեց, ժպտեցաւ:

Սնպայման Սիրանոյշն ալ այս վայրկեանին լուսին կը նայի ու
կը ժպտի, մտածեց ու կախեց գլուխը:

Կէս գիշերը անց՝ թմրուկի ձայնով արթնցան ընդոստ:

Խումբըը պատրաստ էին: Սմէն մէկը ուղղութիւն մը առաւ, մութ
գիշերով հեռացան քաղաքէն, գէպի ընդարձակ դաշտադեպիները, գէպի
անձայրածիր անպատր:

Սուրէնի խումբը գէպի հարաւ, Համայի ուղղութիւնը առաւ: Քա-

լնցին օրն ի բուն: Յաջորդ օրը փոխեցին ճամբան, դարձան արեւելք: Մը-
տան անապատի աւազուտքը:

Շարք մը յետոյ, հիւժած էին բոլորն ալ:

Յոգնութիւնն ու անօթութիւնը դեռ ոչինչ, աւազուտքի չհատնող
ծովուն մէջ՝ ջրէր, ջրէր, ջրէր կը փնտռէին ամէն կողմէն, ջրէր կ'երա-
ղէին:

Գիշերը աստուածային պարզեւ մըն էր, սուկայն ամէն գիշեր սկը-
սած էր մահատիւն օր մը բանալ մարդկային այդ խլեակներուն համար:
Կէտորուայ մօտ, աւազը կրակ կը կորէր:

Անուշտ տարածութեանը մէջ անապատին, չես գիտեր հովը ո՞ր
ուղղութեամբ կը փչէր: Տաք փուռի դունէն դուրս եկող հոտանքի նման
կ'այրէր մարդոց գէմքը: Իր ընթացքին հետ ամպ-ամպ դէպի երկինք կը
բարձրացնէր աւազը: Կը խաղար միջոցին մէջ: Տաք, աւազախառն մրբիկին
հետ շնչին իսկ անկարելի կը դառնար: Հեւիհեւ ու հազիւ-հազ կը յառաջա-
նային:

Անսանձ հովը տեղ-տեղ այնքան արագօրէն պարուրածեւ կը դառ-
նար, որ գետնի աւազը կը ծծէր: Կը բարձրանար վեր՝ մինչեւ երկինք:
Գորշ, վիթխարի սիւն մը կ'ըլլար, կը խուժէր հորեղունի մէկ ծայրէն միւսը:
Վա՛յ որ իրենց վրայէն անցնէր այդ սարսափելին:

Բանակին աջակցելու խարկանքով, ճամբայ ելած այդ հայերը ար-
դէն հասկցած էին, թէ իրենց ճակատագիրը վճռուած է: Առաւօտուն ճամ-
բայ ելողը ալլեա վստահ չէր մինչեւ իրիկուն ապրիլ կարենալուն: Այլլեա
մոռցուած էր անցաւր: Ոչ ոք կը յանդգնէր մտաբերել հօրենական տունն
ու սիրելիները:

Ոսանձող արեւին տակ՝ օրերով չորցած, կմախք դարձած մարդիկ
մէկ տենչանք ունէին:

Մա՛հը՝ որ կրնար գիշերէ իր անդորրութեանը մէջ առնել:

— Մա՛յր... մա՛յր... — կանչեց Սուրէն, երբ գետինը փռուած էր
երեսի վրայ, ծարաւէն չորցած ու հովը լաւա կը թափէր վրան: — Մա՛յր,
մոռցա՛ր զիս...

Երկար մնաց պառկած: Լքած էր ինքզինքը ալլեա, վրան ուժ չէր
մնացած, որ ճիւղ ընէր ոտքի ելլելու:

Ժամեր անցան: Մա՛հը չեկած ճիւղ մըն ալ ըրաւ:

Աւազով ծածկուած էր: Թօթուեց ինքզինք: Ձորն դին նայեցաւ:
Մինակ մնացած էր: Վերհասարտորները գինք լքած-հեռացած էին, ինչպէս
որ սովոր էին ընել, երբ ինքն ալ մաս կը կազմէր չմեռածներուն, հեռա-
ցողներուն:

Մարաւ էր:

Ջո՛ւր... Ջո՛ւր... Ջո՛ւր...

Նկատեց որ քիչ անդին ջուրը ալիք առ ալիք դէպի երես կու դար:
Տեսիլքը կը կրկնուէր: Մովու ալիքներ կը հեւային իրենց յոգնութիւնը
ու աւազուտքին կ'իյնային ուժասուպառ:

Անհուն ու անպարփակ ծովը կ'երգէր խորախորհուրդ:

— Ջ ի ի թ օ օ օ Արմենիա՛...

— Մե՛րն է... մե՛քն է...

Պու՛մբ մը արաբախօս մանուկներ դաւազաններու վրայ լաթի կտոր

ժը կամ թուղթի կտոր ժը կապած՝ աւազին մէջէն կը քաշէին զինուորական քայլերով: Մէկը Հին թիթեղի տուփ մը ձեռքին՝ կը թմբկահարէր:

Սուրէն անգամ ժըն ալ նայեցաւ չորս դին, աւազ էր: Մոզն էր: Սակայն իր դէմ՝ ծովը կրկնեւեւոյթ մը չէր: Զուր էր, ծով մը Զուր էր տարածուած...

Շաշափեց ակնոցները: Նայեցաւ արծաթէ զխով գաւազանին: Սուրբոյ անապատին մէջ չէր գտնուեր: Եկեղեցիներու գանդերը դադար շունչէին: Մանուկներուն ձայնը կը լսէր տակաւին: Դէպք տուն քաշեց:

Զոյգ մը ձիերու լծուած կառք մը կը մտնեար: Սուրէն բնազդաբար մէկ կողմ քաշուեցաւ, ազատ ճամբայ տալու մտեցող կառքին:

— Պարո՛ն Սուրէն... Պարո՛ն Սուրէն...
Կանչեց մէկը մէջէն ու շտպանելով կառապանին, կառքէն վար նետուեցաւ ու Սուրէնին մօտ վազեց:

— Ո՛ւր այսպէս, — Հարցուց:
Սուրէն անակնկալի եկաւ: Հայրենակէցը Յարութիւն Տէմիրճեանն էր: Որչա՛ծ էին միատեղ ըլլալ կէսօրուայ ճաշին:

Յարութիւն լսել չուզեց Սուրէնի առարկութիւնը, թեւէն բռնած՝ տարաւ, կառքէն ներս բարձրացուց:

— Ա՛յս ինչ է:
— Գառնուկ է: Զե՛ս տեսներ... մա՛րդ: Այսօր մարդ կը յոգնի՞, տուն կ'երթա՞յ: Մ'օ՛, արբաններն ու յոյնէ՛րն իսկ մեզի Հետ Մայիս 28-ի դատիկը կը տօնեն... ծօ՛, դուն թո՛ւրք ես:

Սուրէն կ'ուզէր խօսիլ, սակայն բարեկամը թոյլ չտուաւ: Ինքը շարունակեց.

— Նայէ՛, չորս տարի առաջ Հայութիւն մը կար ու մեռաւ: Մեռցուցի՛ն: Այսօր ծնած է ուրիշ Հայութիւն մը: Բոլորս ալ մեռանք, սակայն ոմանք բախտաւոր եղան, յարութիւն առին, կը հասկնա՞ս: Հիմա մենք նոր ազը ենք:

Յարութիւնին այնպէս թուեցաւ, թէ շատ բան խօսեցաւ, սակայն ինքզինքը չկրցաւ բացատրել: Սուրէն՝ ինքը դուշակելու էր անոր մտածումը:

Քաղաքէն դուրս կու գային: Սուրէն, որ ակնարկը Հեռուն, ականջով միայն կը լսէր բարեկամին խօսքերը, ոտքի ելաւ: Թօսակէցը իբե՛ն Հետեւեցաւ:

Հարիւր Հազարաւոր մարդիկ ծովեզրի աւազին վրայ տարածուած՝ դէպք Փայլոս կը քաշէին երդելով:

Մարդկային անտառ մը զոյնզոյն զգեստներով: Այս որքա՞ն Հոմանոց: Այս որքա՞ն թաշկինակ՝ օդին մէջ: Դրօշակներ ու դաւազաններ:

— Մօ, ես մեռեր եմ, այսքան Հայութիւն չեմ տեսած կեանքեա մէջ: Յարութիւն Հարուած մը տուաւ Սուրէնի ուսին, ապա կառապանին դառնալով Հրահանդեց.

— Կառապան, Հո՛ս կեցիք: Պիտի իջնենք եւ ոտքով երթանք:
— Գառնուկը Հապա, — Հարցուց Սուրէն:
— Գառնուկը ուսս կ'առնեմ, ուխտի կ'երթանք, ապա՛յ:
Մինչ դառնուիլը կառքէն վար կ'առնէր, ինքնիրեն խօսելու պէս ակնցուց.

— Սա մեր կնկան խօսիմ, քեզի ազնիկ մը գտնէ, Պէտք է ամուսնանաս ալիւս :

Կառապանը գոհունակ՝ քաղաք վերադարձաւ :

Յարութիւն մէկ շարժումով գառնուկը ուտին նետեց : Սուրէնին նայեցաւ ու խնդաց :

— Նայէ՛, այսօր պիտի խմենք, ուտենք, երգենք ու պարենք, մինչեւ որ սատկիկը : Հասկցա՞ր, Այնթապի ջուր խմած ըլլալին ցոյց պիտի տանք : Հասկցա՞ր :

Սուրէն այդ բանը հասկցած էր արզէն նախորդ գիշերուայ տեսածներէն : Փստաց ու քալեցին :

Ճամբէն վար իջան ու ժողովուրդի մէջ խառնուեցան : Յարութիւն ընկերացաւ երգող ժողովուրդի ձայնին, սակայն նկատեց Սուրէնի ցրուած, երազկոտ վիճակը : Արմուկը խփեց անոր կուշարին :

— Սուրէ՛ն, ձայնիս եկուր, — պտաց :

Սուրէն չկրցաւ զսպել ինչուքը : Հին դպրոցական շրջանի կատակ մըն էր : Քրքերէնով կ'ըսէին իրարու՝ խնդալու համար, որ իր պատմութիւնն ալ ունէր :

Յարութիւն արմուկի հարուած մըն ալ կը պատրաստէր՝ երբ Սուրէն ձայնը ձգեց միւսներուն հետ...

Երբ ար ծիծառն իր քոյն դառնայ
Երբ ար...

Գ. Ք.

(Ետք. 2)



ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՎ

Մ. ԹԵՕԼԵՕԼԵԱՆ

Մ Ո Ւ Տ՝ Ք



Հիմ ունենալով Հայկոյի Քարէն նիփի: ճնճարանին մէջ հայ գրականութեան դաստիարակի իր ճօքերը, Մինտա Թեօլեօլեան Պէյրուսի հաստատուելէ (1968) ետք, լծուեցաւ լրացուցիչ աշխատանքի մը եւ կարեւիլ բոլոր տարիները օգտագործելով՝ 1958-ին աւարտեց *Միջ-հարկարեան բանաստեղծութիւնը* (ԺԳ.-ԺԵ. դար) անուն իր աշխատա-րիւնը:

300 մեքենագիր էջերէ բաղկացած այդ գործը յոյս չունեալ սակայն: Այդ օրերու լիրանման ծանօթ տագնապին մէջ շեղանակ-ցածք մեր ստակակները խուճեցին նաեւ Թեօլեօլեանի Պատասխի բնա-կարանը եւ նստակներու, գիրքերու եւ քանկարժէք այլ առարկաներու կարգին՝ քալանցիմ ճան յիշեալ գործին ձեռագիր ճօքերն ու մեքե-նագիր օրինակը, որոնց կամար գուր եղաւ տարուած տեղէն աշխատանք: Հակառակ մտան գործերու համար Միացեալ Նահանգներու քն-ծայած աւելի ժլատ միջոցներուն՝ կէս մտացած կիրք մը յագեցնելու տննարկով, Մինտա Թեօլեօլեան վերստին աշխատանքի ձեռնարկեց եւ երկարատեւ ճիգէ մը ետք աւարտեց իր երօզը՝ *Միջհարկարեան բա-նաստեղծութիւնը*, որ յոյս պիտի տեսնէ առանձին հասարակ:

Ստորեւ այդ գործին մուտքը:

ԺԱ.—ԺԷ. դարերու Հայ մատենա-գրական վաստակը — յատկապէս՝ «միջհարկարեան» վերադիրով յայտնի բանաստեղծութիւնը — անկիրճադարձ մը կը կազմէ մեր գրական պատմու-թեան մէջ, նախորդող դարերու կրօնա-շունչ եւ խորհրդագրած սեւեռումներէն զգալի աշխարհիկ ապրում աստիճանա-կան շրջափոխութեամբ մը:

Արդարեւ, Ե.—ԺԱ. դարերու բոլոր սեռերուն մէջ — պատմագրութիւն, դաւանաբանական խնդիրներ, իմաստա-սիրական յանումներ, վկայարանու-թիւն, մեկնութիւն եւ հոգեւոր երգեր — տիրական է կրօնա-եկեղեցական, ա-պաշխարհիկ եւ ճգնական կեանքի ըմ-բռնումը: Մեր մտաւորականութիւնը, որ հոգեւորականութիւնն իսկ է, ամէն

ինչ կը պայմանաւորէ զբխտոնէական կրօնի Հողերարոյական աշխարհաւայեացքով: Նախաքրիստոնէական գարտաշրջաններէ երկարաձգուող բարքերու, ըմբռումներու, կենցաղային ոճերու եւ նոյնիսկ դրական-մշակութային հատուկոտր վկայութիւններու զէմ ցուրտ եւ անհաղորդ կեցուածք մը, — չբանլու համար՝ թշնամեկան վերաբերումով մը: Մարդը մեղաքաթաթաւ աշն էակն է, որ պիտի մաքրուի աստուածայինի ճամբով, — իբրեւ ստորակայ արարած՝ որ, խոտմերեր կեանքի մը, զրկանքի, ցաւի եւ ինքնուրացութեան դժով, կ'արհամարհէ մարմնականը եւ նիւթեղէնը, ու կը դաւանի Հողեղէնին եւ Հողեկանին: Անհատական ինքնութեան մը զիտակցութիւնը՝ մեղանշում է Աստուծոյ զաղափարին դէմ: Բնութեան բոլոր տարրերուն, մարդերուն, շշափելի իրականութիւններուն վրայ՝ խորհուրդի վարագոյր մը կայ — մշտապէս անպակի, անթափանցելի: Բոլոր Հետաքրքրութիւնները, մարդկային մտքի եւ Հողի բոլոր հարցականները կը սահմանափակուին Աստուծոյ, Քրիստոսի, Աստուածամօր, սուրբերու, կրօնաբարոյական եւ դաւանական իմացումներու ծիրի մը մէջ՝ ուրիշ անդին մեղանշումի ճամբուները կը բացուին: Ծակտազրապաշտութիւնը մարդուն գերագոյն ուզանն է, — աստուածային կամքն է, որ կը վարէ մեղ, մեր հաւաքական ու անհատական կեանքին մէջ: Կարիքը, պատուհասը, մեզի նմաններէն հասնող զուլումը եւ բերա ուժին զարհուրանքն անզամ՝ զի վերո'ւստ» են տնօրինուած, Հետեւաբար՝ հարկ է համակերպիլ, հեթանոսիւլ, ապաշխարել:

Ընդհանուր այս հաստատումները ընկնով հանդերձ, չենք ժխտեր միջ ժողովուրդի կեանքին, կենցաղային մարդերուն, բարքերուն ու լեզուին մէջ՝ երկարաձգումը աշխարհիկ հակումներու: Հայ քննական միտքը եւ բանասիրութիւնը յանգած են դրեթէ բացարձակ աշն համոզումին, որ (— զուգահեռաբար բարեպաշտիկ եւ ապաշխարչիկ տիրա-

կան ուղղութեան, որուն յառաջապաններն էին Հողերարականութիւնը եւ կիւղեցական մատենագիրները—) մեր ժողովուրդի ռամիկ խաւերուն մէջ, բերնի բերան, սիրունիչ սերունդ ու դարէ դար իրենց անջատ ընթացքը բորբոսած են բարբառները, Հեթանոսական դարբուորոշ ըմբռումները, զբխտոնէական դաւանանքին հակադրուած հակումներ կամ տրամադրութիւններ, եւ վերջապէս՝ անդիւր բանահիւսութեան պատասխաններ: Նոյնինքն մատենագրական մեր վաստակը՝ յաճախ տարտամ ու երբեմն յատակ վկայութիւններ կը բերէ մեղի, այս տեսակէտով:

Կրօնական զաղափարաբանութեամբ, սակայն աշխարհիկ նիւթով մը՝ իր ժամանակակիցներէն շեշտօրէն անշատուող առաջին գերթողը կը յիշատակուի եօթներորդ դարու պատմիչներէն Մովսէս Կազանկատուացիի կողմէ, որուն գործը հրատարակուած է 1860-ին, Փարիզի մէջ, Կ. վրդ. Շահնազարեանի կողմէ, «Պատմութիւն Ազուանից արարեալ Մովսէսի կազանկատուացւոյ» անունին տակ: — Դաւթիակ Քերթոզ, որուն «Ողբքի մանն Զնամշէրի մեծի թշխմին» խորագրեալ գերթուածը, իր օրերու ընդհանրական ուղիէն շեղումով մը, կը պատմականացնէ պատգրաբար սպանութիւնը Աղուանից Զեւանչէր կամ ձիվանչէր էշխանին, իր բարեբարեաններէն մէկուն ձեռքով: Դաւթիակ կ'ողբայ կորուստը առաջինի մարդուն, նորովիւով չարազորքը եւ աւաղելով՝ ցոյց տրուած վատութեան մասին: Հաւանօրէն լահեկանութենէ զուրկ չլլայ մէջբերում մը, այս մասին, Մանուկ Աբեղեանի «Հայոց հին գրականութեան պատմութիւն» երկհատոր գործի առաջին հատորէն, էջ՝ 369-370, ուր յատկապէս կը կարգանք— «Դաւթիակի ռարը արժանի է առանձին ուղարկութեան: Դա մի ապացոյց է, որ կարելի չէ ասել՝ թէ մեր բոլոր հին քերթողները իրենց արուեստը ի գործ դրած լինին միմիայն կրօնական թովանդակութեամբ ստանաւորներ — հոգեւոր երգեր յօրինելու: Արդարեւ, եկեղեցական խն-

դիրենքն առաջնակարգ կարևորութիւն են մտնեցնել մրանց համար, բայց կենդանի մարդիկ չէին կարող անտարբեր մընալ դէպի կեանքի այլ կողմերը ու դէպքերը: Դաւթակի աղբը միակ այդպիսի եմագոյն չափածոյ բանաստեղծութիւնն է, որ հասել է մեզ, — մի կողմ թռչած՝ ժողովրդական ամենալայն վերջի մնացորդները: ... Դաւթակի աղբը, իբրև բանաստեղծութիւն, ազդում է իր խոր ու անկեղծ գզգզումով, իր մտքի գիտեցումը եւ քնարական տխուր, անէծքի մէջ բուռն գեղումով: Ինչպէս ժամանակի ոգին պահանջում էր, քարտատման քերթողը աշխարհիկ ճիւղի մասին երգել է քրիստոնէական հայեացքով, կրօնական ինքնուրոյնացումով: Բայց, ինչպէս էլ լինի, ԴԱ ԿՐՕՆԱԿԱՆ ԵՐԳ ԶԷՅ: (Գլխադրումը մենք կատարեցինք, Մ. Թ.):

Թէ եօթներորդ դարէն առաջ եւս «կենդանի մարդիկ չէին կարող անտարբեր մնալ դէպի կեանքի այլ կողմերը եւ երեւոյթները», — կասկած չենք կրնար ունենալ նաեւ այս մասին:

Աշխարհիկ ոգիի աստիճանական զարուցումը բացորոշ կը դառնայ՝ սահայն, յատկապէս ժԱ. դարու երկրորդ կէսէն սկսեալ (*), երբ Հայ ժողովուրդը, մէկուկէս դարու բարգաւաճ կեանք մը ապրելէ ետք, Բազրատունեաց Հարբատութեան Հովանիին տակ (886-1046),

ընկերային նոր վերելք կ'արձանագրէ, եւ, հակառակ յաջորդող դարերու նոր վերիվայրումներուն (1080-1375 Ռուբինեանց իշխանութիւն, ապա՝ նոր վերթորիկ, տարողում եւ խաւար), աստիճանական աշխարհակալացումով մը, յատկապէս ժԴ-ԺԷ. դարերուն կ'իրագործէ զանազան զանձեռքու մեծակշիռ քերթողական վաստակը:

Մենք առանձնապէս պիտի խօսինք այս մասին, հետագայ էջերու մէջ:

Պ

Ինչպէ՞ս ժԱ. դարու իր անկիւնազարմը ստեղծեց ու դէպի ուշխարհիկ ոգի ճամբայ Հարթեց Հայ գրականութիւնը. ենթակայական եւ յարաբերական ի՞նչ ազդակներ դեր ունեցան նոր աշխարհահայեացքի մը խմորումին մէջ. ի՞նչ թեւերով զարգացաւ մտքի մեր վաստակը դարէ դար: Ի՞նչ զանազանութիւն ի յայտ կը բերէ մտաւորապէս վեց դարերու հունձըր մինչեւ ժԷ. դարու մեր մատենագրութեան: — Հարցումներ՝ որոնք իրենց պատասխանը պիտի դտնեն սեղմօրէն, կարելի խոտութեամբ, այս աշխատասիրութեան մէջ:

Կ'ուզենք ընդզօնել, մինչ այդ, որ մեր հիմնական նպատակն է ծանօթացրնել՝ եւ ոչ թէ մասնագիտացնել: Մեր նպատակն է ներկայացնել՝ եւ ոչ թէ Համապարփակ քննութեան տակ առնել դարաշրջանները, — մտքի մեր լիազումար վաստակի որակն ու տարողութիւնը կըշտելու Համար:

Վերջին քսան տարիներու ընթացքին՝ մասնագիտական ընդթով բազմաթիւ աշխատասիրութիւններ Հրատարակուեցան Հայաստանի մէջ, յատկապէս Միջնադարեան մեր պատմութեան մատենագրական Հեղինակութիւններու, ժամանակագրութեանց, գրական սեռերու եւ մշակութային ժառանգութեանց մասին: Անոնցմէ ոմանք՝ աւելի՛ են, քան պարզ պատմագրութիւնը, ու մեր գրա-

(*) Քարայտն Երանանքի լիւն մտքի եւ մշակոյթի պատմութեան մէջ՝ ուր շեղման եւ ճնշման տարբեր կու տամ իրարու, — իրենց մահով եւ ծնունդով: Իր գեներալի կամ հասարակութեան հետեւ պատմական եւ իմացական անձնաւորներ, իր վաճառումով իսկ՝ ՍԿԻՔԻ կու տայ ճնշում: — ձգնակեաց եւ բարեպաշտի կեանքի ըմբռումը, որ տիրական էր մինչեւ ժԱ. դարու կէտերը, կ'երկարագոյն միջեւ ժԱ. դար, աստիճանական փոփոխումով: Իսկ աշխարհիկ եւ քրիստոնէական կեանքի հակադրումը, որով շնչուորէ ի յայտ եկան ժԱ. դարու կէտն հոգ, իրենց սկզբնական արտայայտութիւններով կ'երեւին 850-1020:

կան պատմութեան կը բերեն հարուստ նախնախնեք: Կ'ուսումնասիրեն, կը վերծանեն, կը տարածուին ու կը խորանան: Տարբե՛ր է մեր մեկնակէտը, մեր այս սեղմ աշխատասիրութեան մէջ: - Նկատի ունինք հեռասպառ կեանքի մը անձնատուր մեր ժողովուրդը, ուսումնական ծրագիրներու տակ կորացած մեր երիտասարդութիւնը, կեդրոնացումի եւ ծաւալումի ընդունակ՝ այլ ժամանակի անձնութենէ աստապող մեր դրասէր հասարակութիւնը, որ հպանցիկ ծանօթութիւններու զուամբով մը զոհանալու հարկին տակ է:

Մենք չենք հաւատար, թէ Արատասմանը զինդրանք ունի լայն ծաւալով ու տարողութեամբ դրական պատմութիւններու. ունեցողներն ալ՝ շատ աւելի հեշտը կը դտնեն իրենց ուզածը, շինելով «լուսաշրիւր» - Ծրեւան, կամ արտասահմանեան բոլոր այն կեդրոնները՝ ուր հայրենական բերքի շուկաներ հաստատուած են: Չենք հաւատար նաեւ, որ մանազիտական համապարփակ ուսումնասիրութիւններ, դիտական եւ պատմագրական ստուով ծաւալուն գործեր պատրաստելու եւ հրատարակելու հարաւորութիւնները ըլլան Արատասմանի մէջ. հետեւաբար, նաեւ «մատուցում»ի տեսակէտով՝ սահմանափակ են կարելիութիւնները: Մփիււթի մէջ... Եանկարելիութիւնք մըն է պատմագիրը ըլլալը: Եւ վերջապէս, կեանքի ու առօրեայի այն պայմաններուն մէջ՝ ուր կ'ապրինք, կրթական-ընկերային-գրական-մշակութային այն միջոցորտին մէջ՝ ուր կը շնչենք, խոսցանք, սեղմ ու արագ հաստատումներ շատ աւելի ներգործական ուժ կը ստանան՝ քան բանասիրական ախորժով մշակուած աշխատասիրութիւններ: Կարելորը ա՛յն է, որ ցայտուն դասնան դարաշրջաններու պատմական դիմագիծը, մեր ժողովուրդի ընկերային վիճակը, մտաւոր ու մշակութային կեանքի ենթակայական-յարարելական պայմանները, ու, առնցժով պայմանաւոր, դրական իրադրծումները:

Ճ

Ըսինք արդէն, մեր առաջին իսկ տողով, թէ ճամբայ ինկած ենք յատկապէս ներկայացնելու համար «միջնադարեան» վերադարձով ծանօթ մեր բանաստեղծութիւնը:

Կ'ուզենք՝ որ մեր այս հատորը զատնայ լրացուցիչ մէկ մասը ա՛յն երկու միւսներուն, զորս լոյս ընծայեցինք 1955-ին եւ 1956-ին (*):

Նոյն տարողութիւնը պիտի ունենայ նաեւ մեր այս երրորդ հատորը, մասնազիտականէն խուսափումով մը, ու միջին մտաւորականութեան համար առձեռն աղբիւր մը կարենայ ըլլալու ծաւալով ու որակով:

Մինչեւ տասը տարի առաջ, երբ օգտագործելի քանի մը ժողովածու եւ ցանուցիք նշմարներ միայն ունէինք մեր տրամադրութեան տակ, ճեմարանական ուսանողութեան ընդհանուր դադարաբար

(*) «ԴԱՐ ՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ» (1850-1960), Երկու առաձիճ հատորներով. առաջինը՝ 1955-ին, Երկրորդը՝ 1956-ին, Գանիրի, Սոցարտեճեւոսանք, - սփիւռեմ եւ խորհրդակայ բաժանումներով: Երկուքն ալ սպասած, - զարմանալի՝ Երեւոյք՝ հայ կնեմքի մէջ...

Ըստ եմք այդ երկու հատորներու ալ մուտի բաժնեներում մէջ, ու հարկ կը տեսնենք ընդգծելու ճանի տյտեղ, քէ զանմք մամուլին էինք յամձեմ ոչ այնքան զենդիակութեմք մը ճկարագրով եւ տորոգութեմք՝ որքամ հպանցիկ ու տրագ սկնարիի մը բնայթով: Այսօր, տեսնէ տելի ապրիներ ետք, ամոնք ագգատութիւնը կը տեսնենք շնչուած կերպով, - յատկապէս՝ խորհրդակայ գրակնութեան պատմութեան կից մեկագրութիւններու բաժնը, որ քերի եւ խոցիլի է խորագլու: Անմք օր 1930-ական եւ 1940-ական շուակններում սպրտե են տառապանքը՝ հայրենակամ երատարակութիւններէ հատարներ, հատարներ կամ ծոզակածուներ ճեմք բերելու, վտանքօրէմ կարենմք բւբընել քէ ինչու այդքան վտիտ ու անբակմզակ եղամ խորհրդակայ գրակնութեմ յտակարարեմ բաձնի կնեմագրակեմ եւ վերուձակեմ

մը տալու համար Հայոց զբաղանուծեան այլ ճանտակ զանձեքուն մասին, Միլ-նադարեան բանաստեղծութեան նոյնիսկ հպանցիկ ներկայացում մը՝ ապերախտ աշխատանք կարելի էր նկատել: Այսօր, տասնէ աւելի տարիներ հոգ, հայրենիքը նաև ավել զարայրջանի մասին պատկանելի հունձք մը ունի — իբրև մէկտեղում եւ բնադրային բաղդատութիւն՝ հազարաւոր տաղերու, իբրև պատմա-զրական վաստակ եւ բանասիրական պըր-պըրում: Երանութիւն մըն է՝ կորուսել անոնց մէջ, ճամբայ բանալու համար ամփոփ այլ յատակ համայնապատկերի մը, ժԱ. մինչև ժԻ. զարեբու ստեղծա-զործութեանց:



Բայց նախ, երկտող զանի մը հա-տատումներ՝ մասնաւորապէս ԺԴ-ԺԵ.

մտայն: Սովետաւայ գրականութեամ պատմա-թեան եւ խորհրդաւայ գրողներու գործին աւ կնամքին ձուլուած աչ մէկ լուրջ գործ՝ մինչև այլ բուսականները. եզանձն՝ ու՛ր Արտատե-սամ չէին հասնիր: Երկրորդ Աշխարհամարտի օրերում, աւ ասկէ ալ ետք, որքո տունն, հայ-րենակոմ իրատարակութիւնները աւսմանը-նոյնն էին ճեպատամարտութեան փերեզալ-նիրու. ամոնց՝ արմէ գիտէին սղոսիկի, բնիկ կամ կրակակային սերայ արտայայտութիւններով վտանաւորինը շանիկ հայրենիքի կուսակցական իշխանութիւններում: Մեմէ՛ ամէնէն անտաղանդ-նիրէն եզամէ այս տեսակետով, ու, ինչ որ կըր-ցամէ տալ մեր հատորին մէջ իրեն մնացրա-կան բաժին՝ աւսուլագայնմ էր, զոր կըրցած էինք ի մի քերի տարիներու պրօպագանդ, հետապը-ղումով, հետնագակամութեամբ: Այսօր, տասնէ աւելի տարիներ ետք, համիի ժամանցի մը չափ հեղու է, անշուտ, զարմանիլ երէկուսմ քե-րին: — Կու գայ օրը, կը յուսամք, երբ կը մը-տաննմէ մեր գործի երկրորդ տղագրութեան մա-սին, — Յուսուք բերի, եւ՝ աւսուլ յուսակամա-քիւն ցնծայող տարագութեամբ:

Մ. Թ.

զարեբու գրական եւ մշակութային իրա-զործումներու հասարակաց նկարագրի մասին:

Աշխարհակամացման աստիճանական բնաշրջումը, որուն կ'անկարկէինք մեր առաջին իսկ տողերով, մասնակի եւ անուղղակի կերպով է յայտ կու գայ ՓԱ. դարու երկրորդ կէսէն սկսեալ, 1050-ա-կան թուականներէն մինչև 1300-ական տարիներ, ապա՝ ցայտուն ու ծաւալուն ձեւով՝ յաջորդող զարեբուն, ընդհան-րապէս զբաղան բոլոր սեռերուն ու յատ-կապէս բանաստեղծութեան մէջ:

Կեանքի մարդկային ըմբռնումը՝ դէպի բնութիւն մղած է մեր մատենա-դիրներն ու քերթողները, որոնք

— իրենց ինքնուրեւան փնտտուըր ունին,

— հոգեկանի կողքին՝ մարմնաւորն ու մարմնականը կը գդան.

— լայն հորիզոնի վրայ կը սեւեռին մարդկային իրականութեան.

— Բազրատունեաց հարստութեան հարիւր յիսունէ աւելի տարիներու (886-1045) բարեբաւտիկ շրջանին՝ զարգա-ցած է զաղաքներու կեանքը, ու՛ ալք զարգացման զուգընթաց՝ շեշտուած են յարաբերական կեանքի, շիտմի, ընկե-րային եւ մշակութային հաղորդութեան պահանջները: Այս բոլորին հետեւանք, է յայտ եկած են փոխադրեցութիւններ եւ պատուաատում:

— Բազրատունեաց շիջումով ծայր տուող նոր տարողումները, անկայուն եւ անտոյգ ընկերային միճակը չի կա-րօտիր բացատրութեան, զբաղան եւ մը-շակութային մեր կեանքին վրայ իր ան-խուսափելի անդրադարձներով: Այսու-հանդերձ, մեր ժողովուրդը նաեւ զըր-կանքին ու տուապանքին հետ եղբայրա-ցած է, ցնցուելով ու սպառելով, սակայն պահելով իր ստեղծագործ կենսունակու-թիւնը: 1080-1376, Ռուբինեանց հարս-տութիւնը, աշխարհաքաղաքական ու ընկերային նոր աղղակներու ալ ներգոր-ծութեամբ, տարրե՛ր կամար մը կը պըր-կէ մտաւոր կեանքի մեր հորիզոնին վը-

բայ: Յետոյ, նոր ու շատ աւելի ծանր հզնատամեր, արին ու աւեր, - աղքատ- յին մեր գոյութեան դատանորէն տխուր եւ անճանաչելիօրէն վարկաբեկ դարա- շրջանը, որուն պատմիչը պիտի ըլլար, ուրիշներու կարգին, Դաւրիժեցին: Մեր դրականութիւնը, սակայն, կ'ընծիւղի՝ նաեւ մոխիրներուն տակ, - արծուերոյ- ներու մէջ ծուարած վանական մեր բե- կորները՝ կտուած կը մնան զբի, մշա- կոյթի, հաւատքի: Ժամանակակից պատ- միչներու վկայութիւնը՝ ապաստումի, բարոյական անկումի, հոգեւորականու- թեան անպատմելի խաթարումին եւ ընդհանրական այայլումի մասին, փառ- տական հաստատում մըն է անշուշտ. սակայն դարերու խաւարը ճեղքող փայ- լատակումներ ըլլալէ չեն զազրիք քեր- թողական այն թանկագին ստեղծումնե- րը, որոնք Միջնադարեան մեր բանաս- տեղծութեան պարունակէն կ'անցնին մե'ր ալ ժամանակին, իբրեւ որտապրաւ իրա- զործումները ճակատագրօրէն բզկտը- ւած, որբացած, նախատուած ու եղե- րարախտ սերունդի մը, - սերունդնե- րու:

~ տրամութիւն, ուրախութիւն, ուէր, վիշտ, կարօտ, հայրենասիրական զգա- ցում, քաղութեան պաշտամունք, բնդ- վըզում՝ անիրաւութեան եւ անարդա- րութեան դէմ, բողոք Աստուծոյ եւ շքա- լակին, - ցայտուն կը գառնան սահղ- ծագործութեանց մէջ.

- դիտութեան ծարաւը կը յայտնուի մտքերու մէջ. դիտական առումով՝ ըս- կըզրնական այլ մեծակէիւ զործեր կը պատրաստուին.

- զրականութիւնը կը ժողովրդակա- նանայ իբրեւ նիւթ թէ իբրեւ ձեւ, հայ լեզուն պատմական իր շրջադարձը կ'ապ- ըի՝ դրարարէն դէպի ռամկօրէն ու աշ- խարհարար.

- զրականութիւնը կը դազրի ա- ռանձնաշնորհը ըլլալէ եկեղեցականու- թեան.

- կը յայտնուին մտքի, հոգիի, ա- ոօրեայ ապրումներու, անհատական եւ հաւաքական կեանքի, դիտութեան բոլոր մարզերուն մէջ անկաշկանդ թեւածումի ընդունակ մշակներ.

- մարդը պայքար հռչակած է ճա- կատագրին դէմ. կրաւորականութիւնը թօթափելու ներքին, բնազդական մղու- մը կը զգայ. կը պոռայ իր դժգոհանքը, ցատումը, եւ կ'ըմբոստանայ իր բախտին դէմ:



Այս հատորը պիտի ըլլայ փորձ մը նամայումի, - բայց ո՛չ գրական պատ- մութիւն մը:

Մ. Թ.

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ

ՀԱՅՈՅ ԱՐԵՒԵԼԻՑ ԿՈՂՄԱՆՔ

Առատուր Մնացականեանի մե- նադրութեան բուն միջուկը (էջ՝ 87 - 249) վերնադրուած է այսպէս. «ԳՊՐՈՒԹԻՒՆ, ՀԱՅՈՅ ԱՐԵՒԵԼԻՑ ԿՈՂՄԱՆՔ («ԱՂՈՒԱՆՐԾ ԱՇԽԱՐՀԻ»), 5-13-ՐԴ ԴԱՐՆԵՐ»։ Բաղկացած է հինգ դրուագներից, ժամանակագրական կար- դով, ու ձևավորումն ու եզրակացութիւն- ներէնց։

Առաջին՝ «Երկու գիրք, երկու դպրութիւն» դրուագում վերստին, բայց ըստ էութեան եւ աւելի մանրամասնու- թեամբ, արծարծուած է Աղուանքում գո- յութիւն ունեցած երկու գրի ու դպրու- թեան հարցը։ Այդ դրուագից մէջըրենք մի քանի եզրափակիչ քաղուածքներ.

«Այժմ հիմք կայ ստեւաւ, - դրում է Մնացականեանը, - որ աղուաներէն գիրն ու գրականութիւնը երկար չի գոյատե-ւել։ Բացի գրանից, այն չի ունեցել պե- տական, եկեղեցական նշանակալից դեր, ուստի եւ նրանցից այնքան աննշան փըշ- րանքներ են միայն պահպանուել։ Այլա- պէս ինչով բացատրել Աղուանից աշ- խարհում մէկ սփռուած հայերէն արձա- նագրութիւնների առատութիւնը՝ չիբ-

մաքորերի, որբավայրերի, կահ-կորա- սիքի եւ այլ կառոյցների ու առարկա- ների վրայ, եւ աղուաներէնի համարեա՛ թ սպառ բացակայութիւնը։ ... Պիտի ընդունել, որ Աղուանից աշխարհի պե- տական-պաշտօնական, հիմնական գիրն ու գրականութիւնը եղել է հայերէնը։ ... Այդ գրականութեան մի զգալի մա- սը պահպանուել ու հասել է մեզ։ Հիմ- նականում այդ գրականութեան ուսում- նասիրութեամբ է, որ կարող ենք զա- ղափար կազմել Աղուանից երկրի անց- եալի պատմութեան մասին»։

5-6-րդ դարերին նուիրուած Երկ- րորդ դրուագը սկսուած է կիրակոս Գան- ձակեցու «Պատմութիւն Հայոց» երկի այն ուշագրաւ վկայութեամբ, թէ Աղ- ւանքի ընակիչները մեր զազակիցներն ու հաւատակիցներն էին, նրանց առաջ- նորդներն ու թագաւորները՝ «հայալի- զու եւ հայերէնախօս»։ «Դա ինքնին ցոյց է տալիս, - ընդգծում է հեղինակը, - որ նոր Աղուանքի առաջնորդները 387 թուականից յետոյ (եթէ ոչ նաեւ դրա- նից առաջ) ստիպուած էին իմանալ հա- յերէն, որպէսզի կարողանային ղեկա-

վարել իրենց երկրի նաեւ նոր կէտն ու նրա բնակչութիւնը: Պարզու՛մ է, որ իրօք, լա՛հնց աղպէս էլ եղել է: Հա՛մապատասխան հարուստ փաստեր են պահպանուել, օրինակ, Եսուպէն կամ Արուսապէն թագաւորի, ինչպէս նաեւ նրա յաջորդներ՝ Վաչագան Երկրորդի եւ Վաչագան Երրորդի կապակցութեամբ»:

Այնուհետեւ յաջորդաբար ներկայացու՛մ, վերլուծու՛մ եւ բնութագրու՛մ են զանազան փաստեր (Երուսաղէմի Հետ կապուած գրադրութիւններ, Անաստաս վարդապետի կազմած հայկական եւ աղանական վանքերի ցանկը, Պանդա վանքի փլատակներից հանուած խճանկար յուշարձանն իր արձանագրութեամբ, Աղուանքում ծաւալուած քաղկեդոնական շարժման ներշնչարանները, եւ այլն՝ բոլորն էլ հայերէն): «Փաստերի այս փունջը, - եզրակացնում է Հեղինակը, - Աղուանից աշխարհի գրականութեան հին ու հաւաստի այն հատուածն է, որ լիովին համոզում է մեզ, թէ այդ երկրի գրականութիւնը, շնայած հենց սկզբից պիտի զարգանար երկու լեզուով, բայց զարգացել է փաստորէն մէկով, հայերէնով: ... Աղուանից երկրի անդրանիկ դիրքն էլ Աստուածաշնչի հայերէն թարգմանութիւնն էր»:

Աստուգ Մնացականեանը մասնաւորապէս անդրադառնում է Աղուանից թագաւոր Վաչէ (Վաչագան) Երկրորդին ուղղուած Հայոց Գիւտ Ա. Կաթողիկոսի բանաստեղծական շնչով թաթուռն երկու հայերէն նամակներին: «Իրանք նաեւ հայրենասիրական ոգով գրուած թղթեր են, - նշում է նա, - որոնց մէջ, քրիստոնէական զազափարնների թանձր կեղծի տակ, բարասում է հայ - աղուանական բարեկամութեան ընթո՛ղի»: Այդ նամակներից երեւում է, թէ ինչպիսի հայաշունչ մթնոլորտի մէջ էր աճել ու զործել Վաչէ Երկրորդը:

Մնացականեանը շատ աւելի է կանգ առնում Վաչագան Երրորդի կեանքի ու դործունէութեան վրայ, քանզի նրա ան-

ւան հետ են կապուած զանազան դաւանական բնոյթի գրադրութիւններ, մասնաւոր նրա օրօք եւ նախածեռնութեամբ կաղժուած կանոնները: «Վաչագան թագաւորի կանոնները» ստեղծման եւ հաստատման համար, - նկարագրում է Հեղինակը, - արքունի ամբաստան խմբում Աղուանից երկրի բոլոր գաւառների անուանի ներկայացուցիչները: Ամէն ինչ հայկական էր. ե՛ւ դիրքը, ե՛ւ լեզուն, ե՛ւ անունները մեծ մասը, ե՛ւ Մ. Գրքից կատարուած մէջբերումները, ե՛ւ նոյնիսկ յիշատակուած ամսանունը: Կը նշանակի, համախմբուածները խօսում եւ գրում էին մի ընդհանուր լեզուով, հայերէնով: Գուցէ այնտեղ կային նաեւ աղուանական բարբառներով խօսող բնակչութեան ներկայացուցիչներ, բայց դա չի արտայայտուել կանոնադրութեան մէջ»:

Ենչու՛մ է Վաչագան Երրորդի ծաւալած եկեղեցաշինութեան, քրիստոնէութեան եւ դպրութեան հզօրացման նպատակաւայց գործունէութիւնը: Ե՛ւ հայաշունչ այդ միջավայրում ամբաստում էր ոչ միայն քրիստոնէական հաստատքը, այլ ազգարեակցութեան հայ մնալու բնական ու սրբազան կամքը: Վաչագան Երրորդի հայերէն կանոնները՝ համերկրային կանոններ էին, որոնք միամտամանակ վկայում են հոգեւորականութեան արտկառնի քանակն այն օրերին»:

- «Ահա Աղուանից աշխարհի հայ գրականութեան մօտաւոր պատկերը եւ հայկական ոգու հզօրացումը՝ Վաչագան Երրորդի օրերին, - եզրափակում է Մընացականեանը, - Պարսկական բռնապետութիւնը, սակայն, քնած չէր: Ուստի շուտով այս ընթացքը պիտի խուլեղոտուէր, վերացուէր Աղուանից Արշակունի թագաւորութիւնը եւ փորձ արուէր այն՝ նոր կառավարողներով փոխարինելու»:
«Նօթիսրդ դարի սկզբին բռնկուած եկեղեցական վէճերը թողել են մի շարք ուշադրաւ թղթեր՝ կապուած հայ-վրացական եւ հայ աղուանական եկեղեցիների տարածաշուկաների վրայ», - այսա-

պէս է սկսում 7-8-րդ դարերին նուեր-
ած Երրորդ դարուգը:

Այստեղ եւս Ա. Մնացականեանը
դրուոր փաստերը ներկայացնելուց յե-
տոյ դրում է, թէ՛ ճուշդէր նայելով
բոլոր թղթերը, տեսնում ենք, որ դա-
ւանարանական նոյն վէճը Վրաստանում
բախում է երկու հարցի. ա) դաւանան-
քի, Բ) լեզուի, մինչդեռ Աղուանքում
լու մէկ հարցի՝ դաւանանքի: Եւ դա
ինքնին հասկանալի է համարում, քանի
որ առանց այն էլ՝ «Աղուանից աշխար-
հի եկեղեցու պաշտօնական լեզուն եղել
է հայերէնը»:

«Անդրադասնալով Մինգեշաուրի
պեղումների ժամանակ յայտնաբեր-
ւած քրիստոնէական տաճարի հա-
յերէն եւ նրան զուգահեռ աղուանիէն՝
առաջիմ շխրճանուած արձանագրու-
թեան փաստին, հեղինակը դրում է.
«Այս փաստը միաժամանակ ցոյց է տա-
լիս, թէ որքան սերտօրէն էին միմեանց
հետ կապուած նոր Աղուանքի հայ եւ
աղուան բնակիչները, որ միեւնոյն տա-
ճարի արձանագրութիւնները փորագրե-
ւում էին երկու հաստատանքի մայրնի
դերով»:

Ա. Մնացականեանն այնուհետեւ
կանգ է առնում Աղուանից պատմութեան
զրահան կոթողի՝ Կաղանկատուացու եր-
կի վրայ, բացատրելով, թէ ինչո՞ւ յատ-
կապէս Ջիւանշիր իշխանի օրօք իրադր-
ծրեց ամբողջական պատմութիւն շա-
րագրելու այդ յղացումը: «Է-ճ-րդ դա-
րերը, ըստ երեւոյթին, ներքին խոշոր
տեղաշարժերի, ընդհանուր լեզու դրս-
նելու, ներքին համախմբուածութեան
նորորակ երեւոյթների դարեր էին, -
զրում է հեղինակը, - որոնք 7-րդ դա-
րում արդէն պայմանաւորում էին առա-
ւել մեծ առաջադիմութեան, պետական
համախմբուածութեան երեւան գալը: Ե-
թէ պարսկական բռնակալութիւնը սկզբ-
ում ուժեղ էր, ապա այն, այդ դարում,
զգալիօրէն թուլացաւ եւ ի վերջոյ դուրս
մղուեց: Միհրանեան տոհմը, եթէ Աղ-
ւանք էր մտել որպէս պարսկական տոհմ՝
իր կրօնով ու լեզուով, քաղաքական յա-

տուկ ծրագրով, ապա աստիճանաբար
տեղի տուեց եւ էթնիկական, եւ կրօ-
նական, ինչպէս նաեւ պարսկական քա-
ղաքականութիւն վարելու արումով»:

Միւս ցեղութիւններն էլ սկզբին
համախմբուել հայկական ուժեղ եւ միա-
կուտ տարրի շուրջ, քանի որ անհրա-
ժեշտ էր «Աղուանք» հասկացողութեան
գոյատեւումը, այսպէս նա պիտի քայ-
քայուէր, ըլլատուէր, միանալ շրջապատի
պետութիւններին: Ջիւանշիր մեծագործ
եւ մեծանուն իշխանը աւելի առաջ տա-
րու Աղուանից Արշակունի վերջին թա-
գաւորների՝ հայկական ոգին ամրապն-
դելու աշխատանքը, որն ընդհատուել էր
իր նախորդների՝ միհրանեան տոհմի
միւս իշխանների օրօք: «Ժամանակի ըն-
թացքում կուտակուած եւ շուրջ մէկ դար
զուլումած պատասխարական արամագրու-
թիւնները, - ասում է Մնացականեանը -
աւելի քան յախուռն տեսք էին ստացել:
Ջիւանշիրը մերուել էր հայերին, եւ նրա
հզօրութիւնը՝ վերջիններիս դարձօնքն ու
հզօրութիւնն էր»:

Ապա գրքում խօսւում է Աղ-
ւանից աշխարհում Մաշտոցեան դադա-
փարների վերաբարձման, Բուսայէ կը-
րօնաւորի երկու տեսիլների յարուցած
համաժողովրդական ցնծութեան, Հիւ-
սիսային ցեղերի, մանաւանդ հոնների մէջ
հայ հոգեւորականների ծուլում քրիս-
տոնէական քարոզչութեան հանգրուան-
ների եւ այլնի մասին: Այդ առթիւ եղ-
բակացւում է.

«Այս փաստերը միաժամա-
նակ ցոյց են տալիս, թէ հայ եկեղե-
ցին ու գաղութիւնն այնքան էին ուժե-
ղացել Աղուանքում առհասարակ, որ
7-րդ դարում, երկրի հիւսիսային սահ-
մանները վտանգագրեծելու նպատակով,
լուսաւորչական ուշխատանքների նոր նա-
խաձեռնումներով էին հանդէս դալիս
Հոնոց աշխարհում: Եւ այդ միջավայ-
րի ծնունդն է հենց Կաղանկատուացու
դարակազմիկ երկը, ինչպէս եւ Ջիւան-
շիր իշխանի կարկառուն դէմքը: Սակայն
այս անգամ էլ միջամտեց բիւզանդական
հեռահաս թաթը, սպաննուեց Ջիւանշի-

բը, սկսուելիս Հայաստանը եւ երկրի ու ժողովրդի համար ստեղծուելին նորանոր դժուարութիւններ։ Մնացականեանը երկարօրէն կանչ է առնում եւ այդ ժամանակաշրջանի քաղաքական, կրօնական ու մշակութային իրադարձութիւնները վրայ, այնուհետեւ շեշտելով մանուաճող, որ «Ց-րդ դարն Աղուանից աշխարհում սկսում էր քաղաքական լարում իրադրութիւններում՝ առիթ հանդիսանալով յատկապէս կանոնական զբոսականութեան զարգացման»։ Բոլորն էլ Հայերն էին։

Գրքի այս մասում Ա. Մնացականեանը վերստին անդրադառնում է Բունիաթովին եւ հերքում նրա անհիթեթ զբոյժների մի մասը, վերլուծելով Դաւթակ Բերթոզի՝ Զիւանչիբի յիշատակին հիւսած հռչակաւոր Ողբը եւ այն բնութագրելով՝ ներկայացնում է նաեւ Յովակի Արցախեցու յիշատակարանը, Ստեփանոս Սիւնեցու գործունէութիւնը, Պարտաւէ հանրայայտ կոնոնները (768 թ.), դարձեալ կաղանկատուացու երկը եւ այլն։

Ց-10-րդ դարերին նուիրուած Զորրոզը դրուազը սկսում է այսպէս. «Վիննից-տասերորդ դարերում Արեւելից աշխարհի գրականութիւնը մտնում է զարգացման մի նոր փուլ։ Դա պայմաւորւած էր մի կողմից արաբական բռնապետութիւնից ազատագրուելու, իսկ միւս կողմից՝ երկրի թագաւորական իշխանութիւնը նրա իսկական տէրերի՝ Հայերի ձեռքն անցնելու պատմական մեծ իրադարձութեամբ։ Այս նոր շրջանի ինչպէս քաղաքական, այնպէս էլ գրական կեանքի պատմութիւնը սերտօրէն կապուած է Համամ Բազրատունու կամ Արեւելցու անունն հետ»։

Աստուր Մնացականեանն, անշուշտ, յիշատակում է եւ Համամ Արեւելցուց անմիջապէս առաջ գոյութիւն ունեցած գրական յուշարձանների բեկորները (Նոսայի Արու Մուսէի խիզախագատաշունչ նամակ-պատասխանը արաբ ոստիկան Բուզային, Մուշոզ Բազրատունու բանաստեղծութիւնը), բայց

ներկայացնում է զխաւորապէս Համամի ճեզակի դէմքը՝ որպէս Աղուանից Հայ մեծանուն թագաւորի, նաեւ Հոգեւորականի, մատենագրի, բանաստեղծի, քերականագէտի, մանկավարժի եւ այլնի, ընդգծելով, որ՝

«Ի դէմս այս բազմաշնորհ, Հայրենասէր, ու զգայուն անձնաւորութեան, Աղուանից աշխարհն ունեցել է մի մեծ առաջնորդ եւս, որի ռազմական հանճարով երկրի զգալի մասը փրկուել է արաբական բռնապետութիւնից, իսկ մատենագրական հանճարով՝ այդ երկրի բնակչութիւնն ստացել է հոգեւոր մշակոյթի մի աննախընթաց դանձարան»։ Այս ներկայացումն են Համամի եղբայր Փիպէի ու որդի Ատրներսէի ուսումնասիրութիւնների թնոյթը դասանաբանական գրականութեան ասպարէզում, Հայոց Կաթողիկոս Անանիա Մոկացու թղթերի տուեանները Աղուանքի կացութեան վերաբերեալ, Սահակ Սեւադա Հայազն տունի մշակութանդաստ գործերի յիշատակութիւնը, Մովսէս Դասխուրանցու երեան դալը եւ այլն։

Հինգերորդ դրուագն ընդգրկում է 11-13-րդ դարերը։ Մնացականեանը հաստատում է հետեւեալը. «Յատկապէս Համամ Արեւելցու ժամանակներից եւ մասնաւորապէս նրա ստեղծած գրականութեամբ Աղուանից աշխարհի Հայ մատենագրութիւնը, մնալով հանդերձ առաջին հերթին որպէս տուեալ երկրի գրաւոր գայրութիւն, միաժամանակ զուրս է գտնու այդ սահմաններից եւ ներկայացնում նաեւ որպէս համահայկական մատենագրութեան մի անբաժանելի մաս։ ... Հենց սկզբից էլ Աղուանից աշխարհը պիտի իր գրական պահանջները բաւարարէր ոչ միայն տեղի, այլեւ ԱՌՀԱՄԱՐԱԿ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՆՈՐ ՀԻՒ։

«Այլ կերպ ասած, Հայ գրականութիւնը՝ նաեւ Աղուանից աշխարհի գրականութիւնն էր։ ... Այն բնական կամուրջը, որ նետուած է եղել Հայաստանի եւ նրա Արեւելեան կողմերի Հայ բնակչութեան միջեւ մատենագրութեան

առումով, զնայով այնքան է լայնացել ու տարածուել, որ հետագայում այլևս ոչ ոքի մտքով չի անցել խօսք բացել նրանց աշխարհագրական սահմանների մասին: «Հայկական Մատենագրութիւն» դարձը-ւածքը եղել է մի այնպիսի համահասարակական գործընթաց, որի տակ նոյնի-մասա են հնչել ե՛ւ Աղուանքի, ե՛ւ Միւ-նիքի, ե՛ւ Այրարատի, ե՛ւ Վասպուրա-կանի, ե՛ւ Հայկական միւս երկրամասե-րի գրական-մշակութային բոլոր երկունք-ները:

«Հայոց Արեւելից կողմանց հա-յութիւնը, 387 թուականից յետոյ, ապ-րիւնով փորձէն Աղուանք կոչուող իր հայ-րենիքում, որդեգրուելով Աղուանից ե-կեղեցուն, միշտ էլ պահպանեց իր ազ-գային գիմնագծերը, զարդացրեց իր հայ-կական մշակոյթը, իրեն հաւասարապէս կոչելով ե՛ւ «աղուանցի», ե՛ւ «հայ», ե՛ւ «աղուան», ե՛ւ «հայազն աղուան»՝ ընդհուպ մինչեւ 20-րդ դարի սկիզբը:

«Տասներեկից-տասներեքերորդ դա-րերի համար այս երևույթն է՛լ ակնի-րնդարձակ տեսք ունի: Նոյնիսկ հարկ չի դրսւում փաստարկելու, թէ մեզ հե-տաքերորդ աշխարհագրական վայրերի այն ժամանակուայ գրականութիւնը հա-մահայկական ժառանգութիւն է: Այստեղ նկատի ունենք Փառիտոսը, պատմական Ուտիքի Գանձակ քաղաքը եւ նրա մեր-ձակայքը, որտեղից, 11-րդ դարից սկը-ւած, հրապարակ եկան այնպիսի խոշոր դէմքեր, ինչպիսիք են Յովհաննէս Սար-կաւազը, Դաւիթ Այալկատրոզին, Մխի-թար Գոչը, Յովհաննէս Վանականը, Վարդան Մեծը կամ Արեւելցին, Կիրա-կոս Գանձակեցին եւ ուրիշներ՝ համա-պատասխան դպրոցներով: Մատենա-գիրները այս բոլը եւ նրանց կրթական օջախները՝ կազմում են այն ժամանակ-ւայ Հայ դպրութեան փառքը: ... Դըպ-րութեան այդ հատուածը՝ պերճախօս հանրազուժարն է Հայոց Արեւելից կող-մանքի հոգեւոր ժառանգութեան: Աւե-լին, այն, ժամանակի կիլիկիաւայտու-թեան վերընթաց դպրութեան հաւասար-ազօր երկուորեակն էր՝ հայրենի քնաչ-

խարհում: Եւ, ամէնից առաջ, հենց այդ երկու խոշոր միջավայրերն էին, որ պատմական իրադարձութիւնների շնոր-հիւ, գլխաւորում էին հայ ժողովրդի մտաւոր առաջընթացը, նշուած դարե-րում»:

Ա. Մնացականեանն այնուհետեւ յատկապէս ներկայացնում է Մխիթար Գոչի դորձուճելութիւնը, միաժամանակ հերքելով ոմանց կողմից մասնաւոր նը-պատակով նրան աղուան համարելու ա-ռասպելը:

Փաստական հարուստ նիւթերի եւ խորաթափանց վերլուծութիւնների շնորհիւ՝ Հայոց Արեւելեան կողմերի 11-13-րդ դարերի քաղաքական ու մա-նական մշակութային պատկերը ուր-ւագծելուց եւ բնութագրելուց յետոյ, Մնացականեանը շեշտում է «13-14-րդ դարերից» առաջնայ սկսուող մեծ տե-ղաշարժերն ու փոփոխութիւնները ինչ-պէս ողջ Հայաստանի, այնպէս էլ Աղ-ւանքի կեանքում: Սակայն՝ «նոր պայ-մաններում եւս Աղուանքի հայ զանգը-ւածները հակառակ քնաջնող, տեղահա-նող եւ այլատերող բոլոր խորշակներին, կարողացան պահպանել իրենց գոյու-թիւնը, լեզուն, կրօնը եւ ազգային հնա-մենի աւանդները: Նրանք առանձնապէս լաւ զիմացան Լեւոնային Ղարաբաղի անանց բարձունքներում եւ կերճերում»:

Ապա Մնացականեանը վերստին ամ-փոփելով իր զբոսը շարադրուած հիմ-նական դրոյթները, թուարկում է Հայ-կական Աղուանքի հնամենի դպրութեան յուշարձանները՝ անգիր եւ գրաւոր հա-ւածներով: Գրաւոր դպրութիւնը ներ-կայացում է արձանագրութիւններով եւ մատենագրութեամբ (դասաւարտական, իրաւարանական գրականութիւն, պատ-մագրութիւն եւ ժամանակագրութիւն, գեղարուեստական գրականութիւն, քե-րականական մեկնութիւններ եւ այլն):

«Աղուանից աշխարհի գրականու-թեան հարցերի շուրջը՝ մենագրութեան վերջում կան նաեւ երկու յաւելումաժա-կան նիւթեր: «Ուտիք եւ ուտիներ» յա-ւելումով ամփոփում են ուտիների

ծագման եւ աշխարհադրական տարածման հարցերի վերաբերեալ զոյութիւն ունեցող գիտական վարկածները: Հերքըւում է այն կարծիքը, թէ իբր ուտիները աղուանական ցեղերից էին եւ ուստի Ռուտինն էլ բնակեցուած էր աղուանուտիներով:

Ուտիները իրականում նախաուրարտական եւ ուրարտական ժամանակների «ԵՏԻՈՒՆԻ» բազմացեղ եւ բաւական հզօր ժողովրդի ժառանգներն են: Իտիուները բնակուած էին Սեւանի աւազանից մինչեւ Ալաշկերտի շրջանները աւարածուող վայրերում: Երանք ղեռուս 7-րդ դարից մ. թ. ա. ներդրաւուեցին հայ ժողովրդի կազմաւորման ընթացքի մէջ եւ հաստատուեցին Ռուտիում: Այժմ Կովկասեան Լեռնաշղթայի հարաւային գիւղերի տակ ծուարած փոքրաթիւ՝ մօտաւորապէս 3,500 ուտիները, ըստ երեւոյթին, նախապէս մայր գանգուածից անջատուած եւ պատմութեան իւրայատուկ ճանապարհ անցած «էտիուներ» ցեղերի մնացորդ-ժառանգորդներն են: Նըրանք պահել են իրենց ազգային անունն ու սեփական լեզուն, բայց դարձնական կեանքում կրօնով, դպրոցով, ժապոտթով կապուած են հայերին: Ուտիներ էին յիշատակուած Սարգիս Կուկուսեանը, բանասէր Արզար Պայազասը, զօրավար Սիլիկեանը:

Այստեղ անելորդ չէ նշել, որ էտիուներէր մասին բաւական նիւթեր կան եւ Ն. Ադոնցի «ԻՍՏՈՒՄՏՆՍՄԵՆՆԻ» Փրանսերէն երկում: Այդ նիւթերից երեւում է, որ էտիուները հաւտ աչքով չէին նայում Տուրքայից (Վանից) հիւսիս ծաւալուող ուրարտացիներէր արարքներին եւ յամաօրէն պայքարում էին նրանց դէմ: Բայց վերջ ի վերջոյ հարկադրուեցին տեղի տալ եւ մտնել Ռուրարտական պետութեան կազմի մէջ: Նախնական բնակավայրերից թափանցեցին մերձակայ Կուրի աջափնեայ տարածութիւններ եւ Ռուտիքը դարձրին հայ ազգի կազմաւորման օրրաններից մէկը:

Միւս յաւելումը՝ «Հայաստանի հիւ-

սիո-սրեւելեան զաւառների յիշատակումը Ստրաբոնի մօտ», Հանդիսանում է Ստրաբոնի Համապատասխան վիպակութիւնների խոր-մասնագիտական մանրամասն վերծանում, պատշաճ եղբակացութիւններով եւ դիտողութիւններով:

Ե.

Այսպիսով, Ա. Մնացականեանի մեծագրութիւնը, որտեղ փայլուն կերպով ներկայացւում է պատմական Ռուտիք եւ Արցախ, ինչպէս եւ յարակից հայկական երկրամասերի 5-13-րդ դարերի ժամանակաշրջանն ընդգրկող դպրութիւնը, որտեղ ճշմարիտ հունի մէջ է դրւում այդ երկրամասերի պատմա-աշխարհագրական եւ ազգաբանական դիմագիծը գիտակաւորէն որոշելու գործը, եւ որտեղ սկզբբունեցային դիւրեքից քննադատութեան են ենթարկուած հրապարակի վրայ դոյութիւն ունեցող եւ Հայաստանի գիտական հասարակայնութեան կամայական մայ պարտազանցութեան հետեւաքով տասնամեակների ընթացքում կուտակուած, իսկ վերջին 10-15 տարում այլանդակ բնոյթ ստացած թիւը տեսակէտներն ու դրոյթները, - միաժամանակ գիտական եւ հանրային երեւոյթ է: Գիտական է, քանզի հեղինակն ամենայն խիզարկութեամբ պաշտպանում է ճշմարիտ գիտութեան դոյութեան իրաւունքն ու պատիւը եւ ընդամին նոր ճանապարհ հարթում նրա որոշ բնագաւառի անկաշկանդ ու բեղմնաւոր զարգացման համար: Հանրային է, որովհետեւ, շօշափած նիւթի բերումով, դուտ ակադեմիական-բանասիրական քնոյթ չի կրում, այլ սերտօրէն ստընչւում է հարազատ եւ կենդանի հաւաքականութեան կեանքին ու շահերին, նրա պատմական տեղն ու դերը ճշգրիտ հրամայական կարիքներին:

Նախ գիտութեան մասին: Հայոց պատմութեան ընթացքն ու դրուագները ճշմարտօրէն ներկայացնելու համար պարտազիւր չէ անպայման հայ լինել: Դրա համար առաջին պայմանն է օրգա-

նական բարեխղճութիւնը: Նոյն սկզբ-
բունքը վերաբերում է եւ միւս բոլոր
ժողովուրդների պատմութեանը: Ուստի
զիտութեան նուիրուած սեւէ անձ պար-
տաւոր է երբեք չչեղուել փաստերի եւ
ուղղամտութեան ճանապարհից, քանի
որ նրա միակ նպատակը ճշմարտութեանը
հասնելն է, իրականութեան ճշմար-
տիւտ պատկերը վերականգնելը: Եւ այդ
ասպարէզում որեւէ կանխակալ եւ շա-
հազարական շեշտուած խորականութիւն
պարզապէս սրբապղծութիւն է, ուստի
սրբապիղծը պէտք է հրապարակօրէն
նշտակուի ու նոյնիսկ դուրս քշուի դի-
տութեան տաճարից: Այս, անշուշտ,
հարցի ճշմարիտ եւ իսկապէս պատ-
կերացումն է: Իրականութիւնը, սա-
կայն, աւելի բարդ է եւ պայմանաւոր-
ւած բազմաոտեսակ զործօններով: Ինչ-
պէս որ կեանքում կան ազնիւ եւ անազ-
նիւ, լայնախոհ եւ նեղմիտ մարդիկ,
այնպէս էլ զիտութեան անդաստանում
զործող անձանց շարքերում կան իսկա-
կան գիտնականներ եւ շահախնդիր պա-
տեհապաշտներ՝ դերի զանազան նախա-
պաշարումներէ, կապերի, շահերի եւ
նկատարումների: Եթէ այսպէս չլինէր՝
զիտնականներէ միջեւ էլ աւօրեայ դժ-
տութիւն չէր ծագի, նրանցից անհաշտ
բանակներ չէին կազմուի, եղծումներ
ու հարկադրական վերձանումներ չէին
պատահի, այլ կ'իշխէր արհեստակցական
համերաշխութիւնը եւ բոլորի ուժերը
կը արամադրուէին միայն եւ միայն դի-
տութիւնը հարստացնելու գործին, փո-
խադարձաբար սակմանափակուելով սոսկ
ստեղծագործական ու սկզբունքային օգ-
տակար ու արգասաբեր վէճերով:

Արդ, մեր աչքերի առջեւ կեղծում
է Հայոց պատմութեան այս կամ այն
դրուագը: Եւ շատ լաւ գիտենք, որ կեղ-

ծողնէ՛րն էլ իրենց գիտնական եւ համա-
րում ու գիտութեան անունից են ճա-
տում, բայց իրականում հեռուոր կապ
անկամ շուենն գիտութեան հետ, նրա
տարրական սկզբունքների ու կանոնների
հետ: Գիտենք, որ այդ կեղծումները
յաճախ պարզ անճարակութեան, թիւ-
րատեսութեան կամ տհասութեան ար-
դիւնք չեն, այլ նաեւ միտումնաւոր,
գրպարտչական տրամադրութեան շար-
ժիչ ուժ: Գիտենք, որ այդ կեղծումները
խաղի համար օղ նետուող ու օղում ցըն-
շող պղպղակներ չեն, այլ շուպփելի
հետքեր թողնող նիւթական կուտակում-
ներ, որոնք մեքենայօրէն ընդօրինակ-
ւում են հեղինակից-հեղինակ, ցուցա-
դրութեան դրուում պատկառելի բեմերի
վրայ, մտնում հանրադիտարաններ, դա-
տադրքեր, պաշտօնական դիւաններ, յա-
րուցում շշուկներ, հրահրում գծաու-
թիւններ, սրում որոշակի տրամադրու-
թիւններ եւ այլն: Իսկ այդ բոլորից ան-
պայման տուժում է Հայաստանը, տու-
ժում է ամբողջ հայութիւնը կամ նրա
սեւէ հատուածը: Եւ ամէնից առաջ
տուժում է ճշմարտութիւնն ինքը, պատ-
մական գիտութիւնը, վարկաբեկում ու
դառնութեամբ լցնում գիտութեան նը-
ւիրուած իւրաքանչիւր ճշմարիտ գիտ-
նականի սիրտ, զայրացնում, ըմբոստա-
ցրնում: Քանզի սեւէ իսկական եւ բա-
րեխիղճ գիտնական չի կարող հանդուր-
ժել կանխակալ սուտը ու նրա դէմ չճա-
ռանալ: Այսօր փաստ է, որ Հայոց Արե-
ւելից կողմանքի նկատմամբ շրջանառու-
թեան մէջ գրուած աչքառու ստերի դէմ
ըմբոստացողը եղաւ Ա. Մնացականեանը
իր գրքով, այլ ոչ թէ մէկ ուրիշը՝ Հայ
կամ օտար: Եւ նրա խիղախութիւնը տա-
ռալին հերթին գիտնականին վայել գի-
տական խիղախութիւն եղաւ:

(Շար. 5)

Լ. Մ.

ԹԱՏՐՈՆ, ԵՒ ԲԵՄՈՎՈՆ ԿԵՈՆՔ



«ՍՍ.ԼԵՄԻ ՎՀՈՒԿՆԵՐԸ»

Պէյրութի Կիւլպէնկեան թատերա-
սրահին մէջ, Մայիս 12-էն 22, Համազ-
գայինի «Լեւոն Շանք» թատերախումբը,
դեկադարութեամբ ու խաղարկութեամբ
Վարուժան Խորշեանի, հայ բեմերու վը-
րայ առաջին անգամ ըլլալով ներկայա-
ցուց, ամերիկացի ծանօթ թատերագիր
Արթուր Միլլըրի «Ալպիմի վեռլիները»
թատերախաղը:

Հայ Հասարակութեան համար եթէ
նոր ու ամբողջովին անծանօթ էր թատե-
րագիրը, նոր ու անծանօթ մը չէր Վո-
րուժան Խորշեան: Համազգայինի «Գաւ-
պար Իփէկեան» խումբին մէջ երեսն ե-
կամ շնորհալի սիրող-գերասանը, վեր-
ջին տարիներուն, Լոնտօնի մէջ իր ձեռք
բերած թատերական ուսումովն ու փոր-
ձառութեամբ, զարժած է բեմական ար-
ւեստի աւելի խոր ըմբռնողութեամբ, ա-
ւելի լայն տեսլականով արուեստագէտ
մը:

Ընտրուած թատերախաղը արժէքա-
ւոր ըլլալով հանդերձ, կը պարունակէ
անխուսափելի տկարութիւնը բոլոր այն
թատերակներուն, ինչպէս Իրսէնի «Ժո-
ղովաւրդի Թշնամի», Փիբանտէլլոյի
«Ալպիս կամ ալպիս»ը, որոնք զրուած
են ընկերութեան հանդէպ զգացուած
անմահական զայրոյթին իբրեւ հետեանք:
Արուեստի վործերը այն ատեն աւելի
խոր ու ազդու են, եւ տակի տեսական,
երբ արդիւնք են ո՛չ թէ անհատական
զայրոյթի, այլ մարդկային ընդվզումի:



Վարուժան Խորշեան

Մաք Գարթիգմի ժամանակ Միլլըրի կը-
րած հալածանքը, կամ Մաք Գարթիգ-
մը ի՛նքը, հայ կեանքին եւ հայ մարդուն
ուղղակի ծանօթ երեւոյթներ չեն, այդ
իսկ պատճառով, հայ Հասարակութիւնը
անխուսափելիօրէն միայն պատմութեան
ազդեցութեան տակ պիտի իյնայ, որ
ինքնին բուական չափով նիւթ պարու-
նակելով հանդերձ, չի կրնար առաջոր-
գել այն խաւերուն, որոնց իջնալ պիտի
ուզէր հաւանաբար Միլլըր:

Ձգազար երիտասարդուհիներու հի-
ւանդագին երեսակայութեան ազդեցու-
թեան տակ, վճռկներու, ու կախարդ-
ներու գերբնական միջամտութեանց մա-

սին սուրբաբանի մը կը տեղաւորուի Սարեմ
 դիւղի բնակչութեան, մինչեւ անգամ
 պատուելիներուն եւ պետական պաշտո-
 նատարներուն եւ դատաւորներուն ուղե-
 դին մէջ: Որու հետեանցով, հաւատա-
 քննական ատեաններ կը հաստատուին,
 եւ տասնեակներով անմեղներ կախաղա-
 նի կը դատապարտուին: Անգոր կ'անցնին
 պաշտառատես ձոն Փրոքթըրի բոլոր
 փորձերը, ապացուցանելու կատարուած
 ծին հիւանդազին ըլլալը. երեւութական
 եւ անմեղ յարակցութիւններով կը դա-
 տապարտուին իր բոլոր բարեկամներուն
 կիները, իր կիներ մինչեւ անգամ, եւ
 վերջապէս ինք: Իր կեանքին ինսպելու
 համար, կը պահանջուի իրմէ, որ խոս-
 տովանի, թէ ինք սատանան տեսած է,
 ոստանային համար դորձած է: Այդ վը-
 կայութիւնը ձեռք բերելով, հետզհետէ
 աճող ժողովրդական զայրոյթէն վախցող
 դատարանը պիտի յաջողի հաստատել
 աշխարհին, թէ ինք անմեղներ չէ որ կա-
 խաղանի դատապարտած է, քանի որ,
 անա՛, մէկ հոգի դէ՞թ, հառտատեց, թէ
 իրականութիւն էին կատարուած ամբաս-
 տանութիւնները, եւ սատանան երեւցած
 ու դորձած էր Սարեմի մէջ, ժողովուր-
 դէն ընտրելով իր գործակիցները: Զոն
 Փրոքթըր, բոպէի մը, մարդկային աը-
 կարացումի մը պահուն, կ'ընդունի սուս
 խօսիլ, ու յայտարարելէ ետք, թէ ինք
 դորձակցած է սատանային, կը մերժէ
 իր գրաւոր ստորագրութիւնը թողուլ դա-
 տաւորներուն ձեռքը, դիտնալով որ ա-
 նոնք պիտի շահադորձեն իր անունը,
 ինքզինքնին փրկելու, եւ անմեղներու ա-
 րիւնը մոռցնել տալու համար: Հանդար-
 տած, կը դիմէ կախաղան, ուժ տալով
 իրմէ ակարներուն, որպէսզի մնան ան-
 խարդախ. իբրեւ մարդ, ու իբրեւ անուն՝
 անբասիր:

Թատերախաղը, իր ներկայացուած
 ձևին տակ բազմանդամ թատերախաղ
 մըն է, զօանքմէկ հոգի, որոնցմէ յա-
 ճուխ 7-8 հոգին միատեղ ներկայ են բե-
 մին վրայ, եւ ներկայ են ո՛չ որպէս ակ-
 տոր, այլ մասնակից դերակատար թաւա-
 լող դէպքերուն: Ամէնէն դժուար մասն-

րէն մէկը բեմադրութեան մը, այդ մեծ
 թիւով դերակատարներու խաղին, կեց-
 ւածքին, զլիսու ու նայուածքներու դար-
 ձըւածքին եւ ուղղութեանց համադրումն
 է, այնպիսի՛ ձեւով, որ չառաջանայ մի-
 րիակութեան ու տափակութեան զգա-
 նութիւնը, եւ կեանքի ալիքանութեան
 բնականութիւնը ճառագայթէ դէպի սը-
 բան: Այս խոչընդոտէն յաղթական դուրս
 եկաւ Վարուժան Ոտըշեան. հաճոյք էր
 դիտել, եւ դիտել զնոյ՞ մօտեցումով,
 խմբական դատաւորներէն իւրաքան-
 չիւրը, իր ալիքանութեան եւ բնակա-
 նութեան մէջ. եւ այս արդիւնքը՝ մեծ
 մասով նորեկ սերողներով ձեռք բեր-
 ւած...:

Նոյնը պէտք է ըսել բեմայարգարու-
 մին եւ տարազներու մեծ մասին համար,
 զուսպ ու տպաւորիչ, միաժամանակ ներ-
 քին իմաստին հետ կապուած թե՛ մը,
 ու լոյսերու համապատասխան բաշխում
 մը: Երաժշտութեան որոշ ընկերակցու-
 թիւնը չխանդարեց անշուշտ, կարելի է
 ըսել սակայն, որ մեծ նպատակ մը չբերու-
 առանց անոր ալ համապատասխան մըթ-
 նոլորտը կարելի եղած էր ձեռք բերել:

Պարզութիւնը, իր կարգին, սկզբա-
 նակներու հետ կապուած անխուսափելի
 տկարութեանց կողքին, կը բերէր առնը-
 ւագն առաւելութիւն մը, դերակատար-
 ներու մեծ մասին խաղարկութեան մէջ
 սեփական խաղարկութեան մը բնակա-
 նութեան կնիքը, փոխան սովորովի խա-
 ղարկութեան, որ կրնայ տեղ-տեղ աւելի
 տպաւորող արդիւնքի հասնիլ, սակայն
 ընդհանուր ուսումով կը վնասէ բնակա-
 նութեան:

Զոն Փրոքթըրի զլիսաւոր դերէն
 դուրս, միւս դերակատարներուն մէկ
 մասին համար կարելի է ըսել, թէ սե-
 փական խաղարկութեան մը հասնելու ճի-
 ղը, եւ հաւտաբը իր խաղցածին հանդէպ
 զգալի ու գնահատելի էր, ինչպէ՞ս օրի-
 նակ, Միսաք Ապահեան՝ Վերապատուե-
 լի Հէյլի դերով, Դանիէլ Մածունեան՝
 Պատգիլի եւ Վարդան Բարախեան
 (ձայլը Կարի եւ Յրանսիս Նըբա):

Օր. Սիբան Յ. Մածունեան, Ռէպէ-



Սպիտի վիտիճները, դատասպանները և գոհերը. կեդրոնը՝ Վարուժան Խաղչեան

բա նըրսի դերին կը բերէր ձայնի ու շեշտի շատ յաջող բաժին մը. նոյնը չէ կարիքի ըսել մարմնական խաղարկութեան համար, շատ երիտասարդը, երբ շատ տարեջուս կ'ընէր դեր պիտի խաղայ, անկարելիութեանց առջև կը զոնուի: Շատ վարժ, շատ փորձառու դերասանուհի մը, բնական թէքնիքին տիրապետած մէկը միայն թերեւս կարենայ իր երիտասարդութիւնը ծածկել եւ փոխարինել շատ յառաջացած տարիքի տէր կ'ընէր մը Փիղիբախանն ու շարժումները: Կուզը, կ'ըսէ չարածքը չի բաւեր: Այս առթիւ ընկճեմք, թէ տարիքոտներու դեր ըրտանմանողները, մօտ երեք հոգի, տեւաբար չափազանցուած կուզով ըլլալու մը զուտին մէջ էին, անախորժ ու անբնական է առիկա:

Էլիպայէթ Փրոքթըրի դերը բաւական ծանր էր էլս Աւետիսեանի նորեկ ուսերուն համար: Կամեցողութիւնը լզակսեցաւ, ոչ ալ ճիշդը: Պէտք է շարունակէ,

ինչպէս պէտք է շարունակեն խումբի բոլոր անդամները. բնական արունասող դժուարին, երկարատեւ աշխատանքներու ու տառապանքի ճամբով յաջողութեան դացող արուեստ մըն է:

Վարուժան Խաղչեանի բեմադրութիւնը, եւ դերասանի կարողութիւնը դնահատելի ետք, երկու խօսք իր խաղարկութեան համար: Հաճոյք էր տեսնել, թէ փոխուած էր ան, նախկին միօրինակ, քիչ մը ծեփծեփուն խաղարկութիւնը տեղի տուած էր աւելի զուսպ, աւելի ըմբռնուած խաղի մը, ինչ որ լաւագոյն ճամբան է, մանաւանդ՝ երբ դերերը իրենց մէջ կը պարունակեն Վերջտաւաճի խութիւն: Այդ խութիւն պէտք է խուսափիլ, մասնաւորապէս վերջին տեսարանին, պէտք էր խուսափիլ ըլլա՛յ լացի, ըլլա՛յ շնչոտերու չափազանցումէն:

Հայ բեմը սպասումներ ունի այս նոր ուժերէն, եւ Վ. Խաղչեանէն:

Բ. Փ.

ՈՐՆ Է ՔԾՄԱՐԻՏԸ



Ժորժ Սարգիսյան

Գիրքերու, ցուցանալիքներու, երաժշտական ձևերի մասին թուրքերէն լեզու, զգալի է նոյնպէս թատերական մեր արուեստին յառաջընթացը:

Առաջ, համարեա քսան տարի անընդմէջ, Համազգայինի թատերասէրներու «Փաստագր ինքիկիան»ը ասպարէզին միակնձան տէրն էր: Վաթսունական թուականներուն, սակայն, Պերն Ֆալկեանի ղեկավարութեամբ զործող «Վահրամ Փափազեան» խումբը ինչ եւս զգացուցիչ ներկայութիւնը, իսկ այս տարի Վարուժան Թորչեանի ղեկավարութեամբ «Լիւան Շանթ» անունով նկատառելի երբորդ ուժ մը իջաւ հրապարակ եւ ողջունուեցաւ թատերասէր հասարակութեան կողմէ:

Երեւոյթը գեղեցիկ է ու յուսադրելի: Վիճակագրութիւն կազմողները հա-

րիր հազարի կը բարձրացնեն մեր թիւը Պէյրութի մէջ, ու հարիւր հազարի հասնող բազմութեան, մանաւանդ այսօրւան կրթուած, զբաղան ու բնական հասկացողութիւն ունեցող ընտրողին՝ հազիւ կրնան ժամանակ գտնել ու բաւարարութիւն տալ սիրողներէ կազմուած եւ մեր պայմաններուն մէջ զործող երեք խումբեր:

Նոր խումբերուն նոր իրազործումները հայուի առնելով հանդերձ, արդար է շնչտել, որ Ժորժ Սարգիսեանի ղեկավարած խումբը կը պահէ իր օտարական հանդամանքը: Քայլ մը ետ չ'երթար ամէն տարի, իր ցուցարկերը կրկնելով թան, բծախնդրութեան ու յայտնաբերած նոր ներբերանգներով ամէն տարի նոր թափով ծափահարութիւններ կը խլէ սրահը եօթ-ութ անգամ բերնէ-բերան լեցնող տարբեր խաւի հանդիսականներէն:

Հինը իր նուաճած բարձունքին վրայ տեսնելու ապահովութիւնն ետք, կենսունակ նորերու երևումը ուրախելի է ու վստահելի զբաւական մը՝ ասպարէզին հարստացման տեսակէտով:

Դիտելի է, որ յիշեալ երեք խումբերն ալ օտար հեղինակներու փիլէսոփեր բեմադրեցին թատերական այս եղանակին: «Փաստագր ինքիկիան» ու «Վահրամ Փափազեան» խումբերը անցեալ տարի ու առջի տարիներուն ալ նախապատուութիւնը տուած էին օտար թատերագիրներուն: Ատիկա անբնական չէ որովհետեւ գերատանի մը նախասիրութիւնը պայմանական չէ: Ասպարէզին մէջ սրբան խնդն պիտի ըլլար մեր վատտակը, եթէ օտուածները օսանաւորութիւններ մեր անունին մէջ: Որովհետեւ, գաղտնիք չէ, կարելի է միայն ու նախապատուութեան կարգով յանձնարարել Շանթի «Կայսրը», «Հին Աստ-


լածներքը, մկրատման խիստ պայմանով գուցէ նաեւ շնորհաբար իշխանուինք ու «Շղթալուսածը», յետոյ միս ու ոսկոր ունեցող եւ ունէլ դէրաստանի արժանիքները թեւաւորելու զօրութեամբ օտարաւ Օշականի «Միջիւ Ռ՛ւք»ը, բարքերու ցուցադրութեան համար՝ շատ-շատ Վըր-թանէս Փափազեանի «Ժձձձ»ը, մեծ զին-ջուներով կրնանք կրկնապատկիլ տըր-ւած թիւը, բայց տասէն անգին շնեք կրնար անցնիլ: Մեր կարծիքով, օրէ-նակ, զուտ մտաւոր էր Բաֆֆիի յայտարար- արժէքաւոր «Ոսկի ափաղաղ»ին համար ժողովարարութեան թափած թատերա- կան շնեքը ու բոլորովին անկարելի՝ Շիրվանշահի անարիւն իրապաշտու- թեամբ կառուցուած «Քառասնի բեմա- դրութիւնը»:

Ուրախալի է, որ ներկայիս թատե- րական մեր խումբերը հայկական նիւթեր հրամցնելու սահմանափակ մտայնու- թեամբ չեն նայիր իրենց արուեստին ու բաւ համարելով նախկին զինուորները՝ կը փորձեն անձնուորել մեծարժէք թատե- րագիրներու կերտած մեծ անձնաւորու- թիւները:

Ընտանեկան զազանիքի մը թափան- ցելու հիանադին հետաքրքրութեան մը հիման վրայ կառուցուած թատերախաղ է «Ո՛րն է նշմարիտը»: Երկրաշարժի մը հետեւանքով՝ քաղաքապետարանի խոր- հըրդական մը՝ Փոնծա, իր անյայտ կի- նը եւ զօքանչ մայրը՝ տիկին Ճլորա կու- զան ու կը հաստատուին ուրիշ քաղաք մը, ուր Փոնծա եւ կինը կ'ապրին առան- ձին, իսկ զօքանչը՝ տարբեր թաղամասի մը տարբեր յարկարատնին մէջ: Փոնծա ի՛նք կը հոգայ զօքանչին ապրուստը, բայց խախտ արդիւած է անոր ազնկան հետ հանդիպումներ ունենալ: Մայր ու զաւրիկ» զիրար կը տեսնեն հեռուէ հե- ռու միայն, փողոցէն պատուհան երկա- րող անշրպետով մը, իրարու հետ հա- զօրդակցութեան մէջ կը մտնեն նամակ- ներով ու նամակները կը փոխանակուին վերէն իջած կողովի մը միջոցով: Մօր ու աղջկան միջեւ հաստատուած փոխ- յարաբերութեան այս անընակն ու

խիստ արտառոց ձեւը կը շաժէ տիկին Ճլորայի դրացիներուն հետաքրքրու- թեւ եւ կը դառնայ օրակարգի հրատապ հարց: Երեւոյթին թաքուն պատճառը հասկնալու համար կը կազմուին խորա- մանկ հանդիպումներ: Փոնծա կը հաս- տատէ, թէ իր առաջին կինը՝ տիկին Ճը- յորայի աղջիկը մեռած է, բայց տիկին Ճլորա իննթ ըլլալով՝ կ'անդիտանայ իր աղջկան մահը եւ կը շարունակէ հաւա- տալ, թէ երկրորդ կինը իր աղջիկն է- իսկ տիկին Ճլորա կը պնդէ, թէ փեսան իր հաւասարակշռութիւնը կորսնցուցած մէկ պահուն՝ կարծած է, թէ իր առա- ջին կինը մեռած է եւ ինք ամուսնացած է երկրորդ անգամ: Ինչ կը վերաբերի անշատ ապրելու իրողութեան՝ Փոնծան արուեստական այլ խոչընդոտը ստեղ- ծած է որպէսզի տիկին Ճլորան իրական- նութեան չբախի ու շարունակէ ապրիլ իր պատրանքով, իսկ տիկին Ճլորան փե- սային նոր տաքնապ մը չպատճառելու մտահոգութեամբ կը կատարէ աղջիկէն հեռու ապրելու անոր կամքը: Իւրաքան- չիւրը ունի իր համոզումը, կ'ապրի ի՛ր ճշմարտութիւնը ու զո՛հ է, զո՛հ չեն մի- տայն միւսները, զուրկն դիտող հետա- քրքրիչները, որոնց համար օր մը փե- սան է իննթը, օր մը զօքանչը, օր մը մէկուն կողմն է ճշմարտութիւնը, ուրիշ օր մը՝ միւսին, եւ այսպէս մինչեւ վերջ, ու վարսադոյրը կ'իջնէ, բայց անզո՞ղա- ծը կը մնայ անլոյծ, ու հարցումը առ- կախ՝ «Ո՛րն է նշմարիտը»:

Առանց վերապահութեան ըսենք, որ ժողովարարութեան ղեկավարած խումբը հաւաքաբար կրցաւ այս առեղծուածա- յին, հետաքրքրաշարժ, խորապէս կեն- ղանի թատերախաղին միջոցառող փո- խանցել հանդիսատեսին: Տասն անչի դերակատարներէն հազիւ երկու-երեքին ձօտ նուաղումներ կուահուցանն Նորըն- ծաններէն երկուքը՝ Նուարդ Վարդա- պետեան (Սարգիս) եւ Լիլի Աթթարեան (Զինի) յայտնապէս զգացուցին իրենց բեմական կարողութիւնները, մանաւանդ առաջինը, որ իր շարժումներուն բնա- կանութեամբ, մայնական շնորհներով ու



Վերջին տեսարան. կեղրոնը՝ Տիկին Փոնծա — «Սա տիկին Ֆլորային ազդիկն եմ, ես պարսն Փոնծայի երկրորդ կինը»

Համարձակութեամբ նկատառելի ուժի մը սպաւորութիւնը զործեց: Միտները՝ Վարդգէս Վարդապետեան (Սարիլի), Արշալոյս Պոյաճեան (Ամելի), Արփի Սաշատուրեան (Տիկ. Փոնծա) և Յարութիւն Գարբիէլեան (Քաղաքացի), բեմական կեանքի իրենց փորձառութիւններով լաւապէս նպաստեցին ընդհանուր զործին: Ժորժ Սարգիսեան (Փոնծա), հակառակ իր կարճ դերին, Ժորժ Սարգիսեանն էր նորէն, իր ներկայութեան բեմը լեցնող ծանօթ ուժը: Մայրական զգացումներէն եւ վաւկէն հեռու ապրելու ստիպումէն բխած հակասական ապրումները փոխանցելու պատասխանատու դեր մը վստահուած էր Ջեփիւն Եանթին՝ ի դէմս Տիկ. Ֆլորային: Ջեփիւն Եանթիցարդ այսքան ծանր դերի մը մէջ չէր երեւցած: Տիկին Ֆլորայի կերպարին անձնաւորումը եղաւ տարիներու իր փորձառութեան պատկեր:


Իրենց սեփական ճշմարտութիւնները ապրող վերջին այս երկու տիպարներուն եւ ուրիշներու ճշմարտութիւնը երեւան հանելու յիմար հետաքրքրութեամբ տըւայտողներուն միջեւ՝ Փիլանտէլլո ստեղծած է բոլորովին տարբեր անձնաւորու-

թիւն մը, մարդոց հոգիներուն թափանցելու անկարելիութիւնը յիշեցնող եւ նոյն ատեն ունայնաժող յաւակնութիւններու վրայ քրջացող տիպար մը՝ Լուսիկի (Գալուստ Ճանսըզեան), որ կը ներկայացնէր կարելի միակ ճշմարտութիւնը, Փիլանտէլլեան աշխարհը՝ բարդ, առեղծուածային, իմաստութեամբ յաղեցած, սիրալի: Լուսիկի-Ճանսըզեան ըսկիզբէն մինչեւ վերջ բեմի վրայ մնաց եւ իր անկեղծութեամբ, մարդոց դիմակները վաթ ստնելու յանդիմութեամբ, քրջիջներով եւ խոսուն լուրթեամբ զրեթէ անընդմէջ իր վրայ կեղրոնացած պահեց հանդիսատեսին ուշադրութիւնը: Ստացական բացազանչութիւններէն ու շեշտերու միապաղաղութիւնէն ձերբազատուելով՝ Գալուստ Ճանսըզեան կրնայ առաւել շարժմը պարտադրել իր ինքնութիւնը:

Իր ամբողջութեան մէջ՝ «Ո՞րն է ճշմարիտը» Համազգայինի «Գոսպար Իսփէկեան» խումբին լաւագոյն բեմադրութիւններէն մէկն էր, աւելի մեծ փիլէսոֆ ներկայացնելու յոյսը ներշնչող վստահութիւնն էր անոր փաստ մը:

Գ. Ս.

«ԳԷՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ»



Յատկապէս Մեծ Եղեռնի Յիսմամբակէն ետք, հայ գրականութեան ներկան ու ապագան մտածագութեամբ ու գուրգուրանքի մասնաւոր առարկայ դարձան Սիիւսի մէջ եւ գրագէտները աշխուժացնելու եւ անոնց վաստակը ծաւալելու գործնական քայլեր առնուեցան: Ընթերցողները, սերունդ առ սերունդ, պիտի տեսնեն ու բնաւ պիտի չմոռնան անունները Քերոբ Ասաբեկեանի, Յակոբ Աշինեանի, Գեորգ Երեւանեանի, Երանանդ Փարսումեանի, Ս. Տէրեանի ու իր սասնումէն ընկերներուն, որոնք իրենց ծախքերով յաջողաբար հրատարակութեան տուին Ս. Վրացեանի, Եղ. Փոյաճեանի, Զ. Որբունիի, Ս. Փանոսեանի եւ Կ. Փոյաճեանի վերջին հատորները: Ու մտածել տակաւին, որ մեր կազմած վերիցանկը այս նոր երեսօյթին ամբողջ պատկերը չի ներկայացներ:

Անհատ մեկնասներու յայտնաբերած այս ազնուական ծեսքէն գտտ, նորէն Յիսմամբակի օրերուն, հիւնը դրուեցաւ գրական մեռչուն մրցանակներու, որոնց արդիւնքին ընթերցողը սկսաւ արդէն հաղորդակից դառնալ, ինչպէս կը վկայեն այս եւ դիմացի էջին տրուած գիրքերու լուսանկարչական պատճենները:


Հաստատուած գրական մեռչուն մրցանակներուն մէջ՝ իրենց տարագութեամբ ամէնէն ուշագրանները կը հանդիսանան «Գ. Մելիտինցի» մրցանակը եւ «Հ. Մելիակիւնեան» մրցանակը: Ասոնցմէ անմիջապէս ետք, պէտք է յիշել նաեւ «Հայկաշէն Ուզունեան» մրցանակը, որ առաջին երկուքին պէս ամուր հիմերու վրայ դրուած ըլլալ չի թուիր թէն, բայց կա՛յ ու ամէն տարի զգալի նպաստով մը կը վարձատրել երկու-երեք գրչի մարդ:

« ՀԱՅԿ ՍԷՐԷՆԿԻԻԼԵԱՆ »

Անհատ Ֆեկենասները եւ մեկեմասու-
 րեան վերոյիշեալ մնայուն աղբիւրները
 միասին լաւագոյնս կը ցոյցնեն մեր վա-
 դեմի ժողովուրդի իմացապաշտ նկարա-
 գրին քանի մը գիծերը: Հարաստներու
 դասուն մէջ որքան ալ «եռգիով աղփա-
 ներուն» տեղաւոր ճշիշ ըլլայ, պիտի ըն-
 դունինք որ մեր ժողովուրդը իր հագե-
 ուր, կրթական ու իմացական կալուած-
 ներուն կապակցութեամբ՝ բազում պատ-
 ճառներ ունեցած է յաջողած մարդոց ե-
 լայնատապարտ ըլլալու: Հարկւորաւոր եկե-
 դիցիներ կառուցուած են, հարկւորաւոր
 զարդոցներ ու լոյսին համուած են հարիւ-
 րաւոր գիրքեր ընդ հովանեաւ իշխան-
 ներու, ամիրաներու կամ ունեւորներու:

Ներքին վատասերումներէ գերծ մը-
 նացած հայ մարդը, կը թափ, թէ չի կըր-
 նար անձնու իրարար, միեակը վայելել
 իր աշխատանքին ու յաջողութեանց պը-
 տուղը, վայելքի պահուն անպայման կը
 փնտռէ ուրիշը, իրեն ծնունդ տուած հա-
 տափանութիւնը յաճախ ու անոր հետ
 կը կիսէ իր շահը, երբեմն կ'ընծայարեւէ
 շահուն ամբողջութիւնը: Գ. Մելիտինե-
 ցին կամ որքանեալ Հայկ Սէրէնկիւիւս-
 նի պարագաները հայ իրականութեան
 հոյակուած մեծահարաստները չեն, նիւ-
 րական հարստութիւնը չէ որ ներշնչած է
 իրենց այս կատկներուն կազմութիւնը,
 այդ կտակները արդիւնք են անխաբար
 մնացած ներքին հարստութիւններու մը-
 դումին, գեղեցիկ գործի մը ծառայելու
 անդիմադրելի տենչի մը:

Հեղինակները երկնեցին, մրցանակ-
 ները պսակեցին, կը մնայ որ ընթերցողը
 բերէ իր մասնակցութիւնը, կարդայ եւ
 տարածէ կարդացածը, տարածէ գրող-
 ներուն գործերը ու գրողներուն գործերը
 լոյսին հանդէպ անձնաւորութիւններուն
 գոհարերող սգին:





« ՏԱՌԱՊԱՆՔ »

(ՀԵՂԻՆԱԿ՝ Մ. ԻՇԽԱՆ)

ՊԷՅՐՈՒԹ - 1968

Այնքան ասեմ որ այժեր՝ ինչ ցայտ-
ցքան զիրենք զիտոզ այժերը, այնքան
ասեմ որ շքբումք մը հառաչամեզով ինչ
պատասխանի շքբումքի մը, այնքան ասեմ
որ երկու հոգիներ կրճամ ընդհարու-
նիլ համբույրի մը մէջ... գայտարիւն
կ'ունենայ բանաստեղծութիւնը:

Կ. Ա. ՊԵՏԻՆ

Երկու վար առաջ տուր գրականութեան
մը ժառանգին մէջ արժանազորած վերի հը-
մարտութեան հո՛ր մէկ հաստատումը կը հան-
դիսանայ Մ. Իշխանի քերթուաններու վերջին
հասորը՝ « Տառապանք »:

Արդարեւ՝ արցունքոտ այրերէ թ'ր այրե-
րուն հանող սրամայրոյ շողերով, ուրիշներու
հառաչող շրթներուն արժազանք առաջ թ'ր սըր-
տին հառաչանքով, եւ վերջապէս՝ տառապող
ժարգիւթեան հոգիին եւ բանաստեղծի կարե-
յոյզ եւ զգայնոտ թ'ր հոգիին համբույրին ծնունդ
առան քերթուաններու շարք մըն է Մ. Իշխանի
« Տառապանք »:

Կարօտներու երկնազոյն պտտուհանին ար-
մըկած, կամ՝ կեանքն իր հրազ մը, իսկ երազն
իրեն կեանք ըրտն « Տուններու Երգծի, զհետեւ ու
Երազի քաղցրուոր քարակիր Մ. Իշխանը, յե-
ղակարծ դիմաւորումով մը եւ նախազերջին հա-
տորովը (« Ողջութի զեզ կեանք ») շարժան էջ բա-
զտեան բանաստեղծ, որ՝ բաժանի ի մեզին՝
կ'երգէր կեանքի սուրբութիւնը, լաւատեսու-

թեան պատասխան մը ձեւակերպելով Ազուր Լալա
Մահարիի յոռետեսութեան:

Քանի մը տարի հաջիւ անց՝ Մ. Իշխան կը
խոնարհի կարծես Ազուր Լալա Մահարիի իմաս-
տութեան առջեւ, ու « Տառապանքի տառաչին է-
ջին մըտք կ'արժանազորէ արար մեծ բանաստեղ-
ծին դաւանան հշտարտութիւնը »:

Մեծք ինչ տառապանք
Եւ տակիւ միակ բանն է
Ձոր վտտահ գիտեմք:

Ասկէ անդին՝ դժուար չ'ըլլար Մ. Իշխա-
նի համար պատկերազարդել կեանքը լինող
տառապանքը:

Հոս՝ մայր մըն է որդւոյն շիրմին վրայ
ողբակոծ օրը երգողը, հոն՝ աշխարհէն մոռցը-
ւած մամիկ մըն է խուչին մէջ առանձին տառա-
տողը, երբորդ անց մը՝ բանակ մը անկիւնը
ծեծի տակ զաւարուող մըն է հառաչողը... Եւ
այսպէս՝ շարունակ, ախոր պատկերներու շար-
քը:

Մ. Իշխան անձնակազմի պարունակին զուգուր
հշած, ինքզինք մոռցած կ'ապրի անսնձնական
ապրումներով եւ զգացումներով, այսինքն՝ Աւ-
րիշնոյնով, ստուապող մարդկութեամբ:

«Ինչպէ՞ս կրնաս փակիլ փնդկերք սրտիդ
չեծկլտամբնդ գէւ մարդկային արցունքնդ»:

Աշխարհի ցաւով այնքան հիւանդ է բա-
նաստեղծի հոգին, որ դժուար էր ծածէ իր ար-
շար պատառը հացի...:

Ձափազանցութիւն մը ըլլալէ հետո կը
թուի մեղի բանաստեղծական այս զերգաշնու-
թիւնը, երբ գիտենք, թէ ան կը գրի՞ր սրտէ մը՝
որ անսած է կաշի ու ոսկոր մնացած ու անա-
պառնելի ազատած հայ բեկորները, որոնց ուր-
ակահները յաճախանք են տակաւին իր այթե-
րուն, եւ անոնց քաղցն ու պապակը գեռ ետ կը
սանջնեն իր հոգին:

Տառապող մարդկութեան վրայ անտարկին
նիբը ընդլայնելով, Մ. Իշխանի երեսակայնու-
թիւնը մերթ էր հեռանայ իր անմիջական շրջա-
պատին եւ կ'երթայ մինչեւ Միլիտերիոյ միւս-
ծածկ տափաստանները եւ անոնց ստանձանիքն
մէջ լինող հակները:

Աւելի սրտազրաւ եւ յալող են այն գեր-
թուանները սակայն, որոնք բանաստեղծի զգո-
յարանքներուն անմիջական սահմաններէն կու
զան, ընէ մտոր լուկ մորթի զգայութիւն, այլ կը
սուզուին մինչեւ սիրտը եւ կանգ կ'առնեն խոր-
հուրդի մը զէ՛մ յանդիման (ԱՄ՛ւնը կայ՞, Ակիե-
ւոր Փանդուխտը, «Դուն միացար մեր հոգին»,
եւ այլն):

Մահուան ներկայութենէն թեւաբեկ՝ ընկ-
ճըւած հոգեմէծակ մը կը տրի՛ն հատորին մէջ:
Բանաստեղծը կը կոկնայ, ցաւ կը զլայ՝ աստա-
պող, կեանքի սպերգութեան զո՛ւ զացող հակ-
նէք տեսնելով, Կ'ախտահանուլէ ցաւը, բայց...
զուրմանի մտայն չի խօսի, այսինքն՝ ընդզու՛մ
չենք զանէք իր մօտ, այլ կրտարական, պար-
ստազական սրտայուզ կարեկցութիւն մը: Մահն

է գերագոյն զարմանք, եւ Աստուած՝ միակ
Փրկարարն ու Փրկութիւնը (ԱՅաւա խորէն,
«ԸՅէ՛ լըլլա»):

Մթնոլորտը բուրբովին կը փոխուի, երբ
Մ. Իշխան կը բարձրացնէ զուրբ աստուածա-
բարէն վեր եւ աչքերը կը միտնէ անուան կա-
պոյտին, տինդերբէր անծիբ աստեղծութեանց զո-
ղը: Թափ կ'առնեն թեւերը, կը լայննայ թռիչ-
քը, եւ Աստուածաւարդին սգեւորէլ Կրօն լըթու-
սին՝ կը թեւատէ զէպի Տինդերբէր իր դատակնքը:
Նոր հորիզոն մը կը հռտանէ քերթողութիւնը:

Իսկ հատորի վերջին մասը, «Ուխտազա-
նութիւն»ը, իր սպիտակ եւ յալող մասերով կը
վկայէ, թէ ստեղծի բանաստեղծը հաստատրիմ
կը մնայ միշտ իր շունչին ու արուեստին:

Մ. Իշխանի քերթողական արուեստի լըր-
ջագծին ներս յաւելում մը կը բերէ ԱՄուսա
քերթուանը իր գնացքով եւ զգացումով:

Յարը՝ կեանքի սեւ ու սպիտակ եղբերուն
միջեւ երթեւեկ մը եղած էր Մ. Իշխանի հոգին,
նախորդ երկերուն մէջ քայտէ էր ան՝ մտիքի եւ
լոյսի կանաններէն փոխել ի փոխ, միշտ հետա-
խուզած երջանկութեան գանձեր եւ զինեցած
թախտոտ արցունքներու հեշտանքով, ա՛մէն յա-
ստիարութենէ հոգ գոհութիւն զգալով սակայն,
որ Միջերկրականի խաղաղ ակունքին կը պարէր
ինք տաքուկ արեւին տակ («Գոհութիւն» - Ունի
Ալուն, էջ՝ 203):

«Տառապանքը մամազրաւայրն է սակի՛ր՝
կեանքի ցաւին եւ մահուան արտում ստուերին,
որոնց զիմաց՝ կեանքին յրաժեշտելու հարատով
կ'արիւնի բանաստեղծին սիրտը»:

Գ. Մելիքիանի զրահան մրցանակին ար-
ժանացած եւ յունտեսութեամբ թաթուան այս
հատորին ննող լուսաստեղծութիւնը ա՛յն է սակայն,
որ Մ. Իշխան կը պահէ ինքզինք վաւերական
բանաստեղծի դիրքերուն վրայ: Ու կը ներշնչէ
այն հաւատքը, թէ «Ունի՛ Ալուն»-էն հոգ, բախ-
տաւոր որ մը, երջանկութիւնը պիտի ունենանք
ոչլուսնելու իր «Բիւրեղեայ Ձմեռը»:

Յ. Գ.

« Պ Ա Ն Դ Ո Կ »
(Լ Ե Ղ Ի Ն Ա Կ ' Ա Ր Ա Մ Հ Ա Յ Կ Ա Ջ)
Պ Է Յ Ր Ո Ւ Թ - 1968

Մինչ ուրիշ գրողներ յիսունի սեփն գտնադրութիւն մը կը սկսին ժամենկ կամ քնն ընկում կը փաշտին հրապարակէն, Արամ Հոյկազ, ընդհակառակէն, այդ տարիքին սկսաւ աւելի աշխտանքնել ասեղծագործական իր թափը: Թիսուական թուականներուն, յիսունէն մէկ գտնաւ տարիքին (1949)՝ խմբագրեց «Յեղիմ ձայնը» սնուն իր առաջին հասարցը, հինգ տարի ետք՝ լոյս ընծայեց «Յեղիմ ձայնին երկրորդ հասարցը» (1954): Պատմութեանը աշխտանքնելու հասարցներուն յաջորդեց գրագէտի գրչով գրուած ու ճաշկով խմբագրուած «Մայիմ-Գարսնիսարսն ու իր հերասմարցը» (1957): Հնգամեակ մը անց՝ «Չորս աշխտանք» (1962) խորագրուած պատմութեանը հար հասարց մը, իսկ 1967-ին կարգ մը գրութեանը վերամշակումով, վերջին տարիներուն մարտին ոտան պատմութեանը մը ու յունիսով կարգեց իր «Պատմութեան»:

Ասանկերով ու թուականներով կարգուած այս պատկերը պերճաւոր է ինքնին: Մարտիտապարզ գիրք հրատարակելու վկայութիւն մը կը բերէ անիկա, իր էջերուն մէջ սիրտ դրած ու ալից սրտին հասնելու, բաշխուելու տեղով տարփող մարդու մը իրաւութիւնը կը թելազրէ պատկերը, որուն մէջ խորանալու աշխատանքը գտնահանք ընթերցողին ու ըսե՛ք անմիջապէս, որ՝

Իր գործերը հասարցներու մէջ ամփոփելու ձեռնարկին շատ առաջ, կրեանք ըսել գրական-տարեան սեփն օտք դրած օրէն՝ Արամ Հոյկազ համարուեցաւ Միջերկրի գրականութեան սակաւ ընտրելանքին մին, փնտռուած աշխատակիցը բազմաթիւ թիւթերու եւ տանտանայ փորձ մը լուսնէր իր ետին, երբ մարտիկ դասագրքերու եւ գրականութեան պատմութեան մէջ նախագործեցին իր ոտանը:

Որովհետեւ, Արամ Հոյկազ իրեն հետ բերած էր նախքան, գիտելու, ընտրելու, արտատելու, ինչպիսի, ներկայացնելու ուրոյն կերպ մը, ո՛հ մը, հեռուներէն ժողովուրդու արեան մը

մտղական կարկույն տակաւին, միտքով վերք մը ու վերջին վրայ ծիանտուող սփոփարար փայտ, պարզ հոգի մը ու պարզութիւն, լեռներուն լեռնային հարստութիւնները էջերուն վրայ վերահանգանայեց այդ ու գալտերուն երկունքն ու բարութիւնը ընթերցողին մէջ Կաւարչու ընդունակութիւն:

Ընդգնուած այս ստորագրութեան յորհիւ՝ ցեղին բոլոր խաւերը ունկնդրեցին Արամ Հոյկազի երգած «Յեղիմ ձայնը», հետեւեցան իր «Չորս Աշխտանք» չորս տարեք սփոփանքներուն եւ տարեկայ շնորհ, թէ նոյն վաստակութեամբ մասնակաւ «Պատմութեան» ներս:

«Պատմութեան» մէջ եւս նոյն ձայնները լեռնայեցած է Արամ Հոյկազ եւ հոն անց գտած մարդերը «Չորս Աշխտանք» մարդերին ընտրուած անպարտեղ են նորէն, իր ծննդավայրի անմիջական շրջանակին ու Պոլսոյ մէջ նախքան հասնելու են նախ, Գարսնիտարի մէջ ու ազարի համարներուն վրայ իր կերպարանքը գտնտարեցին ցցած թուրքն է յետոյ, ապա՝ «Քիւրտիստանի լեռներու մէջ» բաւականին զիբաւութեանը ըրած զիբաւը, իսկ շորտողը նոր Արամի մէջ նոր գրականութիւններ երեւան բերող հասն է եւ բոլորովին տարբեր աշխարհաւայեցանքն ու երբ օտարը:

Ինչպէս միւս հասարցներուն, նաեւ «Պատմութեան» մէջ, Արամ Հոյկազի յարեանքերն արեւական յատկանքները «Յեղիմ ձայն»-ին հարգուած որակն է, որ մեր պատմութեան վերիվայրումներուն հետ օւնի յարարեղան կշիւէլ մը, խաղաղ, լինարար, արդար մաշգու մեղեդի է մերթ անիկա, անիրաւուած, ազորուած, ըրողը բազմութիւններու սղբ, իր ապրելու իրաւունքը կենսեղին պարտադրած, յաղթանակած, զրօս՛ի պարզած հրաւորներու որոտըղտաւ աղաղակ:

Ընդհանրապէս այն կարծիքը կը տիրէ, թէ Արամ Հոյկազ առաւելարար ինքզինք կը զնէ էջերուն մէջ եւ առանձին ու ինքնարաւ հերոս-

1

8

ներ հանդերձելու մասնաւոր ճիշդը է զորք չի ղենք: Այս սպաւորութիւնը ճիշդ ըլլալով հանդերձ՝ բացարձակ չէ: Այնպէստեղ, սէրը, զանարկութիւնը, պատուան ու կարօտը, անհաստական ա՛յլ սահմանափակ ու հաւաքական սպաւորութիւններ անձեռնարկ ահպաններ կան զՊանդակին մէջ, որոնք իրենց սեփական զիմազծող անպայման կը տեսնեն ընթացողի մտքին մէջ: Բարի ու արատուէ վախճանով ժամկէտ Աշաղանը, ձուկի մաքսանկէտ կուծիքը, իր անասունութիւններով հոշակուած համակերպ լսիթան ու ոչբերդութեամբ պատկուած անմասնախի լինան անձեռնարկութիւններ են, որոնք իրենց կեանքը կ'ապրին Արամ Հայկազի կէտուն մէջ, ստանց Ա. Հայկազի մասնակի միջամտութիւններուն:

Քերեա սուսանապէս պէտք է շնչակ տարբեր փորձառութիւններով ու միջուորակներով մէջ Արամ Հայկազի սեւեռան մօր կերպարը: Ուղղակի զՄայր մը խորագրուած է անոնցմէ մէկը, զբառնէ մըն է միւսը՝ այրի, թշուառ իր մեղքութիւնը ծածկող յետին կասկէ իսկ զուրկ կէն մը, որ իր զուսկիներուն հոգեպատուաւ զոտցած տաղբով զէժ բողբոջելու համար զմերկ, բոլորովին մերկ, մօրէ մերկէ կը շնտուի դուքս, ու իր մեղքութիւնը մոռցած՝ զուսկներուն համար օգնութիւն կը պաշտօնի միւտիքէն, միւսներուն զխուարած կիները մանաւանդ, չեն տալեր անդրադանակ անոր կոկիթին, ոչբերդութեան, տարբեր գոյն մը կու տան երեսօթիին, կը տեսնեն անոր արտաքին երեսը միայն ու ասորբեր շարժանքով մը կը վերագրեն անոր տաղանակին, ու ծնունդ կ'տանէ հակադրութիւնը ըստեղծող բաժրաստեղը՝ քր'զը, քուճը, անամո՛քը:

Առաջինն են զբառնէին բոլորովին տարբեր է եւ աւելի արտայայտ տարազիր ու որդեգիր միւս աղջկան պարագան, զիւրախ մը տուելը հարսնացած ու մայրացած Եւզիննի տոսմը: Վերադարձանի լիւնկերուն մէջ են եորին, Հայաստանի հոշական անկախութեան լուրը թափանցած է հոն եւս, զգրանքուն ինչպէս բեւ, կորեկը փախչելու եւ ազգին զիւրկ վերադառնալու երազ մը կը փայփայեն, մինչ Եւզիննի՝ զն չիմ կրճար աս տունէն, աս տեղէն

բաժնուիլ. նրիխոյ ունիմ... Հնտս տաճիս՝ Յուրքին, Գիւրսին փոհերը հետը յիսու պիտի ըսնմ, հոս զգնմ՝ չի՛մ կրնար... իմ արիւնք, իմ մարմնէն եմ ծնած... փարսս մէջ եմ մեծցած ու կա՛քս ծածած... կը սիրեմ զիրե՛ք, կը հաւսնա՛ս, կը սիրե՛մ զիրե՛ք...»:

Իրականութեան եւ արիւնին միջեւ ճղուած այս պայքարը, երկու ճշմարտութիւններու այս բախումը, ու քանի մը քաներով պատկերի ու արձանի վերածուած մօր կերպարը դարձեալ, որ միւսներուն պէս անզիմազծի է ու զՊանդակին մէջ հերքելուական ամենէն ինքնատիպ էակը:

Արամ Հայկազ հայր, մայր, եղբայր, ժողովուրդ, հայրենիք կորսնցուցած սերունդին կը պատկանի եւ զրոշներու այն զատու, որոնք կը խորշին թոննը զիւրեմն, ասանթիկ զեղումներն ու կը սիրեն զուսկը, ժուճկալը, ժուխտով անուն քաները, այսուհանդերձ իրենց ստորագրած էջերուն մէջ, մէկ ծայրէն միւսը, կարմիր թելի պէս կ'անցնի մեր ոչբերդութիւնը, երբեմն բառի մը թելադրանքով, պատկերով մը կամ սուսանին զբառնակներով: Վնայսի ճախրան վրայ, զնուկերը մտնտար են, զԱտուան կը յու... կրքեմն են զԵրուրի մը պտտմաքիւնը անուն կտորները ուլադրաւ ստեղծութիւն են ոչբ ուլադութեամբ, յոյսով, արցունքով, հոգեանքով ու լուստեսութեամբ թաթաւան լու էջեր:

Վերջ յիշատակուած կտորներուն շարքին սուսանին համարումով մը աւելցնենք համարադրանին խորքի մը վրայ կատուցուած եւ զՄուկուն ու կնոջ վստահիլ չ'ըլլարք անուն պատմուածքը, զոր, միւս կտորներէն մեծ մասին հետ կարելի է վերածել արեւէ օտար լեզուի եւ ունենալ լուս ընդունելութեան արդար անկեղտութիւններ:

Տարբեր աշխարհներէ անձուած տարբեր սպաւորութիւններ, զոյնք, տարբեր բարբեր, անհաստական թէ հաւաքական առանքեր, կենցաղային մանրաններու ուլադրաւ դիմեր, աշխարհի բաներուն առջեւ զբջջալու հակում, սէրեր, պատրանքներ, կարտա ու արցունք: Այս տարբերով ու պարզութեան, անկեղծութեան եւ հիւճըին համազուտար զօրութեամբ կազմած է Արամ Հայկազ իր զՊանդակը եւ իր արտին պէս լայն բացած զոնները ընթացողին առջեւ:

Պ. Ա.

ԿՂՎԱՐՆԵՐ

ՉՋԱՐԵԱՆԸ ՕՐԻՆԱԿԵԼԸ ԴԺՈՒԱՐ ԲԱՆ ՄԸ ՁԷ՛

«Սովետական Հայաստան» օրաթերթի Մայիս 17-ի թիւին մէջ, իբրև փրկադին ինքզինք ողբալիօրէն ժաջրաշրած Հայաստանի թիւ մէկ ողբալին, Կոստան Զարեան, «Սփիւռքահայութիւնը եւ մենք» խորագրով գլոբութեամբ մը՝ վարձկանի իբր արհեստական կատաղութիւնը այս անգամ խմբադրած է Ա. Հայկազի «33 հազար» անուն գրութեան ընթերցումով: «33 հազար»ը Սթեթլըրի հայութեան կողմէ Դաշնակցութեան մէկ միլիոնի հանդանակութեան նուիրաբերուած տղարի դումարն է: Ա. Հայկազ նկարադրած է սոյն հանդանակութեան միջոցը եւ տիրող անվերապահ խանդավառութենէն ներշնչուած՝ նոյն գրութեան մէջ Դաշնակցութեան մասին արձանագրած է կարգ մը անվերապահ խորհրդածութիւններ:

Անշնան քաղաքի մը մէջ ապրողներուն մասնակցութեան այդ չափը, ի հարկ է, խոր համակրանքի մը յայտարար նշանն է, Դաշնակցութեան մասին ժողովուրդին ունեցած վստահութեան նոր մէկ հաստատումը, որ, կողմէ չկայ, ահաբեկած է Կ. Զարեանի տէրերը, եւ տէրերը, աւանդութեան համաձայն՝ յողուած դրեւ տուած են համայնավար նոր տիրացուին, հին բառերու եւ յիսնամեայ յանկերգներու մտայ բեռան մը տակ կրկին ցուցադրելով արդէն իսկ ծածանուտ անոր դէմքը:

Կ. Զարեան կը գրէ.

«Ձեռքիս տակ եղած քերթերից ուշադրութիւնս գրուեց նաեւ Պէյրութում հրատարակուող մի Դաշնակցական քերթ, որի մէջ գետնազուած էր «33 հազար» մակագիրը կրող մի յոջուած, Արամ Հայկազի ստորագրութեամբ:

Իրուածքի այդ էին, մեր կեանքին չիամապատասխանող սեր, մրա մեռած պայքերին անատամ կմկմած յատուկ ասելու ձեւով, մրա աղբատ մտքի զեղնած փոշին եւ մրա աջ ու ձախ քափառող եւ կմխխք կենդանի ձեւացնող բռնաբռնիչ ձգտումը միանգամայն ճնշող եւ տերնակամ տպաւորութիւն քաղեցին ինձ վրայ»:

Արամ Հայկազի «33 հազար»ը վէպ մը չէ, պատմուածք մը չէ, գրական փառախորթեամբ երկնուած որեւէ կտոր չէ, առարեային անուած արագ տպաւորութիւն մըն է, աւելի շուտ կուսակցութեան մը գործունէութեան մէկ ամփոփ արձանագրութիւնը: Ըսել կ'ուզենք, նման գրութիւններուն գրական արժեչափերով չեն մօտենար մարդիկ, բայց այդպէս չէ վարուած Կ. Զարեան, բծախնդրօրէն խստացած է ան ու իր խտութիւնը առողջ չէ նորէն, ու իր շղագարութեան միւս պատճառը դիմացի էջին վերայ արտագրուած է: Հօն, «Սարատուկայում» դժուած իր պատկերին մըզձաւանջային անդրադարձը կը թուի, թէ դեռ չէ անցած ու մոռցուած: «Զարեանը օրինակելը դժուար բան մը չէ», ըսած է Արամ Հայկազի հերոսներէն մէկը, ուրիշ մը օրինակած է Զարեանը եւ շահած գրաւը: Կը նշանակէ, թէ Արամ Հայկազի մաքին մէջ անկրկնելի դրող մը չէ Զարեան, ու ճիշդ հո՛ր է անոր մեղքը, ու ճիշդ ատկէ՛ կը բխի մաջրաշրուածին անմաջուր դայրոյթը...

ՕՐԱԳԻՐ ՍԱՐԱՏՈՎԱՅՈՒՄ

(ՀԱՏՈՒԱԾ)

... Գովեցի՞ն մէկ-երկու հատը: Խա՛չը համեցին միւսները: Յի-
շեցին ոչ միայն ողբ ու մեռած բազմաթիւ հեղինակներ, այլև՝ պարբերա-
կաններ ու անոնց կարգին «Հայրենիք» ամսագիրը: Մէկը հետը բերած էր
անոր վերջին թիւը. իր ընթերցումը հասցուցած կ. Ջարեանին:

- Այնքան մեծ գրագէտ է, որ, - ըստ ան խանդավառութեամբ, -
իր ողբութեան իսկ զինքը կապկռներ ունի:

- Իրա՞ւ, - գարմացաւ ուրիշ մը:

Միւսը պնդեց իր ըսածին վրայ եւ անուններ ալ տուաւ:

- Ատոնք ա՛վ, Ջարեանին համոզները ա՛վ...

- Ջարեանը օրինակելը դժուար բան մը չէ, - ըստ երբորդ մը,
հանդարտ թռնով, - բայց Ջարեան ըլլալը՝ դժուար է՝ անկարելի:

- Անկարելի բան չկայ աշխարհի վրայ, ինձի քառերջուրս ժամ ժա-
մանակ տուէ՛ք, ու վազը, այս ժամուս, ես ձեզի կարդամ գրութիւն մը,
նիշդ այնպէս, ինչպէս որ պիտի գրէր Ջարեանը, եթէ ինքը հոս՝ այս հիւ-
րանոցին մէջ ըլլար, - ըստ մէկը:

Ջարմացած իրեն նայեցանք:

Դեռ աւելին, շարունակեց ան.

- Ինձի միայն երկու ժամ տուէ՛ք ու խոստացած գրութիւնս կու
տամ. միայն թէ բանիմաց մարդոցմէ կազմուած դատական մարմին մը
պէտք է կազմել, եթէ ես շահիմ, դուք մտերուկ մը կը գնէ՛ք ու կ'ուտենք
միասին, եթէ կորուցնեմ՝ մտերուկը ե՛ս կը գնեմ:

Համաձայնեցանք 24 ժամուան պայմանաժամին ու ան, մատիտն
ու տրցակ մը թուղթ առած, առանձնացաւ:

Յաջորդ օրը, նայն ժամուան, բոլորս ալ, քննադատի ու դատարարի
ծիրանի հագած, հոն էինք, պատշգամը: Մեզի միացած էին նոյնիսկ թաւ-
րուհի եւ փիհաջի՞ն նուիրեալները, որոնք, կարծեմ, Ջարեանի անունն իսկ
չէին լսած մինչեւ այդ օրը:

«Օրագիր Սարատկայում» է խորագիրը, կարգաց Ջարեանի մըր-
ցակիցը, եւ այժմբը պատշուց մեր վրայ: Յետոյ՝ վստահ ու հպարտ ձայ-
նով մը աւելցուց. «Գրեց՝ կոստանենց Տզան»:

Ժպտեցանք ու աք-սոներուն խորք քիչ մը եւս տեղաւորուեցանք:

«Սպասել են որ ամառ գայ, - սկսաւ ան, - որ արձակուրդս ունե-
նան: Ու եկել են Սարատկա:

«Սարատկան Ամերիկայի պատմութեան էջերից մէկն: Հոն գորա-
վարներ պատերազմներ են մղել ու Ազատութեան համար իրար քայտոզ սու-
րբի կայծով պատմութիւն գրել: Մի կարմիր եւ տրեւտ պատմութիւն:
Սարատկա նաեւ նշանակում է հանգային քուր, քաղնիք, ծծումքի բու-
բում, ձիարշաւ, Ազա խան, կայզեր, Գօզա, Հէքիօրն, բումանիզմ, հի-
ւանդներ:

«Համեային զրերը փոխարինել են սուրբերի պատկերներն ու ուխ-
տտեղիները»:

Ա. ՀԱՅԿԱԶ

(«Զորս Աշխարհ»)

«ԸՆԿԵՐ ՄՈՒՐԱՏԻՆ

ԵՒ ԻՐ ԶԻՈՒՆ ԿԱՅԵԱԿՆԱՎԱԶՁ

Այս տարի Սերաստացի Մուրատին մահուան յիսնամեակն էր եւ սերաստացիներու նախածնունդեան կազմուած յատուկ հանդիսութիւններով, մեր ժողովուրդը, հոս եւ այտոք, պանծացուց մեծ հայուն յիշատակը եւ վերապրեցաւ անոր մեծագործութիւններէն բխած խոտովի յուզումնալից:

Վերջին հարիւրամեակին, հայ ժողովուրդին վերջերէն ծնած կրտսերիծներուն մէջ, մտաւ վրայ համրուող բացառիկներէն էր Մուրատ, որ եզակի արութեան մը հետ՝ իր անձին մէջ կը մարմնացնէր հանրային մարդու քանի մը շնորհաւոր առաջնութիւններ: Հեղինակը՝ դպրոցներու ցանցի մը, բարեկամը՝ քաղաքական ու մտաւորական բազմաթիւ դէմքերու: Բարձրադիր լեռնաբու վրայ զէն ի ձեռին շրջապայտ ահարկու մարդն էր մերթ, ու մերթ բարձրագոյն ժողովներու մէջ քաղաքական խօսք արտասանող ձեռնհաս անձը, անձնաւորութիւնը:

Ո՞վ չի դիտեր, կամ ո՞վ կրնայ մոռնալ մանաւանդ դժոխային պայմաններու մէջ հրապարակ նետած «Մէկ հայ մէկ ոսկի» անոր կարգախօսը, այդ կարգախօսով անոր ծառայած փրկագործ աշխատանքը: Պահը ըմբռնել դիտէր Մուրատ, ստեղծուած նոր կացութեան մէջ իր ժողովուրդին համար առաւելագոյն շահը կոտորել ու ապահովել դիտէր: Ուժեղ էր բազկով ու ջարդով:

Այդ բացառիկ արժանիքներուն շնորհիւ՝ Մուրատ ի կենդանութեան կը վայելէր նաեւ բանաստեղծներուն ու գրողներուն խոր համարումը: Ամէնուն ծանօթ է Դ. Վարուժանի կողմէ Մուրատին եւ անոր կայծակնավազ ձիուն նուիրուած քերթուածը եւ մեր գրականութեան ընդհանուր համապատկերին ծանօթ անձներուն անծանօթ չէ Տիկին Զապէլ Եսայեանի կողմէ գրի առնուած Մուրատի ոգիականը:

Ինչ կը վերաբերի Հայաստանին, ծանօթ «Զինհալձէն ետք, հոն եւս մեղմացած կը թուի այս կորիճին հանդէպ որդեգրուած հին կեցուածքին կարծրութիւնը: Ընդհանուր երեսոյթէն մեկնած ընդհանուր խօսք մը չէ որ կ'արձանագրենք: Մասնաւոր փաստեր կան: Կան՝ երկու դիմքեր, Դ. Վարուժանէն հրատարակուած հատոր մը եւ Վարուժանի կապուած Առաքել Պատրիկի յուշերուն հատորը: Առաջինը լոյս տեսաւ 1955-ին եւ մարդիկ, տեղ ապով հանդերձ նյանաւոր «Բեկաս»ին, յապաւեցին հեթանոս քորմին գրչով քանդակուած «Ընկեր Մուրատին եւ իր ձիուն կայծակնավազ» սըր-տարուի ձօնը, իսկ անկէ ուղիղ տասը տարի ետք (1915), լոյս տեսաւ Առաքել Պատրիկի յուշերը, ուր՝ նոյն այդ կայծակնավազ ձիուն եւ կայծակնավազին կայծակնացայտ ձիաւորին վերաբերող հիասքանչ մասեր կան, «Իրք թէ մա իր տիրոջ այնքան վարձ ու հաւատարիմ է եղիլ, որ շատ անգամ կրուի ժամանակ փրկել է նրա կեանքը», այսպէ՛ս, եւ այլն, եւ Մուրատին ու Վարուժանին եղբայրութիւնը անփոխարինելի մանրամասնութեամբ մը հաստատող ուրիշ տողեր, որոնց կ'արժէ որ ընթերցողը ծանօթանայ, նախ՝ իրրեւ առանձին գեղեցկութիւն, եւ երկրորդ՝ նման երեսոյթներու հանդէպ հայրենիքի մէջ նոր սկսած թոյլտուութիւնը ողջունելու համար...

ԱՌԱՔԵԼ ՊԱՏՈՒԿ

ՎԱՐՈՒԹԱՆԸ ԵՒ ԱՍՏՂԻԿԸ

Սերտատեւայիբի ազայական զատը, - որոնցից բազկացած էր ժողովուհանների մեծ մասը, - եւ ժառուրական ներկայացուցիչներն այն օրը մեծ ետուզեոի մէջ էին, որովհետեւ Թեմական աստղորդը՝ Քորդոմ որբազան, կէմիաննից վերադառնալով, նախ օրը ժամանելու էր:

Ոմանք կառքով, ոմանք էլ միաւոր, ճանապարհ էին ընկել նրան դիմաւորելու շամար դէժ մինչեւ Շահնազմբէժ, որը թաղաքից մի կէս ժամ հեռաւորութեան վրայ փոքր-ինչ բարձրադիր մի տեղ էր, վրան ինչ-որ զօրեթաւար շէնքի տակաւով:

Հասարակ ժողովուրդը, սակայն, հաւաքուել էր թաղաքի այն ծայրամասում, որ կուլում էր Վրայսերի Դուռն եւ որի կողքով անցնում էր Շահնազմբէժ տանող խճուղին: Բազմութեան մի կողմում շարուել էին զվարացի սուսնողներէց մի մասը, որբազանի ժամանակի պահին բարի զարուստի երգը երգելու: Մեր աւարտական զասարանն էլ այնտեղ էր. սակայն մեր Վրայական խմբակի երբորդութիւնը աստիճանացի էր մի կողմ ու զիտում էր անցնող միաւորներին, երբ յանկարծ Տիբան բացազանչէց:

- Տղմ'ք, վարուժա՞նը...

- Վա՛հ... - բացազանչէց նաեւ Տիբրանը, աչբերը լայնարաց, - ինչ անխոհ-ժութիւն... վար չլլարուի...

- Դէ', ամէն բանտասեղծ անճարակ չէ զեղի պէս, - խայթից Տիբանը քիծազելով ու աւելացրէց, - պիտե՛ս առ ինչ մի է, Վնողիկն՞ է, Վնողիկը՞:

- Ի՞նչ Վնողիկ, ա՛յ սղայ, - հարցրի զարմացած:

- Պա՛հ, չգիտե՛ս, Մուքաթի նշանաւոր մին... ես տեսիւ եմ վաճէի անտառը տեղ մերիս խաղալու պահին:

Մտորեցիցի, որ ես էլ լսել էի ինչ-որ բան այդ միւս մասին. իբր թէ նա իբր տիրոջ տնայան վարժ ու հաւատարիմ է եղել, որ շատ անգամ կուտի ժամանակ փրկել է նրա կեանքը: Թէ՛ Մուքաթ նոյնիսկ նրա վազած ժամանակ ճարպիտքին սողակելիս է եղել կողքի վար, կամ մինչեւ իսկ փորի տակ թաքնուած, շարունակելով կրակել թշմառ վրայ, կամ երբ միւս զամակից վար իջան, զիբք էր գրուում, ուշիմ կենդանին զնում ստիպականում, պառկում էր տիբո՞ջ կողքին եւ այլն:

Ուրեմն վարուժանը այդ նշանաւոր միտն էր հեծել: Ձին մերթ նառ էր լինում. զմայցիներ անում, մերթ ընթանում էր այնպիսի քալուածքով, որ ճանապարհի եղբերին հաւաքուած բազմութիւնը կեցել, հեռաբացութեամբ դիտում էր, կիսնում:

Պէտք է տեսնել սակայն, որ Վարուժանը հայելու-հազ կարգու-անում էր տիրապետել ձիան, նա միշտ սահմապահ էր պահում նրան, ոտները ասպանակի վրայ, թէև ևստաստ, սակայն վախից կողերին պինդ սեղմուած լինելով, յայտնի էր, որ ջլախոցնում էր խնչն կենդանուն ու անց դրանով մասնուած էր իր անվարժութիւնը տարեաական այդ դարձում... Ուստի մին կարծէք ըմբոստանում էր մերթ իբ օտար եւ անվարժ անբով դէմ, մերթ նոյնիակ փորձում էր անակնկալ մի զմայլով վար նետել քամակից իր սաղկաքը: Իսկ մենք սրտատարփ ևտեսում էինք այդ երկուսի միջև անզի անկցող լուս, թայց տատամթիկ պայքարին:

Սրբ Վարուժանի ձիուտը ընկերները բուսկանին տառջացան, Ատաշիկ այլևա վերջ տալով երկվարական իր զմայլին ու նազանգներին, յանկարծ մեծազույթ սկսեց տատախուլ, սուրաց շամու պէս ու շուտով անցաւ մրցակիցներին: Մենք այլևա չէինք տեսնում նրանց, փաշու ամպերի մէջ անկեսացած լինելով:

Չեմ յիշում այժմ քանի շարժման էին անցել այդ օրից, երբ Պուսից ստացանք Վեղաից զբաղան շարժաթերթի ևերթական մի համարը: Գէտօրուայ հանգստի պահն էր: Գրական խմբակի երեք ընկերներս քաշուեցինք բակի մի անկիւնը՝ մի ետսի ստուերի տակ ու թայ արէնք այն:

Ի՞նչ մեծ անակնկալ...

Վարուժանի զինգա՛նք ուս...

Արտատմբը՝ իր կառուցութեամբով, իր անօրինակ թափով, երեսակայութեան եւ մասնման մի ինկական սաւանուած:

Սայաքարին կարգում էինք այն նորից ու նորից, իւրաքանչիւր անգամ էլ հիանալով մի նոր անտանկեմից, մանուսանդ, ըստ մեր ենթադրութեան, եանօթ լինելով այդ հոյակապ սանդաղարձութեան շարժաթից հանդիսացող ամենահասարակ մի դրուաչին:

Ձգնակնք, արդեւք սաղալափական նորանոր կառային վրո՛յ հիանալ, սւք երեվարի Եզերճաստորքը զնայքի կամ զփայլանթափի գրոյթնի երաժշտական ութմն էր կարծէք հարապատրին նսթադրել, թէ՛ նրա լնդուի աղամանդեայ կառային, նրա երեսակայութեան արծուային թնկերին, սրտեցով սուտանել էր նրա միտքը մինչև անկուի բարձանգները:

— Գուցէ ուրիշ բանաստեղծներ ալ հասեր են այդպիսի բարձունգներու, — ասաց Տերանը հեացած, — սակայն, կարծեմ դեռ ոչ մէկի միտքը չէր հարակեր, ինչպէս անորը, զբուսանալիկ նալլայայներն երազինք...

— Սակայն, սղմք, — ասացի վերջում, — այս մարդու մօտ զարմանլին այն է, որ կարծէք ինք չէ այդպիսի հոյակապ էջեր ստեղծողը: Արտաքնապէս պարզ, հասարակ, մասնիկ, իսկ իր մասին միշտ վերապահ է, նոյնիակ երբ ճանապարհին մերթ իբնն կ'ընկերանում ու խոսակցելու սղառ տութթ կ'ուճենում:

ԱՅՍԻՆԻ ՊԱՏՐԻՅ



Բ Ե Գ Ա Ս

Հնկ.Մուսաբեկ եւ իր ձիւն կայծակնավազ

Բե'գաս, երեղեն ձիւ,
 Երկնամուխ լեռն արեւուն մէջ կը շողայ
 Ջերբ շափուկայ.
 Իր կատարին աստղապսակ՝ սլիսի գիւ
 Տանիս:
 Ջետեղեցի քամակիդ աստիկ քամբը՝ ծեփուած
 Աղաւանդով,
 Եւ դրբի սանձը՝ հիւսուած
 Շանքով.
 Եւ նուսիդ վրայ գերբ մրբիկ
 Եւ նետուեցայ աստիկ:
 Դե'հ, քոզ մտրակըս՝ յաւեւ լոյսերու մէջ քարազում՝
 Կողերուդ շարքը սուլէ օփի հըման գալարուն.
 Եւ դուն
 Անդունդներուն վրբայէն եւ վըրայէն ձիւներուն
 Տար գիւ
 Արեւուն:

Վե'ր, վե'ր, Բե'գաս...
 Բայց, հեռուն, ի՞նչ սպիտակ սարածուքիւն լուսափառ
 շառագայթեց աչքերուդ մէջ ամեհի.
 Տուրս սլաֆներով դրժպընի
 Հուսնակիւ պէս կ'արիւնիւն անա բիրերս փարփառ. -
 Օ՛, Բե'գաս,
 Կատարներուն ձիւնն է այս.
 Ձըմեռներու մէջ բիւրաւոր՝ բիւր աստղեր
 Իրենց ծոցէն սառնաչիք

Հո՛ն եմ, հո՛ն եմ տեղացիք
 Զի՛նն այս վճիտ:
 Բե՛գաս,
 Այդ ծովուն մէջ թիւրեղէ
 Նետուէ՛
 Դըլքնի լանջում յարդէ ուզիս կրկնուես:
 Լոզա՛, լոզա՛...
 Անապատի աւազին մըրրիկներուն փոխարէն՝
 Փոքրիկ ներքեւ կը փըրփրին
 Մըրրիկներն այդ լուսեղէն
 Զի՛նն:
 Նա՛ւը եղիր կենդանի՛
 Որ զիս առած կը տանի
 Ատնդազաբոյ նուաճանգիստն հեռակայ
 Երկնի:
 Լոզա՛, Բե՛գաս, լոզա՛...
 Մէր Երազին մեղքէ՛ անողը երևայ:
 Բացած փոսերը պայտերուդ լուսազին,
 Հեռիդ վրայ, շուշանի պէս թռչ ծաղկին:
 Ի՛նչ փայթ քէ ձիւնն իր տակ ծածկած է յաւէտ
 Ննգուքիւններն անդունդին,
 Եւ մենք կըրնանք ըլլալ յանկարծ գանալէժ,
 Միշտ Աստղերո՛վ թաքախուած պիտի իջնենք խորն ալիքն
 Ձերք ջրվէժ:
 Բե՛գաս, Բե՛գաս, կազնիսցա՛ւր վիզդ վէտ. -
 Անուատիկ ձիւնաստ մ՛ստուածարմակ գագաթէն
 Մըրրիկիւմ ճամբուն վրայ փոփրուն փոշի մ՛հա՛օրէն
 Կու գայ մեզ:
 Ո՛վ, ի՛նչ պայքար, Բե՛գաս. -
 Անոր վրայ պերճաստարդ կը խոյտ.
 Առջի ոտքերդ լուսադրոշմ պայտերով
 Աշխուժով
 Արդէն անա փըխրուն ծոցին մէջ անոր
 կը մխըրնին տեսար...
 Ո՛վ Զիս-Աստուած,
 Այն երևոն արդէն պորտիդ ներքեւ է լայնշի
 եզած
 Փոշի՛:
 Լոզա՛, Բե՛գաս, լոզա՛...
 Զգեցեր ենք պատմուհանն կոյս տարրին փողփողուն,
 Բուքը կ՛հալի լանջիդ տակ, ռանգերուդ մէջ բաքախուն:
 Դէ՛հ, խոյանք մ՛ալ, ռստում մ՛ալ,
 Զի բարձունքները շոգալ
 կը սկսին,
 Հարկունները ծաւալ
 կը բացուին:
 Դէ՛հ, խոյանք մ՛ալ, ռստում մ՛ալ. -
 Նպատակի կատարին ազամանդները անհալ

Շուգացի՛ն -
 Եւ իմ ձի՛ն
 Փայլակելով Գազափարձ աչքերուն մէջ ոռնական՝
 Կոթողուեցաւ - պինչերը բա՛ց արեւուն -
 Լեքան
 Գըլխե՛ւն:

Բե՛գաս, տեա՛ վար կ'իջնեմ քամրիդ վրայէն վերստին,
 Բաշերուդ հետ կը յանձնեմ անտառներն իմ մագերուն
 Հովերու՛ն -
 Եւ կը թողում որ Մըրիկն իր պատմութեանը ծրփում
 Հագցնէ յազք մարմինիս,
 Եւ լազցնէ Արեգակն իր շողերով ոսկեգօծ
 Աստուածացած միսըս բոց
 Եւ հոգիս:

Տե՛ս, աշխարհիս զառամած բամակին վրայ կոթողուն՝
 Իր հերկերուն մէջ թափուր՝
 Սիրտս, որ հաննարըս կ'ազրի, կը սերմանեմ յիարու -
 Ի՛նչ որ Արեւն ինձ կու տայ՝ գայն կու տայ Միտես Մարդուն -
 Տե՛ս, աստղերու ժրպիտներ եւ հուր վարդեր անթառամ
 Կը տեղան
 Որդիներուն մէջ կա՛ի -
 Կը տարածեմ Երկրիս վրայ արշալոյսի ծիրանին -
 Մինչդեռ դիրքաւ կըմայի
 Տարածել շուքն հասակիս՝ Երկրագունդին վրայ փանափ
 Ու իստարե՛լ զայն համակ:

Բեգա՛ս, Բեգա՛ս, այժմ հրք ե՛ս կը պարզեմ
 Առագաստները Մըտֆիս լոյսին վերայ ծովացած
 Եւ ինձարիս լարերով՝ քու բաշերովդը հիւսուած՝
 Կ'երգեմ
 Արեգդէմ
 Ազատութիւնը Մարդուն, եւ գերութիւնն Աստուծով,
 Բեգա՛սդ իմ հաճոյ,
 Գուն իմ ինքնիկս կանգուն
 Բաշերդ ու պոչդ յանձնելով ցըրտասարուս քամիին՝
 Վիզըդ ծըռէ սիրտուն,
 Մըռէ՛, - եւ քու առջի ռոտովդը նըրբին
 Փռէ՛, ընդթափ կոյս ձիւնը կոյս բարձունքին -
 Փռէ՛, Բե՛գաս, փռէ՛, մինչեւ որ գտնես,
 Լուսածաղիկ էտըլվայսները անտես,
 Եւ ճարակիս - ճօթի Մըտֆիս հետ միասին -
 էտըլվայսներն Երազին:
 Հոս, ձիւներուն ու լոյսին
 Մէջ քաթախուած՝ խաղաղօրէն կը ծաղկիմ
 էտըլվայսներն Երազին:

Գ. ՎԱՐՈՒԹԱՆ

ՎՄԵՆԱԿԱՐԵՒՈՐԸ ԻՆՁ ՀԱՄԱՐ

Վերջերս, Վաղարշակ Նորենցի Հետ ունեցած Թորոս Թորանեանի մէկ զրոյցը երեցաւ մամուլին մէջ, որ մէկէ աւելի ուշադրու երեսներ ունի: Ի պատասխան իրեն եղած Հարցումներուն, Նորենց կ'ըսէ.

«Ծնած եմ Սասունի Եւնիկ գիւղում, քանակաբար ընտանիքում: Սասնայ Եւնիկ գիւղը ծոցոր է իր ֆետայիներով, ըմբատ Ակարազրի տէր մտրդկանցով:

Այսօրումս պէս յիշում եմ մեր յեռնակամների հերասակամ կռիւները, որոնք տեսցին երեք ամիս»:

Պարզ արամաբանութեամբ, Նորենցի այսօրումս պէս յիշած Հերոսական կռիւները պէտք է 1915-ի Մարտին սկսած ինքնապաշտպանութեան կռիւները եղած ըլլան, երբ բանաստեղծը 12 տարեկան պատանի մըն էր: Այդ պատանին է, որ կը խօսի Հիմա, ա'յն պատանին, որ մեծ սպանդին սարսափները ապրելէ առաջ ու ետք՝ Հաղորդուեցաւ մեր ժողովուրդին կատարած մեծ արարքներուն, առանձին կամ Հաւաքական սիրապարծութեանց անօրինակ խորհուրդին:

Այն օրերու մթնոլորտէն եկած ու Հետագային Արարատեան աշխարհէ մէջ Հասակ նետած մեր երիտասարդներուն Համար Հանդամանքները թույլատու չեղան, որ իրենց փայտաշատ քամենակարեւորը՝ բառի ու պատկերի վերածեն, ընդհակառակն, յաճախ ժողովուրդէն եկածը արդիւնեցաւ եւ ժողովներու մէջ բանաձեւումը պարտադրուեցաւ իրենց:

Ի՞նչ բախտ, որ նոյն շրջանին մէջ չենք գտնուիր Հիմա, անցաւոր բաներէն շատերը անցած կը թուին Հիմա, Հետզհետէ իրենց տեղը գիջնով անանցին, մշտապէս, մշտանորոգ եղելութեանց կրկնեղեւոյթին: Անպայման այս բարեւոյցումն է, որ Համարձակութիւն կու տայ Նորենցին Հպարտանալու իր ծննդավայր Եւնիկ գիւղով, Եւնիկի Փետայիներով, ըմբատ նկարագրի տէր մարդկանցով եւ զմեր լեռնականների Հերոսական կռիւներուն անաղօտ յիշատակներով:

- Վերջերս, - կը Հարցնէ գրուցակիցը, - շատ չէ՞ երեւնար մամուլին մէջ, արդեօք ետք գա՞րծ մը կը պատրաստէ՞:

- Այո: Ունեմ կիսատ գործեր, որոնց վրայ աշխատում եմ. դրանց մէջ ամենակարեւորը ինձ համար իմ ծննդավայրի վերջին մաշտամամնքն եմ. աշխատում եմ վեպի սեւով սալ առ յոյս բոլորը:

Մինչեւ Հոս լաւ է ամէն ինչ, մինչեւ իսկ ամէն ինչ գիւրդին է մինչեւ Հոս: Բայց Հիմա՝ որ ընդհանուր սէրերը պիտի մասնաւորուին, ու զվերջին մաշտամամնքունն դերակատարները՝ Հերոսները, Փետայիները գէ՛ջ պիտի ստանան, Նորենց պիտի կարենա՞յ արդեօք յաղթահարել Հաւանական դժուարութիւնները, թէ՞ ուրիշներու պէս ի՞նք եւս փոխանակ իր Հոգին պեղելու՝ պիտի խրի ինչ-որ Հարիւրային որոնումներէ՞ մէջ եւ ընթացիկ սրբապղծութիւններով պիտի խաթարէ իր անարատ պատանութեան օրօք ստացած անարատ տպաւորութիւնները: Մեր ետին ունինք յի-

սուն տարուայ փորձառութիւն ժը եւ այս անձկութիւններն ու անձկալի
հարցումը ծնունդ են այդ փորձառութեան :

Որովհետեւ, պատմութիւնը պրպտելու հարկ չկայ Նորինցի ծննդա-
վայր Եէնիկ գիւղին հետ անմիջապէս յիշելու համար Նորինցի յիշողութեան
զարթնումէն առաջ նահատակուած առասպելական հսկան՝ Եէնիկի Մանու-
կը, յետոյ իր պատանութեան շրջանին յայտնուած ու հերոսական կռիւնե-
րուն որակ հաղորդած միւս դիւցազունները, Եէնիկի Զօլօն, Եէնիկի Ղա-
զարը, Եէնիկի Պօզուրը, յետոյ Մասնոյ յեռնաշխարհի ձկերջին մաքառում-
ներու ընդհանուր զեկավարը, ոգին, ուղեղը, կամքը՝ Ռուբէնը :

Եէնիկի մէջ ու Զօլոյ տան մէջ էր որ Ռուբէն կազմեց Մասնոյ ընդ-
հանուր պաշտպանութեան ծրարիքը, Եէնիկի եւ Սեմայի վերադարձան
առեւ թշնամիին վրայ առաջին խոյսցողը ինքն էր դարձեալ, թնդանօթ-
ներ գրաւող ու թրջակոն պահակազունները զինաթափելով իր սպաքը զի-
նող հանձարեղ ուղիմագէտը, տասնեակ հազարաւոր ժողովուրդին զինական
ու Պարենաւորման տմրոջ պատասխանատուութիւնը իր ուսերուն առած
անպարփակ կարողութիւնը, մի՛շտ Ռուբէնը, ու իր կողքին ու անպաման
Նորինցի պատանեկութիւնը խորապէս տպաւորած միւս քայները, կոռուած
ու նահատակուածներ նոխ՝ անման կորիւնը, Մըճօն, Եէնիկի Ղազարն ու
Պօզուր նորէն, յետոյ Մուշեղը, դարձեալ Զօլօն, Փեթարայ Մանուկը, Մօ-
րուրը կարապետը, Ահօն, որոնք շարունակեցին կռիւը, ապա՝ անաշխարհե-
ցին մնացորդացը դէպի Արարատեան աշխարհ, ապա՝ Հայաստան ստեղծե-
ցին, ապա՝ շնչելի դարձուցին Հայաստանը :

Արդ, այս դէմքերը, ընդդէմ մահու արիացեալ Մասնոյ առաջինա-
զարը այս ընտրիւնը, Մասունն ու բովանդակ հայութեան սրտերը լինող
ու հարիւր վէպ սնուցանելու չափ հարուստ այս տիպարները, ըսելու պէտք
չկայ, ծնան, զինուեցան, արիացան, հսկայացան Դաշնակցութեան մթնո-
լորտին մէջ, Դաշնակցութեան ոգիով, շունչով, միջոցներով : Ու նորէն
անձկալի նոյն հարցումը : Նորինց պիտի յաջողի՞ հաստատրիմ մնալ անոնց
էութեան, թէ՛ աջ եւ ահեակ խոտորելով պիտի այլասերէ ու վերաւորէ ի-
սուն տարիներ շարունակ փայփայած իր բարոյական գանձը :

Անցեալէն դասն փորձեր ունինք եւ դասնալի շարքին վերջինը հան-
դիսացող ՎԱՅՐԵՆՆԱՅ Այդեատաններուն ձգած տպաւորութիւնը դեռ դասնօ-
րէն թարմ է : Նորինց Մահարիին լղրճելու լղրճուկ պատճառներ լունի,
հեռուներէն բերած Մահարիի հիւանդագին բարդոյթներով չի տառապիր
եւ պապէն աւելի պապական ըլլալու միւսին պատճառները շատ հիմնաւոր
պատճառներ չեն այսօր : Այսօր նոյնիսկ պատմարանները չեն քաշուիւր
պատմական արարքներու դերակատարներուն կուսակցական պատկանե-
լիութիւնը աննախապաշար ոգիով մը յիշել : Մնաց որ, ատիկա պահանջող
չկայ Նորինցէն : Իհականը, ըսինք արդէն, ապրող, տրոփող դէմքերը հա-
րապատօրէն բեմ հանելու պարկէտութիւնն է, անոնց փոխարէն անորոշ
մոմիաներ հանդիսադրելու դասական խորամանկութեան սուրբ շտալու
ամբուսիւնը : Որքա՞ն պիտի լահէր ինքը՝ Նորինց եւ իրեն հետ մեր գրա-
կանութիւնը, եթէ՛ այս ոգիով մօտենար իր գիւղի ֆետայիներուն, ըմբոս
նկարագրի տէր մարդոց, վերջին մաքառումները թեւաւորած մաքառող-
ներուն, անոնց՝ որոնց մեր մայրերը զուրպան եղան երէկ եւ մեր որդիներ-
ըր ջերմեանդօրէն խունկ կը ծխեն այսօր, ազգային լինելութեան դաժան
ճամբուն վրայ :

ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ՆԿԱՐՁԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԱՆՆԵՐԸ

Նիւ Կարթագենայի մեր բարեկամներին մէկը, սաղանդաւոր նկարել Մինաս Մինասեան, զբոսաշրջիկներու խումբի մը հետ այս պարծանք Հայաստան այցելեց: Հոն, հետաւորութիւն շնորհակցաւ իրեն իր գործերէն նմանիկը ցուցադրելու, որոնք, ինչպէս կը վկայեն «Սովետական Հայաստան» (8 Յունիս) մէջ լոյս շնորհուած հետազոյց առգերը, առարկայ դարձած են վառ հետաքրքրութեան:

Միւս կողմէ գրասէր հասարակութիւնը, յատկապէս ամերիկեաց մեր զանգուածը յաւապէս քանօթ է ապագական մեր արուեստին մէջ յուճած Մինաս Մինասեանի փայլուն հաշակին, որ իր լրումին հասաւ Համաստեղին նախնական «Յուշմտանոց» պատկերազարդելու եւ ձեւաւորելու ստեն կիրարկած իր ինքնատիպ յղացումներով, բնաինչդրութեամբ, որոտուէջ ջանքով:

Հետաքրքրական են Հայաստանի թղթակիցին հետազոյց առգերը:—


Համեմի զինագծեր ունէր, բռնի աչքեր, միջահասակ էր, մազերին՝ ձիւն մազած: Լաւ էր ուշադիր ու բարեհամբոյր ժպտում:

Երեսի է Պոլսում: Դեռ մանուկ հասակից սիրել է նկարչութիւնը: Գեղարուեստական կրթութիւնն ստացել է Նիւ-Եորքում ու աստիճանաբար կատարելագործուել արուեստի մէջ:

Այսօր, առաջին անգամ, մեր հիւրն է նա, սփիւռքեայ կերպարուեստի նորագոյն վարպետը՝ Մինաս Մինասեանը: Հայաստանի ճարտարապետների սանդ բացուեց նրա գրաֆիկական աշխատանքների ցուցահանդէսը: Ընդամէնը 40 աշխատանք էր ներկայացուած, բայց նայելով դրանց գգում եւ, որ գործ ունեւ ստեղծագործական ուժեղ խառնուածքի տէր մի մարդու հետ, գազափար եւ կազմում նրա արուեստի ինքնատուրքեան մասին: Նա հայրենի արուեստի աննդներին միահիւսել է այն նաբը, որն առկայ է միջազգային գրաֆիկայում: Մինասեանը չի եղել Հայաստանում, բայց իր ստեղծագործութիւնը սնուցել է հայրենի արուեստի ակունքները:

— Ուրախալի է, որ ապրելով Արեւմուտքի արուեստի մթնոլորտում, — իր բացման խօսքում ասաց գրող վառագն Դաւթեանը, — ուր գտնուած մոդաներն ու իզմերն արագօրէն իրար են յադարդում, Մինաս Մինասեանը մշտարիտ արուեստագէտներին յատուկ հաստատակամութեամբ կարողացել է պահպանել սկզբունքայնութիւն: Յանձին նրա, սփիւռքեայ կերպարուեստն ունի մի մարդ, որն իր արուեստն ի սպաս է դրել հայրենասիրական մեծ գազափարների: Նկարչին ոգրուեց նաեւ ՍՍՀՄ գեղարուեստի ակադեմիայի քթակից-անդամ Գրիգոր Խանջեանը: Նկարչի մատնանում յուշագրեր բողեցին արուեստագիտութեան տաքֆ. փրագիտօր Ռ. Գարեանը, ժողովրդական նկարիչ Ա. Բեքարեանը, ճարտարապետ Վ. Յարութիւնեանը, գրող Մ. Մարգարեանը:

Մինաս Մինասեանի շնորհակալական ջերմ ու յուզիչ խօսքերից յետոյ այցելուները դիտեցին ցուցահանդէսը:



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ԱՏԱՑԱՆՔ

Անլիզ ՈՐ ԳԻՆ ԶՈՒՆԵՐ (պատմաաժգներ), Սմբատ Փանոսեան, Պէյրուք,
1968

ՆՈՑՆ ԹԱՂԻ ՄԱՐԿԻԿ (պատմաաժգներ), Ներսէս Վիրապեան, Պէյրուք,
1968

ԶԻՆՆԵՐՆ Ի ՎԵՐ (մենագրութիւն՝ Լ. Շանթի մասին), Գրիգոր Շահինեան,
Պէյրուք, 1967

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՐՈՑԵՍՆԵՐՈՒՆ ՀԵՏ (տպարութիւններ-խորհրդածու-
թիւններ), Պ. Ժիրայր, Պէյրուք, 1968

ՓՈՒՆՔ՝ ԳԵՐՄԱՆ ԵՒ ՌՈՒՍ ԲԱՆԱՍՏԵԼՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ, Քարգմ. Եփրեմ
Սարգսեան, Պէյրուք, 1968

ՊԱՏՈՒՀԱՍԸ (կեանքի մը պատմութիւնը), Պետրոս Օհանեան, Պէյրուք,
1968

ՏՄԵՐԱՆՆԵՐ

ԼՍԻՆՈՒՆ	22 Է. ՈՍԿԻ
ՄԵՆՏԵՆԱՆՍՈՒՆ	8 ՏՈՒՆ
ՍՈՍՏԵՆԱՆՍՈՒՆ	2 Է. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ--

G. SASSOUNI

Rue Sélim Boustani,
Beyrouth-Liban